Ընդունելով, որ LTTP մոդելով որոշվող հաշվարկային ջերմաստիճաններն ավելի լավ են հաշվի առնում հուսալիության գործոնները, մեր կողմից կապակցանյութի PG դասի ընտրության համար ընդունվել են (3) և (4) բանաձևերը: Նույն բանաձևերն էլ ընդունված են նաև «Սուպերֆեյվ» մեթոդի կիրառման աշխատանքների վերաբերյալ ՌԴ-ում ընդունված մեթոդական հանձնարարականներում [30]:

ՀՀ բնակավայրերի համար ծածկի ամառային և ձմեռային հաշվարկային ջերմաստիճանների որոշման համար մեր կողմից մշակվել է համակարգչային ծրագիր, որում ներառված են ինչպես հիմնական բնակավայրերի համար օդերևութաբանական կայանում վերջին 20 տարվա համար գրանցված տվյալները, այնպես էլ ներառված է հաշվարկային ջերմաստիճանների որոշման համար հաշվարկային ապարատ: Աղ. 2-ում բերված են ՀՀ բնակավայրերի համար ճանապարհածածկի ամառային և ձմեռային հաշվարկային ջերմաստիճանների արժեքները: Միաժամանակ նշված են նաև ծովի մակարդակից բնակավայրերի բացարձակ բարձրությունները և առավելագույն ու նվազագույն ջերմաստիճանների ստանդարտ շեղումները:

Աղյուսակ 2

ՀՀ բնակավայրերի համար ճանապարհաձածկի ամառային և ձմեռային հաշվարկային ջերմաստիճանները

N	Բնակավայրի անվանումը	Բացարձակ բարձրությունը, <i>մ</i>	<i>Lat</i>	Ծածկի ամառային հաշվարկային ջերմաստիճանը,			Ծածկի ձմեռային հաշվարկային ջերմաստիճանը		
				<i>S</i>	<i>T₀₂</i>	<i>T_{MAX}</i>	<i>S</i>	<i>T₀₂</i>	<i>T_{MIN}</i>
1.	Ալավերդի	699	41,10	1,57	32,20	63,15	3,43	-4,05	-14,09
2.	Ապարան	1892	40,59	2,33	26,97	60,91	2,44	-14,70	-19,11
3.	Աշտարակ	1104	40,30	1,28	35,64	65,39	4,14	-7,90	-18,49
4.	Արարատ	823	39,83	1,56	36,16	66,48	5,91	-8,68	-23,68
5.	Արթիկ	1779	40,62	1,73	30,92	62,61	4,49	-14,93	-24,55
6.	Արմավիր	870	40,09	1,58	34,92	65,51	4,87	-8,28	-20,61
7.	Արտաշատ	830	39,96	2,23	35,69	67,60	4,72	-8,98	-20,66
8.	Բերդ	933	40,88	1,787	31,59	63,16	1,73	-2,73	-8,96
9.	Գավառ	1953	40,35	2,32	24,69	59,17	2,71	-12,60	-18,19
10.	Գյումրի	1549	40,79	1,68	31,46	62,89	4,22	-14,63	-23,68
11.	Գորիս	1377	39,51	1,61	27,29	59,73	1,69	-9,63	-13,41
12.	Դիլիջան	1254	40,74	2,13	28,50	61,61	3,64	-7,70	-17,15
13.	Եղեգնաձոր	1242	39,76	2,95	28,32	63,68	3,07	-10,43	-17,34
14.	Երևան	907	40,18	1,74	36,75	67,28	3,98	-7,38	-17,63
15.	Թալին	1606	40,64	1,62	30,42	61,98	4,91	-13,38	-24,57
16.	Իջևան	677	40,88	2,32	31,67	64,51	2,61	-4,30	-12,13
17.	Հրազդան	1762	40,50	2,31	27,08	60,96	2,63	-12,43	-17,91
18.	Ղափան	774	39,21	1,88	33,71	65,41	3,41	-4,50	-13,74
19.	Ճամբարակ	1855	40,60	1,41	24,28	56,75	2,56	-10,48	-16,38
20.	Մարտունի	1935	40,14	1,02	25,33	56,85	2,24	-12,35	-16,80
21.	Մեղրի	657	38,90	2,08	33,95	66,12	3,14	-4,78	-13,16
22.	Ջերմուկ	2103	39,84	2,29	25,49	59,41	2,81	-12,63	-18,29
23.	Սևան	1921	40,55	2,03	23,78	57,72	2,43	-11,20	-16,57
24.	Սիսիան	1590	39,52	1,34	27,46	59,30	1,85	-9,35	-13,56
25.	Սպիտակ	1548	40,83	1,94	28,56	61,21	3,67	-8,78	-18,03
26.	Ստեփանավան	1405	41,01	2,77	31,22	65,23	3,18	-6,68	-15,30
27.	Վանաձոր	1344	40,80	2,69	27,81	62,42	4,07	-8,70	-19,00
28.	Վայք	1247	39,69	1,69	32,62	64,03	3,22	-9,05	-16,70
29.	Վարդենիս	1940	40,18	1,05	25,24	56,83	5,42	-11,28	-24,30
30.	Քաջարան	1938	39,15	2,39	27,03	61,39	1,65	-9,70	-13,25
31.	Տաշիր	1505	41,12	1,94	27,84	60,58	3,05	-8,05	-16,00
32.	Նոյեմբերյան	842	41,17	1,49	33,02	63,61	3,09	-4,13	-13,30

Եզրակացություն

ՀՀ բնակավայրերի համար ճանապարհաձածկի առավելագույն ու նվազագույն ջերմաստիճանների որոշման համար կիրառվել են Ճանապարհային պատվածքի երկարաժամկետ վարքի (Long Term Pavement Performance- LTPP) հետազոտությունների ծրագրի շրջանակներում մշակված բանաձևերը, որոնք հաշվի են առնում ինչպես նախագծի իրականացման տեղանքի դիրքը (աշխարհագրական լայնությունը), այնպես էլ հուսալիության գործոնները: Նշված բանաձևերով բիտումային կապակցանյութի դասի մի շարք երկրներում ընտրության փորձը տվել է լիովին բա-

վարար արդյունքներ՝ ապահովելով ասֆալտբետոնային ծածկերի երկարակեցություն, մասնավորապես, բարձրացնելով կիրառվող ճանապարհային բիտումների որակը, նվազեցնելով ծածկում առաջացող հոգնածային, ջերմային ճաքերը և անվահետքերը:

Գրականության ցանկ

- [1] **Հ.Հ. Գյուլզադյան, Վ.Հ. Տեր-Մինոնյան**, Ասֆալտբետոնային խառնուրդների կազմի նախագծման «Սուպերֆեյվ» մեթոդը. ՃՇՀԱՀ գիտական աշխատություններ 3(84) (2022) 3-11:
- [2] **R.J.Cominsky**, SHRP-A-407. The Superpave Mix Design Manual for New Construction and Overlays, 1994, 184 p.
- [3] **R.J. Cominsky, B.M. Killingsworth, R.M. Anderson, D.A. Anderson, W.W. Crockford**, NCHRP Report 409: Quality Control and Acceptance of Superpave-Designed Hot Mix Asphalt. Transportation Research Board, National Research Council, Washington, D.C., 1998, 215 pp.
- [4] Superpave. Final Report of the TRB Superpave Committee. TRB, 2005, pp. 1 – 56.
- [5] Superpave Mix Design, Asphalt Institute, Superpave, Series No. 2, 3rd Edition, Asphalt Institute Research Center, Lexington, KY, 2001, 102 p.
- [6] Superpave performance Graded Asphalt Binder Specification and Testing. Superpave Series N1 (SP-1). Asphalt Institute, 1997, 70 p.
- [7] **T.W. Kennedy, G.A. Huber, E.T. Harrigan, R.J. Cominsky, C.S. Hughes, H.V. Quintus, J.S. Moulthrop**, Superior Performing Asphalt Pavements (Superpave): The Product of the SHRP Asphalt Research Project. Strategic Highway Research Program, National Research Council, Washington, D.C., 1994. Report No. SHRP-A-410.
- [8] **M. Halladay**, The Strategic Highway Research Program: An Investment That Has Paid off, Public Roads 61 (1998) 11-17.
- [9] **D.W. Christensen, R.McQueen, H.U. Bahia**, Selection of high-temperature binder PG grades for airfield pavements, in: Proceedings of the FAA Worldwide Airport Technology Transfer Conference, Atlantic City, New Jersey, 2007.
- [10] **AASHTO M 320**. Standard Specification for Performance-Graded Asphalt Binder, 2021, 9 p.
- [11] National Highway Cooperative Research Program. A Manual for Design of Hot Mix Asphalt with Commentary. Transportation Research Board, Washington, D.C., 2011. 10.17226/14524. NCHRP Report 673.
- [12] **R. West, C. Rodezno, F. Leiva, F. Yin**, Development of a Framework for Balanced Mix Design. National Research Council, Washington, D.C., 2018. Final Report to the National Cooperative Highway Research Program (NCHRP), Project NCHRP 20-07/Task 406.
- [13] **ГОСТ 9128-2013**. Смеси асфальтобетонные, полимерасфальтобетонные, асфальтобетон, полимерасфальтобетон для автомобильных дорог и аэродромов. Технические условия.
- [14] **G.A. Huber**, Weather Database for the Superpave Mix Design System. Strategic Highway Research Program, National Research Council, Washington, D.C, 1994. Report No. SHRP-A-648 A.
- [15] **K.A.Tutu, S. Ntramah, Y.A. Tuffour**, Superpave performance graded asphalt binder selection for asphalt mixture design in Ghana. Scientific African 17 (2022) e01348.
- [16] **A.S. Abbas**, Temperature zoning of Iraq for asphalt mix design. J. Eng. Sustain. Dev. 21(5) (2017).
- [17] **I.M. Asi, Y. Khalayleh**, Adaptation of superpave asphalt concrete mix design procedure to jordan climatic and traffic conditions. Int. J. Pavement Res. Technol. 3(4) (2010) 154-161.
- [18] **N. Charoentham, K. Kanitpong**, Development of a performance grading system for asphalt binders used in Thailand. Asian Transp. Stud. 2(2) (2012) 121-138.
- [19] **M.W. Mirza, Z. Abbas, M.A. Rizvi**, Temperature zoning of Pakistan for asphalt mix design. Pak. J. Eng. Appl. Sci. 8 (2011) 49-60.

- [20] **M. Ronald, G. Chehab, M.N. Fakhreddine**, Determination of temperature zoning for the great lakes region of africa based on superpave system. In: Proceedings of the International Conference on Civil Infrastructure and Construction, Doha, Qatar, 2020, 10.29117/cic.2020.0062.
- [21] **H.A. Salem, D. Uzelac, B. Matic**, Temperature zoning of Libya desert for asphalt mix design. Appl. Mech. Mater. 638–640 (2014) 1414-1426.
- [22] **ՀՀՇՆ 32-01-2022**. Ավտոմոբիլային ճանապարհներ, 206 էջ:
- [23] **ՀՍ ՊՕՍ Ռ 58406.1-2021**. Ավտոմոբիլային ճանապարհներ ընդհանուր կիրառության. Խառնուրդներ խճամածիկային ասֆալտբետոնե և ասֆալտբետոն. Տեխնիկական պայմաններ:
- [24] **ՀՍ ՊՕՍ Ռ 58406.2-2021**. Ավտոմոբիլային ճանապարհներ ընդհանուր կիրառության. Խառնուրդներ տաք ասֆալտբետոնե և ասֆալտբետոն. Տեխնիկական պայմաններ:
- [25] **ՀՍ ՊՕՍ Ռ 58401.1-2021**. Ավտոմոբիլային ճանապարհներ ընդհանուր կիրառության. Խառնուրդներ ասֆալտբետոնե ճանապարհային և ասֆալտբետոն. Ծավալային-գործառնական նախագծման համակարգ: Տեխնիկական պահանջներ:
- [26] **ՀՍ ՊՕՍ Ռ 58401.2-2021**. Ավտոմոբիլային ճանապարհներ ընդհանուր կիրառության. Խառնուրդներ ասֆալտբետոնե ճանապարհային և խճամածիկային ասֆալտբետոն. Ծավալային-գործառնական նախագծման համակարգ. Տեխնիկական պահանջներ:
- [27] **M. Solaimanian, P. Bolzan**, Analysis of the Integrated Model of Climate Effects On Pavements: Sensitivity Analysis and Pavement Temperature Prediction. Strategic Highway Research Program, National Research Council, Washington, D.C., 1994. Report No. SHRP-A-637.
- [28] **A. Mohseni**, LTPP Seasonal Asphalt Concrete (AC) Pavement Temperature Models. Federal Highway Administration, McLean, VA, 1998. Report No. FHWA-RD-97-103.
- [29] **E.R. Brown, P.S. Kandhal, F.L. Roberts, Y.R. Kim, D.Y. Lee, T.W. Kennedy**, Hot Mix Asphalt Materials, Mixture Design, and Construction. (3rd ed.), NAPA Research and Education Foundation, Lanham, Maryland, 2009.
- [30] **ОДМ 218.4.036-2017**. Методические рекомендации по приготовлению асфальтобетонных смесей, их укладке, а также приемке выполненных работ, основанные на методологии «Superpave». Росавтодор, Москва, 2017, 68 с.

ТЕМПЕРАТУРНЫЕ ХАРАКТЕРИСТИКИ МЕТОДА ПРОЕКТИРОВАНИЯ СОСТАВОВ АСФАЛЬТОБЕТОННЫХ СМЕСЕЙ "СУПЕРПЕЙВ" ДЛЯ НАСЕЛЕННЫХ ПУНКТОВ РА

Акоп Арутюнович Гюлзаян*, Виген Грантович Тер-Симонян

Национальный университет архитектуры и строительства Армении, г. Ереван, РА

**hakob_gyulzadyan@bk.ru*

Представлены методы определения расчетных температур дорожного покрытия, необходимых для выбора марки битумного вяжущего PG X±Y в методе Superpave, получившем широкое распространение в мировом дорожном строительстве для проектирования составов асфальтобетонов. Взяв за основу расчетные модели, разработанные в США в рамках программы исследования долговечности дорожного покрытия (Long Term Pavement Performance- LTPP), с использованием компьютерного аппарата получены максимальные и минимальные расчетные температуры с 98%-ой достоверностью для населенных пунктов Республики Армения.

Ключевые слова: *асфальтобетон, вяжущее, эксплуатационный класс, расчетные температуры покрытия, усталостные трещины, температурные трещины, колейность.*

THERMAL CHARACTERISTICS OF THE "SUPERPAVE" ASPHALT CONCRETE MIX DESIGN METHOD FOR REGIONS OF RA

Hakob Gyulzadyan*, Vigen Ter-Simonyan

National University of Architecture and Construction of Armenia, Yerevan, RA

**hakob_gyulzadyan@bk.ru*

This paper presents the methods for determining the design temperatures of the road surface required for selecting the designation of the grade of bitumen binder PG X±Y in the Superpave method, which has become widespread in the world road construction for the design of asphalt concrete compositions. Taking as a basis the design models developed in the USA within the framework of the Long Term Pavement Performance (LTPP) research program, using a computer program, the maximum and minimum design temperatures with 98% reliability for populated areas of the Republic of Armenia were obtained.

Keywords: *asphalt concrete, binder, performance grade, design pavement temperatures, fatigue cracks, thermal cracks, rutting*

Գյուլզադյան Հակոբ Հարությունի, տ.գ.թ., դոցենտ (ՀՀ, ք. Երևան) – ՃՇՀԱՀ, «Ճանապարհներ և կամուրջներ» ամբիոն, (+374)94151019, *hakob_gyulzadyan@bk.ru*, **Տեր-Սիմոնյան Վիգեն Հրանտի, տ.գ.թ., դոցենտ** (ՀՀ, ք. Երևան) – ՃՇՀԱՀ, «Ճանապարհներ և կամուրջներ» ամբիոն, (+374)91214705, *vtersimonyan@gmail.com*

Гюлзадян Акон Арутюнович, к.т.н. доцент (РА, г. Ереван) – НУАКА, кафедра “Дороги и мосты”, (+374)94151019, *hakob_gyulzadyan@bk.ru*, **Тер-Симонян Виген Грантович, к.т.н.** (РА, г. Ереван) – НУАКА, кафедра “Дороги и мосты”, (+374)91214705, *vtersimonyan@gmail.com*

Gyulzadyan Hakob, PhD in engineering, docent (RA, Yerevan) – NUACA, Chair “Highways and Bridges”, (+374)94151019, *hakob_gyulzadyan@bk.ru*, **Ter-Simonyan Vigen, PhD in engineering, docent** (RA, Yerevan) – Chair “Highways and Bridges”, (+374)91214705, *vtersimonyan@gmail.com*

Ներկայացվել է՝ 18.06.2025թ.

Գրախոսվել է՝ 04.07.2025թ.

Ընդունվել է տպագրության՝ 29.08.2025թ.

ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՏԵՄՄԱՆ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՇԵՆՔԵՐԻ ԶԵՌՈՒՑՄԱՆ, ՀՈՎԱՑՄԱՆ ԵՎ ՕԴԱՓՈԽՄԱՆ ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Դավիթ Գևորգի Հակոբյան

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք. Երևան, ՀՀ
Dawhak99@gmail.com

Շենքերի ջերմամատակարարման համակարգերի էկոլոգիական արդյունավետությունը բարձրացնելու համար առաջարկվում է անցնել էլեկտրական ջեռուցման, մասնավորապես, ջերմային պոմպերի կիրառմանը, որոնք կարող են ինտեգրվել վերականգնվող էներգիայի աղբյուրների և ջերմային էներգիայի պահուստավորման համակարգերի հետ՝ բարձրացնելով արդյունավետությունը և ճկունությունը: Համակարգի օպտիմալացման մոդելները հիմնված են տարեկան ջերմապահանջի, ջերմաստիճանի և բնակեցման տվյալների վրա: Շենքերի ջեռուցման, հովացման և օդափոխման համակարգերի էներգաարդյունավետության բարձրացման համար մշակվել է փոփոխական փոխադրման վերականգնման մոդել, որը գնահատում և կանխատեսում է շենքի զբաղվածությունը: Այս տվյալները ներառվել են մոդելային կանխատեսական կառավարման շրջանակում, որը ձևակերպվում է որպես բազմաօբյեկտիվ օպտիմալացման խնդիր՝ նվազեցնելով էներգիայի սպառումը և պահպանելով ջերմային հարմարավետության օպտիմալ մակարդակը: Մոդելավորումը ցույց է տալիս, որ այս մոտեցումն ապահովում է նշված համակարգերի էներգաարդյունավետության զգալի բարձրացում:

Բանալի բառեր. էներգաարդյունավետություն, փոխադրման մոդել, ջերմային պոմպեր, էներգախնայողություն, մոդելային կառավարում, բնակեցվածություն, ջերմային հարմարավետություն, օպտիմալացում

Ներածություն

Շենքերը պատասխանատու են համաշխարհային էներգիայի սպառման մոտ 40 %-ի համար: Հայաստանի Հանրապետությունում շենքերը կազմում են ջերմոցային գազերի արտանետումների գրեթե 40 %-ը և էլեկտրաէներգիայի սպառման 60 %-ը: Էներգաարդյունավետ կառավարման մեթոդների ներդրումը կարող է էականորեն նվազեցնել ինչպես արտանետումները, այնպես էլ շենքերի սեփականատերերի էլեկտրաէներգիայի ծախսերը: Բնակելի և առևտրային շենքերում էլեկտրաէներգիայի հիմնական սպառողներն են ջեռուցման, հովացման և օդափոխման (ՋՀՕ) համակարգերը, միացված սարքերը և լուսավորության համակարգերը, որոնք կազմում են շենքերի ընդհանուր էներգիայի սպառման մոտ 50 %-ը: Հաշվի առնելով, որ ժամանակակից շենքերի մեծ մասը կառավարվում է շենքերի ավտոմատացման համակարգերի (ՇԱՀ) միջոցով, ՋՀՕ համակարգերի էներգիայի սպառման նվազեցման ամենաարդյունավետ ուղիներից մեկը գոյություն ունեցող կառավարման համակարգերի կատարելագործումն է [1]: Մոդելային կանխատեսական

կառավարումը (ՄԿԿ) լայնորեն կիրառվում է ՋՀՕ համակարգերի օպտիմալ կառավարման համար՝ էներգաարդյունավետությունը բարձրացնելու նպատակով: Եղանակային անորոշությունները հաշվի առնելու համար առաջարկվել է Հավանական մոդելային կանխատեսական կառավարման (ՀՄԿԿ) ալգորիթմ՝ շենքի կլիմայի կառավարման համար: Շենքի զբաղվածության կանխատեսումը ներառվել է իրական ժամանակում ՄԿԿ շրջանակում՝ ՋՀՕ համակարգի արդյունավետ կառավարման համար՝ օգտագործելով թաքնված Մարկովի մոդելի վրա հիմնված բնակեցվածություն մակարդակի հայտնաբերման մեթոդ [2]:


Աշխատանքներում բնակեցվածություն մակարդակի կանխատեսման համար կիրառվել են պատմական համամասնության մեթոդը և անհամասեռ Մարկովի շղթան՝ դրանք ներառելով ՋՀՕ համակարգի կառավարման ալգորիթմներում [3]: Մոդելավորումները ցույց են տվել, որ զբաղվածության վրա հիմնված ՄԿԿ մոտեցումները նպաստում են էներգախնայողությանը: Մասնավորապես, ստացված արդյունքները ցույց են տվել, որ բնակեցվածություն մակարդակի ավելի ճշգրիտ կանխատեսման ալգորիթմի կիրառմամբ կարելի է հասնել էներգաարդյունավետության ավելի բարձր մակարդակի: Այս հետազոտության շրջանակում առաջարկվում է բնակեցվածություն մակարդակի կանխատեսման նորարարական ալգորիթմ, որը հիմնված է փոփոխական փոխադրման վերականգնման մոդելի վրա [4]: Այն գերազանցում է պատմական համամասնության և անհամասեռ Մարկովի շղթայի մեթոդները՝ ապահովելով կանխատեսման ավելի ցածր սխալ: Ավելին, ներկայացվում է ՋՀՕ համակարգի կառավարման էներգախնայողության նորարարական ռազմավարություն, որը զբաղվածության կանխատեսման մոդելն ինտեգրում է ՄԿԿ շրջանակի մեջ:

Առաջարկվող մոտեցման առանձնահատկություններից է տուգանային գործակցի կարգավորումը, որը շենքի բնակիչներին հնարավորություն է տալիս ընտրել էներգաարդյունավետության և հարմարավետության միջև օպտիմալ հավասարակշռություն: Առաջարկվող կառավարման ռազմավարության արդյունավետությունը հաստատելու համար իրականացվել են մոդելավորումներ՝ հիմնված բնակեցվածություն մակարդակի կանխատեսման տվյալների վրա [5]:

Նյութեր և մեթոդներ

Շենքերի ջերմությունը պահող կոնստրուկցիաները հիմնականում պատերն են, հատակը և տանիքը: Ջերմափոխանցումը տեղի է ունենում երեք հիմնական եղանակներով՝ հաղորդականությամբ, ջերմափոխանցմամբ և ճառագայթումով: Շենքի ջերմային մոդելում պատի կոնստրուկցիայի ներսում ջերմափոխանցումն իրականացվում է ջերմահաղորդականության միջոցով, մինչդեռ պատերի և օդի միջև այն ուղղորդվում է ջերմափոխանցմամբ: Արևի ջերմային էներգիան հաշվի է առնվում ճառագայթման միջոցով [6]: Եթե ջերմահաղորդականությունը պատկերացնենք որպես հոսանք, ջերմաստիճանը՝ որպես լարում, իսկ պատող կոնստրուկցիաները՝ որպես կոնդենսատորներ, ապա շենքի ջերմային մոդելը հնարավոր է ներկայացնել դիմադրություն-կոնդենսատոր (RC) շղթայի ձևով: Ընդունվում է 2R1C մոդելը, որը համահունչ է պարզ, սակայն բավարար ճշգրտություն ապահովող մոտեցմանը: Դիտարկված է շենք, որի կազմում են չորս արտաքին պատեր, տանիք և հատակ, որոնք ենթադրաբար սպասարկվում են փոփոխական օդի ծավալով

(ՓՕՏ) համակարգով՝ օդի լավորակման համակարգով (ՕԼՀ) [7]: Մոդելավորման մեթոդը կարող է տարածվել ավելի բարդ շենքերի վրա՝ բազմաթիվ գոտիներով: Նկ. 1-ը ցույց է տալիս RC շղթան, որը միավորում է արևային ճառագայթումը, արտաքին օդը, պատը և սենյակի օդը:



Նկ. 1. Մեկ պատի RC միացում

Հիմնվելով այս RC շղթայի վրա, ձևակերպվում է հետևյալ հավասարումը՝ նկարագրելու համար i պատի ջերմային դինամիկան.

$$C_{w,i} \frac{dT_{w,i}}{dt} = \frac{T_{\eta} - T_{w,i}}{R_{cv,i} + 0.5R_{cd,i}} + \frac{T_{\text{in}} - T_{w,i}}{R_{cv,i} + 0.5R_{cd,i}} + \frac{R_{cv,i}}{R_{cv,i} + 0.5R_{cd,i}} R_{s,i}, \quad (1)$$

Արտաքին պատերի, տանիքի և հատակի ջերմադինամիկ հավասարումները համադրելով դինամիկ հավասարմանը, սենյակային ջերմաստիճանի համար կարելի է ստանալ հետևյալը

$$C \frac{dT_{\text{in}}}{dt} = \sum_{i=1}^6 \frac{T_{w,i} - T_{\text{in}}}{R_{cv,i} + 0.5R_{cd,i}} + Q_{\text{in}} - Q_{\text{sh}} m (T_{\text{in}} - T_{\text{Supply}}), \quad (2)$$

որտեղ Q_{in} -ը նշանակում է ներքին ջերմանջատում, իսկ C , m և T_{in} ներկայացնում են մատակարարվող օդի տեսակարար ջերմունակությունը, զանգվածային հոսքի արագությունը և ջերմաստիճանը՝ համապատասխանաբար: (1) և (2) հավասարումներից առկա է, որ միագոտի շենքի ջերմային մոդելը յոթերորդ կարգի ոչ գծային համակարգ է բազմաթիվ մուտքերով [8]: Սահմանելով կառավարման u փոփոխականը որպես մատակարարվող օդի զանգվածային հոսքի արագություն, համակարգի հավասարումները կարող են արտահայտվել հետևյալ կերպ.


$$\dot{x} = Ax + f(x, u) + D, \quad (3)$$

որտեղ $x = [T_{w1}, \dots, T_{w7}, T_{\text{սենյակ}}]^T$ -ն վիճակի վեկտորն է, D -ն՝ շեղման վեկտորը, որը պարունակում է արևային ճառագայթումը՝ R_w , արտաքին օդի ջերմաստիճանը՝ T_{η} և ներքին ջերմանջատումը՝ Q_{in} : D շեղման վեկտորը կարող է գնահատվել գործնականում, օրինակ, արևային ճառագայթումը կարող է կանխատեսվել արհեստական նեյրոնային ցանցի (ԱՆՑ) միջոցով: Արտաքին օդի ջերմաստիճանը կարող է կանխատեսվել ժամային կտրվածքով՝ օգտագործելով գնահատման ալգորիթ: Ներքին ջերմային շահույթը կարող է գնահատվել էլեկտրական սարքերի անվանական հզորությունից և շենքում բնակիչների քանակից [9]:

Առաջարկվող շենքի ջերմային մոդելը հաստատելու համար անցկացվել են մոդելավորումներ *MATLAB* -ում: Փորձարկվող շենքի մոդելն ունի $10 \times 10 \times 3$ մ չափեր, որը ենթադրաբար

գտնվում է Վայքում: Եղանակի տեղեկատվությունը վերցված է 2024 թ. «Շինարարական կլիմայաբանություն» նորմից: Ջերմային դիմադրություններն առաջարկվող մոդելում հաշվարկվում են [10]-ում սահմանված համապատասխան պարամետրերից, ինչպիսիք են քամու արագությունը, նյութերը, պատերի հաստությունը և այլն: Նկ. 2-ը ցույց է տալիս առաջարկվող մոդելի և [10]-ի մոդելավորված սենյակի ջերմաստիճանները: Պարզեցված RC շղթայի մոդելից ստացված մոդելավորված ջերմաստիճանի ժամանակային շարքերը մոտավորապես համընկնում են [10]-ի մոդելի արդյունքների հետ:

Այս դիտարկումը ցույց է տալիս փորձարկվող շենքի պարզեցված ջերմային մոդելի վավերականությունը:



Նկ. 2. Սենյակի ջերմաստիճանը մոդելավորվել է պարզեցված RC շղթայի մոդելից և EnergyPlus-ից

Առաջարկվում է նոր մոդել՝ կանխատեսելու որոշակի ժամանակում շենքի բնակեցված լինելու հավանականությունը [11]: Սահմանված է $y(k)$ -ն որպես շենքի բնակեցվածության վիճակը k ժամանակային միջակայքում: Եթե շենքը բնակեցված է k ժամանակային միջակայքում, ապա $y(k) = 1$, հակառակ դեպքում $y(k) = 0$: Նշանակենք $y(k) = 1$ հավանականությունը որպես $P(y(k) = 1)$: Այսպիսով, նպատակն է կանխատեսել $P(y(k) = 1)$: Քանի որ բնակեցվածության վիճակը փոփոխական է, առաջարկվում է փոխադրման վերականգնման մոդել փոփոխականներով՝ բնութագրելու համար տվյալների վիճակագրական հատկությունները և կանխատեսելու բնակեցված լինելու վիճակները [9]:


Փոխադրման վերականգնման մոդելն ընդհանրացված գծային ռեգրեսիայի մոդել է, որը լայնորեն օգտագործվում է տվյալների վերլուծության համար: Դրա հիմնական ձևը բերված է հետևյալ կերպ.

$$\text{logit}(p(xc)) = \ln\left(\frac{p(xc)}{1-p(xc)}\right) = \beta_0 + \beta^T x_c, \quad (4)$$


որտեղ $p(x_c) = P(Y = 1/x_c)$, logit-ը կապող ֆունկցիան է, որը փոխակերպում է $p(x_c)$ հավանականությունը գծային ռեգրեսիայի: Այսպիսով,

$$P(Y = 1/xc) = \frac{e^{\beta_0 + \beta^T x_c}}{1 + e^{\beta_0 + \beta^T x_c}}, \quad (5)$$

որտեղ β_0 -ն ազատ անդամն է, β - ն նշանակում է գործակիցների վեկտորը, x_c -ն ներկայացնում է անկախ փոփոխականի վեկտորը, իսկ Y -ը հավանական փոփոխականն է:



Նկ. 3. Բնակեցվածության հավանականության հաշվարկ պարզ համամասնության մեթոդի հիման վրա



Նկ. 4. Ջրադվածության հավանականության logit-ը համեմատած ժամանակի ցուցանիշի հետ

Այս կիրառության մեջ հավանական փոփոխականը $y(k)$ -ն է և կան նաև երկու փոփոխականներ: Շենքը զբաղեցնողների վարքը մեծապես կախված է օրվա ժամից, օրինակ, մարդիկ հակված են մնալ տանը երեկոյան և դուրս գալ տնից օրվա ընթացքում [12]: Այսպիսով, ընտրած է ժամանակային ինդեքսը՝ h , որը համապատասխանում է $y(k)$ -ին, որպես առաջին փոփոխական: Եթե օրվա մեջ կան H ժամանակային միջակայքեր, ապա ժամանակային ինդեքսը h ներկայացնում է օրվա h -րդ ժամանակային միջակայքը: h -ի և k -ի միջև կապը ձևակերպվում է հետևյալ կերպ.

$$h = \begin{cases} H, & \text{mod}(k, H) = 0, \\ \text{mod}(k, H), & \text{mod}(k, H) < H: \end{cases} \quad (6)$$

$y(k-1)$ -ն ընտրվում է որպես երկրորդ փոփոխական, քանի որ k ժամային միջակայքում գտնվող զբաղվածության վիճակը կապ ունի $(k-1)$ ժամային միջակայքի զբաղվածության վիճակի

հետ [13]: Ընդլայնված է փոխադրման վերականգնման մոդելը՝ ժամանակային ինդեքսի փոփոխականները որպես լրացուցիչ հավանական փոփոխականներ ներմուծելով, արտացոլելու համար *logit* ֆունկցիայի ոչ գծայնությունը $\text{logit}(p(x_c))$ [14]: Առաջարկվող զբաղվածության կանխատեսման մոդելը կարող է ձևակերպվել հետևյալ կերպ.

$$g(h, y(k-1)) \triangleq \beta_0 + \beta_1 h + \beta_2 y(k-1) + \sum_{i=1}^p \beta_{i+2} (h - h_i), \quad (7)$$

$$P(y(k) = 1/h, y(k-1)) = g(h, y(k-1)) = \frac{e^{g(h, y(k-1))}}{1 + e^{g(h, y(k-1))}}, \quad (8)$$

որտեղ β_i - ն նշանակում է i -րդ գործակիցը, h_i - ն ներկայացնում է i -րդ փոփոխականը, p -ն փոփոխականների քանակն է և $(h - h_i)_+ = \max(0, h - h_i)$ [15]:

Առաջարկվող մոդելի արդյունավետությունը բնակեցվածության կանխատեսման մեջ հաստատելու համար հավաքվել են զբաղվածության 73 օրվա տվյալներ Վայք քաղաքի ցածր եկամուտ ունեցող բնակելի շենքից: Յուրաքանչյուր ժամանակային միջակայքի տևողությունը 15 *րոպե* է: Օրվա մեջ կան 96 ժամանակային միջակայքեր և $h = 1, 2, \dots, 96$: Հաշվի առնելով, որ աշխատանքային օրերի զբաղվածության օրինաչափությունը սովորաբար տարբերվում է հանգստյան օրերի օրինաչափությունից, տվյալները բաժանվել են երկու խմբի՝ աշխատանքային (ընդհանուր 53 օր) և հանգստյան օրեր (ընդհանուր 20 օր) [16]: Հաստատման նպատակով դիտարկվել է միայն աշխատանքային օրերի բնակիչների զբաղվածության կանխատեսումը: Հանգստյան օրերի դեպքը կարող է վերլուծվել նման ձևով: Աշխատանքային օրերի տվյալներն այնուհետև բաժանվել են երկու հավաքածուների՝ ուսուցման տվյալների հավաքածու (ընդհանուր 30 օր) և թեստավորման տվյալների հավաքածու (ընդհանուր 23 օր): Նկ. 3-ը ցույց է տալիս բնակիչների զբաղվածության հավանականությունը, հաշվարկված պարզ համամասնության մեթոդով, իսկ նկ. 4-ը՝ համապատասխան *logit*-ի և ժամանակային ինդեքսի կապը՝ հիմնված ուսուցման տվյալների հավաքածուի վրա: Երեք փոփոխականներ են ներմուծվել ժամանակային ինդեքսում՝ հարմարեցնելու համար նկ. 3-ում ցուցադրված ոչ գծային *logit* ֆունկցիան [17]: Փոփոխականների օպտիմալ համակցությունը (44, 56 և 68) և մոդելի հավանական փոփոխականների գործակիցները գնահատվել են առավելագույն հավանականության մեթոդով:


Արդյունքներ և քննարկում

Երկարատև մոդելային հավանական կառավարման իրականացումը պահանջում է տարբեր ժամանակների զբաղվածության կանխատեսումներ: Այս ուսումնասիրության մեջ տարբեր ժամանակների բնակեցվածության մակարդակի կանխատեսումները կատարվում են՝ կրկնելով մեկ ժամանակաշրջանի կանխատեսման մոդելը, որը ներկայացված է (7) և (8) հավասարումներով: Պետք է նշել, որ $y(k-1)$ -ը թարմացվում է կրկնվող գործընթացի ընթացքում նախորդ ժամանակային միջակայքի զբաղվածության հավանականությամբ: Իրականացվում է զբաղվածության վիճակների ընթացքային կանխատեսում մեկ ժամանակային միջակայքից մինչև 96 ժամանակային միջակայք առաջ կանխատեսում թեստավորման տվյալների հավաքածուի վրա: Ընթացքային կանխատեսման մոտեցումն օգտագործում է նշագրված տվյալները՝ մոդելի պարամետրերը

վերագնահատելու համար, երբ նոր տվյալներ են հասանելի դառնում: Հավանականության մոդելի ճշգրտությունը գնահատվում է միջին բացարձակ սխալի(ՄԲՍ) չափանիշով.

$$MFU = \frac{\sum_{k=s}^{s+N_k-1} |P(y(k)=1) - y(k)|}{N_k}, \quad (9)$$


որտեղ s -ը առաջին կանխատեսվող ժամանակային միջակայքն է, իսկ N_k -ն թեստավորման տվյալների հավաքածուի տվյալների կետերի քանակն է: Որպես համեմատություն, նաև իրականացվում են նույն կանխատեսումները՝ օգտագործելով պարզ համամասնության [10] և անհամասեռ Մարկովյան շղթայի մեթոդները [17]: Նկ. 5-ը ներկայացնում է երեք մեթոդների կանխատեսման արդյունքները: Հորիզոնական առանցքի թվերը ներկայացնում են համապատասխան ժամանակային միջակայքերը, օրինակ՝ 10-ը ներկայացնում է տասը ժամանակային միջակայք առաջ կանխատեսումը: Ցույց է տրվում, որ առաջարկվող փոփոխականներով փոխադրման վերականգնման մոդելը սովորաբար գերազանցում է մյուս երկու մեթոդներին: Բացի այդ, առաջին երեք ժամանակային միջակայքերի կանխատեսումներում նոր մեթոդը և Մարկովյան շղթան աշխատում են շատ ավելի լավ, քան պարզ համամասնության մեթոդը:




Նկ. 5. Զբաղեցվածության կանխատեսման մեթոդների ՄԲՍ

Արդյունավետությունը գնահատվել է թվային մոդելավորման միջոցով՝ օգտագործելով փորձարկվող շենքը: Հարմարավետ պայմանները սահմանվել են 20...24 °C, իսկ ջերմաստիճանի թույլատրելի տիրույթը՝ 18...28 °C: Ցանկալի ջերմաստիճանը սահմանվել է 22 °C:


Համեմատական վերլուծության համար կատարվել են մոդելավորումներ՝ կիրառելով առաջարկվող օկուպացիոն ռազմավարությունը և դասական ՄԿԿ-ն: Երկու մոտեցումն էլ գործում է հետևյալ սկզբունքով՝ յուրաքանչյուր t ժամանակում լուծելով օպտիմիզացիոն խնդիրը $[t, t+w]$ միջակայքի համար, բայց գործարկելով միայն առաջին քայլը: Առաջին օրվա արդյունքները ներկայացված են նկ. 6-8-ում:



Նկ. 6. Մեկյակի ջերմաստիճանը տարբեր ժամանակներում



Նկ. 7. Կառավարման փոփոխությունը տարբեր ժամանակներում



Նկ. 8. Մպառումն առաջին օրվա տվյալներով

Կարգավորման արդյունավետությունը գնահատելու համար կիրառվել են երկու անհարմարավետության չափիչներ՝ DI-I և DI-II, ինչպես նաև ՋՀՕ-ի միջին հզորության պահանջը: Աղյուսակի արդյունքների համաձայն՝ $\lambda \approx 230$ դեպքում առաջարկվող ռազմավարությունը թույլ է տալիս

ավելի քան 8 % էլեկտրաէներգիայի խնայողություն և միաժամանակ նվազեցնում է DI ցուցանիշները, դրանով իսկ բարձրացնելով սպառողների հարմարավետությունը:

Աղյուսակ

DI-I, DI-II և միջին հզորության ցուցանիշներ՝ տարբեր λ արժեքների դեպքում

	ՄԿԿ	$\lambda = 150$	$\lambda = 230$	$\lambda = 330$	$\lambda = 450$
DI-I	4349,0	473,0	2745,0	1681,0	1092,0
DI-II	123,7	365,0	122,2	37,6	14,0
Միջին հզորություն (Վտ)	1807,0	1447,0	1660,0	1841,0	1984,0

Արդյունքները ցույց են տալիս, որ առաջարկվող մեթոդը $\lambda \approx 230$ արժեքի դեպքում ապահովում է ավելի քան 8 % էներգախնայողություն և միաժամանակ բարելավում է DI-I և DI-II ցուցանիշները՝ պահպանելով հարմարավետության համարժեք մակարդակ:

Եզրակացություն

Առաջարկվում է շենքի ՋՀՕ համակարգի համար էներգախնայողության նոր կառավարման ռազմավարություն՝ զբաղվածության կանխատեսման ալգորիթմը ներառելով ՄԿԿ շրջանակում: Փոփոխականներով փոխադրման վերականգնման մոդել է առաջարկվում՝ շենքի զբաղվածության վիճակը կանխատեսելու համար: Առաջարկվող կանխատեսման ալգորիթմը գերազանցում է պարզ համամասնության մեթոդին և Մարկովյան շղթայի ալգորիթմին: Սողելավորման արդյունքները ցույց են տալիս, որ իրական ժամանակում զբաղվածության վրա հիմնված շենքի ՋՀՕ կառավարման ալգորիթմը ոչ միայն բարելավում է շենքը զբաղեցնողների հարմարավետության մակարդակը, այլ նաև նվազեցնում է էլեկտրաէներգիայի սպառումը:

Գրականության ցանկ

- [1] W. Sisson, C. van-Aerschot, C. Kornevall, R.Cowe, D.Bridoux, T.B. Bonnaire, J. Fritz, Energy efficiency in buildings: Transforming the market. World Business Council for Sustainable Development (WBCSD), Switzerland, 2009.
- [2] Building energy data book of DOE, 2011. URL: <http://buildingsdatabook.eren.doe.gov/>.
- [3] M. Maasoumy, Sangiovanni-Vincentelli A. Total and peak energy consumption minimization of building hvac systems using model predictive control. IEEE Design & Test of Computers. 2012 Aug 1;29.
- [4] F. Oldewurtel, A. Parisio, C.N. Jones, D. Gyalistras, et al., Use of model predictive control and weather forecasts for energy efficient building climate control. Energy and Buildings 45 (Feb 2012) 15-27.
- [5] B. Dong, K.P.Lam, A real-time model predictive control for building heating and cooling systems based on the occupancy behavior pattern detection and local weather forecasting. Building Simulation 7(1) (Feb 2014) 89-106.
- [6] F.C. McQuiston, J.D. Parker, Heating, ventilating, and air conditioning: analysis and design, 6th Edition. John Wiley & Sons, New York, NY, 2004.

- [7] **S. Goyal, P. Barooah**, A method for model-reduction of non-linear thermal dynamics of multi-zone buildings. *Energy and Buildings* 47 (Apr 2012) 332-40.
- [8] **G. Fraisse, C. Viardot, O. Lafabrie, G. Achard**, Development of a simplified and accurate building model based on electrical analogy. *Energy and buildings* 34(10) (Nov 2002) 1017-31.
- [9] **Ս. Սարգսյան**, Վերականգնվող էներգիայի օգտագործումն աշխարհում – Հայաստանում: Նորարարությամբ դեպի մաքուր տեխնոլոգիաներ. Լուսաբաց, Երևան, 2009, 82 էջ:
- [10] <https://newsolutions.org/programs/esp-program-nps/>
- [11] UK Energy Research Centre. UKERC Energy Data Centre, 2015.
- [12] **A. Walker**, Solar energy: Technologies and project delivery for buildings. John Wiley&Sons Inc, USA, 2011, 321 p.
- [13] **U. Jordan, K.Vajen**, DHWcalc: Program to generate domestic hot water profiles with statistical means for user defined conditions. In: ISES solar world congress, Orlando, USA, 2005
- [14] **S. Walker**, Energy use in the home – measuring and analysing domestic energy use and energy efficiency in Scotland. Scottish House Condition Survey, The Scottish Government, 2012.
- [15] Energy Saving Trust. Our calculations. 2015.
- [16] **A. Majumdar, J.L. Setter, J.R. Dobbs, B.M. Hencsey, D.H. Albonesi**, Energy-comfort optimization using discomfort history and probabilistic occupancy prediction. In Green Computing Conference (IGCC), 2014 International, IEEE 3 (Nov 2014) 1-10.
- [17] **J.R. Dobbs, B.M. Hencsey**, Predictive HVAC control using a Markov occupancy model. In 2014 American Control Conference IEEE 4 (Jun 2014) 1057-1062.

ЭНЕРГОЭФФЕКТИВНОЕ УПРАВЛЕНИЕ ОТОПЛЕНИЕМ, ОХЛАЖДЕНИЕМ И ВЕНТИЛЯЦИЕЙ ЗДАНИЙ НА ОСНОВЕ ПРОГНОЗА ЗАНЯТОСТИ

Давид Геворгович Акобян

*Национальный университет архитектуры и строительства Армении, г. Ереван, РА
dawhak99@gmail.com*

Для повышения экологической эффективности систем теплоснабжения зданий предлагается переход на электрическое отопление, в частности, использование тепловых насосов, которые могут быть интегрированы с возобновляемыми источниками энергии и системами хранения тепловой энергии, повышая тем самым общую эффективность и гибкость. Модели оптимизации системы основываются на данных о годовой потребности в тепле, температуре и заселённости зданий. Для повышения энергоэффективности систем отопления, охлаждения и вентиляции разработана модель восстановления переменной занятости, которая оценивает и прогнозирует уровень использования здания. Эти данные включены в контур моделируемого предиктивного управления, который формулируется как задача многокритериальной оптимизации с целью снижения энергопотребления при сохранении оптимального уровня теплового комфорта. Моделирование демонстрирует, что данный подход обеспечивает значительное повышение энергоэффективности указанных систем.

Ключевые слова: энергоэффективность, модель перемещения, тепловые насосы, энергосбережение, модель предиктивного управления, заселённость, тепловой комфорт, оптимизация

ENERGY EFFICIENT MANAGEMENT OF HEATING, COOLING AND VENTILATION OF BUILDINGS BASED ON OCCUPANCY PREDICTION

Davit Hakobyan

National University of Architecture and Construction of Armenia, Yerevan, RA
dawhak99@gmail.com

To enhance the environmental efficiency of building heating systems, a transition to electric heating specifically the use of heat pumps is proposed. These systems can be integrated with renewable energy sources and thermal energy storage solutions, thereby increasing overall efficiency and flexibility. System optimization models are based on data regarding annual thermal demand, temperature, and building occupancy. To improve the energy efficiency of heating, cooling, and ventilation systems in buildings, a variable occupancy recovery model has been developed, which assesses and forecasts building usage. This data has been incorporated into a model predictive control framework, formulated as a multi-objective optimization problem aimed at reducing energy consumption while maintaining optimal thermal comfort levels. Simulation results demonstrate that this approach significantly enhances the energy efficiency of the aforementioned systems.

Keywords: *energy efficiency, movement model, heat pumps, energy saving, model predictive control, occupancy, thermal comfort, optimization*

Հակոբյան Դավիթ Գևորգի (ՀՀ, ք.Երևան) – ՃՇՀԱՀ, ԶԳՄՕ ամբիոն, ասպիրանտ, (+374)77947353, dawhak99@gmail.com

Акобян Давид Геворгович (РА, г. Ереван) - НУАСА, кафедра Теплогазоснабжения и вентиляции, аспирант, (+374)77947353, dawhak99@gmail.com

Hakobyan Davit (RA, Yerevan) - NUACA, Chair of ventilation, gas and heat supply, phd student, (+374)77947353, dawhak99@gmail.com

Ներկայացվել է՝ 21.05.2025թ.

Գրախոսվել է՝ 18.06.2025թ.

Ընդունվել է տպագրության՝ 29.08.2025թ.

ԱՆՈՐՈՇ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԵՅԲՈՆԱՅԻՆ ՑԱՆՑԵՐԻ ՀԱՄԱԴՐՄԱՍԲ ԽԵԼԱՑԻ ԶԵՌՈՒՑՄԱՆ, ՀՈՎԱՑՄԱՆ ԵՎ ՕԴԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Դավիթ Գևորգի Հակոբյան

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք. Երևան, ՀՀ

dawhak99@gmail.com

Անորոշ տրամաբանության վերահսկման և ներդրային ցանցերի համադրմամբ ինտելեկտուալ ջեռուցման, հովացման և օդափոխման կառավարման համակարգերը հանդիսանում են յուրաքանչյուր շենքի հիմնաքարը՝ ապահովելով ներքին ջերմաստիճանի և օդափոխման հարմարավետ պայմանները: Ժամանակակից շենքերին ներկայացվում են խիստ պահանջներ հարմարավետության, առողջ միջավայրի և շահագործման տնտեսական ռեժիմների առումով: Էլեկտրաէներգիայի, ջրամատակարարման և ջեռուցման ծառայությունների գների մշտական աճը, հանրապետության էներգասպառման մեջ կազմելով ավելի քան 40 %, ստիպում է կիրառել ռեսուրսախնայող տեխնոլոգիաներ և ջերմամեկուսիչ նյութեր՝ ձմռանը ջերմային կորուստները և ամռանն օդորակման ծախսերը նվազեցնելու համար: Սակայն փակ տարածքում թարմ օդի ծավալի սահմանափակումը կարող է վտանգավոր լինել առողջության համար՝ բորբոսների և սնկերի առաջացման միջոցով, մինչդեռ անկառավարելի օդափոխությունը հանգեցնում է էներգիայի աննպատակ սպառման և խաթարում խնայող միջոցառումների արդյունավետությունը:

Բանալի բառեր. ջեռուցում, հովացում, օդափոխություն, էներգիա, խելացի կառավարում, կլիմա, համակարգ, օպտիմիզացում, տվյալներ, մոդել, արդյունավետություն, ավտոմատացում

Ներածություն

Վերջին տարիներին նոր բնակարանների և վարչական շենքերի կառուցողներն ավելի ու ավելի հաճախ են նախընտրում տեխնիկական լուծումներ, որոնք հայտնի են «*Խելացի շենքեր*» անվանումով: Դրանք բաղկացած են մեխատրոնիկ կատարողական սարքերից, որոնք պետք է կարողանան ճանաչել շինությունում տեղի ունեցող որոշակի իրավիճակները և համապատասխան կերպով արձագանքել դրանց՝ այդ թվում՝ ջեռուցման, հովացման և օդափոխման գործընթացների համար:

Միկրոկլիմայի հուսալի և տնտեսող հարմարավետության ապահովումը հնարավոր է իրականացնել՝ օգտագործելով ոչ հստակ տրամաբանության մեթոդներ, որոնք հիմնված են լեզվաբանական կանոնների և կառավարման ազդակների վրա [1]:

Կատարողական սարքերի աշխատանքային ռեժիմները կարող են ընտրվել և կարգավորվել համակարգի կողմից, կախված տարածքում գտնվող մարդկանց գործունեության բնույթից, առկա

սարքավորումների աշխատանքային ռեժիմներից, ինչպես նաև արտաքին օդերևութաբանական պայմաններից՝ թե՛ օրվա և թե՛ տարվա կտրվածքով:

Ջեռուցման, հովացման և օդափոխման (ՋՀՕ) համակարգերը կարևոր դեր են խաղում բնակելի և առևտրային տարածքների ջերմային հարմարավետության ապահովման գործում [2]: Ավանդական ՋՀՕ համակարգերը հիմնված են սահմանված կարգավորումներով աշխատող ավտոմատ կառավարման մեխանիզմների վրա, որոնք չեն կարող օպտիմալ հարմարվել փոփոխվող միջավայրային պայմաններին: Ժամանակակից շենքերի էներգաարդյունավետության բարելավման նպատակով զարգանում են խելացի կառավարման համակարգերը:

ՋՀՕ համակարգերի արդյունավետությունը բարձրացնելու համար կիրառվում են արհեստական բանականության մեթոդներ, այդ թվում՝ անորոշ տրամաբանության վերահսկման (ՄՏՎ) և նեյրոնային ցանցեր: Ինտելեկտուալ ՋՀՕ համակարգերը, որոնք համադրում են ՄՏՎ և նեյրոնային ցանցերը, կարող են ինքնակարգավորվող և հարմարվող կերպով կառավարել ջերմաստիճանը, խոնավությունը և օդափոխության մակարդակը՝ հաշվի առնելով տարատեսակ գործոններ: Ավանդական համակարգերը հիմնված են նախապես սահմանված ալգորիթմների վրա, որոնք չեն կարող դինամիկ կերպով հարմարվել փոփոխվող միջավայրային գործոններին [3]:

Այս համակարգերն ունեն հետևյալ թերությունները.

- կարգավորման սահմանափակ ճկունություն,
- բարձր էներգիայի ծախս,
- դանդաղ արձագանք փոփոխվող պայմաններին:

Ինտելեկտուալ ՋՀՕ համակարգերը հիմնված են տվյալների մշակումով աշխատող ալգորիթմների վրա, որոնք կարող են ինքնուրույն սովորել և օպտիմալ որոշումներ կայացնել:

Այսպիսի համակարգերի հիմնական առավելություններն են.

- ավտոմատ հարմարվողականություն արտաքին և ներքին պայմաններին,
- էներգիայի արդյունավետ կառավարում,
- հարմարավետության բարձրացում:

ՋՀՕ համակարգերը կազմում են շենքերի էներգատար օգտագործման զգալի մասը: Գլխավոր խնդիրներն են՝

- անվերահսկելի էներգիայի սպառում,
- ջերմաստիճանի ոչ օպտիմալ կարգավորում,
- օդափոխության ոչ արդյունավետ կառավարում,
- միջավայրային փոփոխություններին արագ արձագանքելու դժվարություն [4]:

ՄՏՎ և նեյրոնային ցանցերի համադրմամբ հնարավոր է ստանալ ավելի խելացի և հարմարվող ՋՀՕ համակարգեր [5]:

Նյութեր և մեթոդներ

ԱՏՎ և Նեյրոնային ցանցերն արհեստական բանականության ոլորտի երկու կարևորագույն ուղղություններն են, որոնք հնարավորություն են տալիս լուծել ոչ գծային, բարդ և անորոշ իրավիճակներում առաջացող խնդիրները: Թեև դրանք սկզբունքորեն տարբեր մեթոդներ են, հաճախ օգտագործվում են համատեղ՝ առավել ճշգրիտ և արդյունավետ արդյունքներ ստանալու համար: ԱՏՎ-ն տրամաբանական համակարգ է, որը հնարավորություն է տալիս աշխատել ոչ միայն «ճիշտ» (1) կամ «սխալ» (0) արժեքներով, այլև թույլ է տալիս օգտագործել միջանկյալ արժեքներ: Այս մոտեցումը նման է մարդու մտածելակերպին, երբ որոշումները հիմնված են ոչ թե խիստ կանոնների, այլ մոտավոր գնահատականների վրա [6]:

Հիմնական տարրերը

1. Անորոշ բազմություններ

- Ի տարբերություն դասական տրամաբանության, որտեղ որևէ տարր պատկանում է բազմությանը, կամ ոչ, անորոշ տրամաբանության մեջ տարրի պատկանելիությունը ներկայացվում է պատկանելիության ֆունկցիայով, որն ունի $[0, 1]$ միջակայքի արժեք [7]:

2. Պատկանելիության ֆունկցիաներ

- Կիրառվում են տարբեր ձևերի ֆունկցիաներ՝ եռանկյունաձև, գաուսյան, սեղանաձև և այլն՝ տվյալների պատկանելիությունը որոշելու համար:

3. Անորոշ կանոններ

- Պատճառահետևանքային կանոններ, օրինակ՝ եթե ջերմաստիճանը բարձր է, ապա պետք է օդորակիչի հզորությունը մեծացնել [8]:

4. Անորոշացման վերացման գործընթաց

- Հնարավոր տարբերակներից մեկի ընտրումը, հիմնված անորոշ բազմությունների և կանոնների վրա:

Կիրառության ոլորտներ.

- ռոբոտատեխնիկա – կառավարում առանց խիստ սահմանված ալգորիթմների,
- տաքսիների ու լոգիստիկ համակարգերի կառավարում,
- օդորակիչների և ավտոմատ կառավարման համակարգեր,
- ֆինանսական վերլուծություն (վարկերի գնահատում, շուկայի կանխատեսում):

Նեյրոնային ցանցերն արհեստական մոդելներ են, որոնք ներշնչված են մարդու ուղեղի նեյրոնային կառուցվածքով: Դրանք սովորում են տվյալներից, ստեղծում օրինաչափություններ և կարող են օգտագործվել կանխատեսումների ու բարդ խնդիրների լուծման համար:

Նեյրոններ

- Յուրաքանչյուր նեյրոն ստանում է տվյալներ, իրականացնում հաշվարկ և փոխանցում արդյունքը հաջորդ շերտերին [9]:

1. Շերտեր

- **մուտքային շերտ** – ստանում է տվյալները,
- **թաքնված շերտեր** – կատարում են հիմնական հաշվարկները,
- **ելքային շերտ** – արտադրում է վերջնական կանխատեսումը:

ՄՏՎ-ի դերը ՋՀՕ համակարգերում

ՄՏՎ-ն հնարավորություն է տալիս մշակել անորոշ և ոչ գծային մոդելներ՝ հիմնվելով փորձառական տվյալների վրա: Այն օգտագործվում ՋՀՕ համակարգերում՝ կարգավորելու հետևյալ գործոնները.

- ջերմաստիճանի փոփոխությունների արձագանք,
- խոնավության վերահսկում,
- օդափոխության մակարդակի կարգավորում [10]:

ՄՏՎ-ն թույլ է տալիս ՋՀՕ համակարգին ավելի ճկուն կերպով մշակել տվյալները՝ առանց խիստ սահմանափակված կանոնների: Այն հնարավորություն է տալիս օգտագործել անորոշ, անկանոն և փոփոխական մեծություններ:

ՄՏՎ-ի կիրառությունը ՋՀՕ-ում հիմնականում ներառում է հետևյալ բաղադրիչները.

- **մանրամասն մուտքային տվյալների մշակումը** (օրինակ՝ սենյակի ջերմաստիճան, խոնավություն, արտաքին եղանակային պայմաններ),
- **կանոնների մշակումը**, հիմնված փորձագիտական գիտելիքի վրա,
- **ելքային որոշումների ստեղծում**, հիմնված ոչ ճշգրիտ տվյալների վերլուծության վրա [11]:

Fuzzy համակարգը սովորաբար բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

1. Ֆազիֆիկացիա – մուտքային տվյալների վերածում անորոշ մեծությունների:

Ներդրնային համակարգի մուտքային տվյալները ներկայացվում են որպես ոչ հստակ բազմություններ, որոնք նկարագրում են տարբեր միջակայքեր և պատկանում են մուտքերին: Ֆազիֆիկացիայի արդյունքում ստացվում են պատկանելիության աստիճաններ՝ 0-ից 1 միջակայքում:

2. Տրամաբանական մշակում – որոշման ընդունման փուլ:

Այս փուլում ստացվում են ելքային ազդանշաններ՝ համակարգի մուտքային տվյալների հիման վրա: Ոչ հստակ կառավարման մուտքային արժեքների համար օգտագործվում է եռանկյունաձև պատկանելիության ֆունկցիա, իսկ ելքի համար՝ թակարդաձև (սեղանաձև) պատկանելիության ֆունկցիա:

Ոչ հստակ եզրակացության կանոններն ու պատկանելիության արժեքները որոշելու համար անհրաժեշտ է իմանալ մուտքային տվիչի աշխատանքային միջակայքերը:

3. Դեֆազիֆիկացիա – որոշման վերածում որոշակի ելքային արժեքի դեպքում:

Գեներացվում են հստակ ելքային արժեքներ, որոնք ստացվել են եզրակացության համակարգի աշխատանքի արդյունքում՝ ջերմաստիճանի և հարաբերական խոնավության կառավարման, ինչպես նաև հովացման համակարգի աշխատանքի ռեժիմի կարգավորման համար [12]:

Արդյունքներ և քննարկում

ՄՏՎ-ի և ներդրնային ցանցերի համադրմամբ ՋՀՕ կառավարման համակարգերը մեծապես բարձրացնում են էներգաարդյունավետությունը և օգտատերերի հարմարավետությունը:

Այս տեխնոլոգիաների կիրառումը թույլ է տալիս ստեղծել ինքնաուսուցվող, հարմարվող և արդյունավետ կառավարման մեխանիզմ, որը նվազեցնում է էներգիայի ծախսերը և ապահովում է օպտիմալ կլիմայական պայմաններ [13]:

Ապագայի ՋՀՕ համակարգերը կարող են ավելի ինտեգրված լինել համացանցով միացված տեխնոլոգիաների հետ՝ ապահովելով ինքնավար կառավարման առավել մեծ հնարավորություններ: Ստացված արդյունքները ամփոփված են աղ. 1-ում՝

Աղյուսակ 1

Տարբեր կարգավորիչների աշխատանքի դեպքում սենյակի ջերմաստիճանի փոփոխությունը ժամանակից

Ժամանակ (րոպե)	Ավանդական ՋՀՕ (°C)	ԱՏՎ կարգավորում (°C)	Նեյրոնային ցանց + ԱՏՎ (°C)
0	18,0	18,0	18,0
2	20,0	21,0	21,5
4	23,0	22,3	22,1
6	21,5	22,0	22,0
8	22,2	22,0	22,0
10	22,0	22,0	22,0

Այս տվյալները մոդելավորում են տարբեր կարգավորիչների աշխատանքի դեպքում սենյակի ջերմաստիճանի փոփոխությունը ժամանակի ընթացքում (օրինակ, երբ սկսվում է 18 °C-ից և նպատակային մակարդակը 22 °C է): Ավանդական ՋՀՕ համակարգի դեպքում ջերմաստիճանը դանդաղ է հասնում նպատակային արժեքին (օր.՝ 23 °C-ին գերազանցում, հետո անկում 21,5 °C և այլն): Այսինքն, ավանդական հսկիչը ցուցաբերում է դանդաղ արձագանք և մեծ տատանումներ՝ տևական ժամանակ պահելով սենյակի ջերմաստիճանը ցանկալի արժեքից վեր կամ վար: ԱՏՎ համակարգը զգալիորեն ավելի արագ է կարգավորում ջերմաստիճանը. ինչպես երևում է աղ. 1-ից, այն մոտ 4-րդ րոպեին արդեն մոտ է նպատակային 22 °C-ին (մոտ 22,3 °C) և հետագա շեղումները շատ փոքր են: ԱՏՎ-ի կիրառման դեպքում գերակշիռ փոքր է և համակարգը հաճախ արագ է կայունանում նպատակային ջերմաստիճանին՝ թույլ շեղումներով: Նեյրոնային ցանցով հարստացված ԱՏՎ համակարգը հասնում է նպատակային ջերմաստիճանին ամենաարագը, գրեթե առանց գերակշռի (աղ. 1-ում առավելագույնը 22,1 °C) և պահպանելով կայունությունն ընդամենը մի քանի րոպեում: Այս համակցված համակարգի դեպքում ջերմաստիճանը շարունակում է մնալ նպատակային արժեքին շատ մոտ, ցույց տալով ամենափոքր շեղումները և ամենակայուն վերահսկումը, ինչը հաստատում է, որ այն ամենաարդյունավետն է ջերմաստիճանի կարգավորման առումով: Հստ վերը նշվածի ստացվում է ջերմաստիճանի կարգավորման համեմատություն՝ ՋՀՕ համակարգերում (նկ. 1):

Գրաֆիկը ցույց է տալիս տարբեր ՋՀՕ համակարգերի ջերմաստիճանի կարգավորման գործընթացը.

- ## Աղյուսակ 2

Համակարգի տեսակ	Օրական էներգիայի սպառում (<i>կՎտ.ժ</i>)
Ավանդական ՋՀՕ	50
ԱՏՎ	40
Ներդրային ցանց + ԱՏՎ	30


40

արդի խմբաքանակում: Նեյրոնային ցանց + ԱՏՎ համակցված համակարգն ամենարդյունավետն է՝ օրական մոտ 30 կՎտ.ժ ծախսով, որը 40 % ավելի քիչ է, քան ավանդականը: Այս բարձր արդյունավետությունը ստացվում է շնորհիվ համակարգի հարմարվողականության. նեյրոնային բաղադրիչը կանխատեսում և հարմարեցնում է աշխատանքն ըստ փոփոխվող պայմանների, ինչի արդյունքում խնայվում է առավելագույն էներգիա՝ պահպանելով անհրաժեշտ հարմարավետությունը: Այսպես, համակցված ինտելեկտուալ համակարգն էներգիայի օգտագործման առումով զգալի առավելություն ունի մյուսների նկատմամբ: Ըստ վերը նշվածի՝ ստացվում է էներգիայի արդյունավետության համեմատություն՝ ՋՀՕ համակարգերում (նկ. 2):

Ըստ էներգիայի արդյունավետության համեմատության գրաֆիկի պարզ է դառնում, որ.

- ավանդական ՋՀՕ-ն ունի կայուն, բայց բարձր էներգիայի սպառում [14],
- ԱՏՎ-ն տարածականորեն խնայում է էներգիան՝ ավելի ճշգրիտ կարգավորման շնորհիվ,
- նեյրոնային ցանց + ԱՏՎ – ն խնայում է առավելագույն էներգիա՝ հարմարվելով փոփոխվող պայմաններին:

Ստացված արդյունքներն ամփոփված են աղ. 3-ում:



Նկ 2. Էներգիայի արդյունավետության համեմատություն ՋՀՕ համակարգերում


Աղյուսակ 3

Ջերմաստիճանի շեղման կարգավորման ժամանակը՝ ավանդական, ԱՏՎ և նեյրո-ԱՏՎ համակարգերում

Համակարգի տեսակը	Արձագանքման ժամանակը (րոպե)
Ավանդական ՋՀՕ	10 (դանդաղ)
ԱՏՎ	6 (նորմալ)
Նեյրոնային ցանց + ԱՏՎ	3 (արագ)

Աղ. 3-ը պայմանական թվերով ներկայացնում է, թե յուրաքանչյուր համակարգ որքան ժամանակում է կարողանում արձագանքել և կարգավորել միջավայրային փոփոխությունը (օրինակ, սենյակի ջերմաստիճանի որոշակի շեղումից հետո վերադարձնել այն սահմանված արժեքին): Ավանդական ՋՀՕ համակարգն ունի ամենադանդաղ արձագանքը, այն կարող է պահանջել մոտ

- [1] **M.M. Kashiripur, V.A. Nikolyuk**, The role of architecture in the construction industry. In: Construction – Formula for Development: Proceedings of the IX International Scientific and Technical Conference of Students, Postgraduates and Young Scientists Minsk: Belarusian National Technical University, 2023, pp. 107–110. Available at: <https://rep.bntu.by/handle/data/114416>.
- [2] **M. Salam, P. Forsythe, C. Killen**, Collaboration in the Detailed Design Phase of Construction Projects – A Study of Interdisciplinary Teams. In: Proceedings of the 31st Annual Conference of the International Group for Lean Construction IGLC31 (2023) 1049–1060.
- [3] **H.S. Samuel, E. E. Etim, U.Nweke-Maraizu, G. Okibe**, Building Collaborative and Interdisciplinary Teams: Strategies for Effective Talent Management. Strategies for Effective Talent Management (Chapter 2), (2025) IGI Global.
- [4] **E.O. Nwulu, T.Y. Elete, K.O. Omomo, O.A. Akano, O.V. Erhueh**, The Importance of Interdisciplinary Collaboration for Successful Engineering Project Completions: A Strategic Framework (2023).
- [5] **В.А. Федорченко, Ж.А. Василенко**, Инструментарий гибкой методологии управления проектами в строительной отрасли. Теоретическая и прикладная экономика 1 (2022) 1-10, DOI: 10.25136/2409-8647.2022.1.35958, URL:https://nbpublish.com/library_read_article.php?id=35958
- [6] **Գ.Ե. Սարգսյան**, Հայաստանի շինարարական շուկայի զարգացման միտումները և նախագծային կառավարման դերակատարությունը, Տեխնիկական գիտություններ 2 (2022) 88-96:
- [7] **Ա.Հ. Մելիքյան**, Շինարարական նախագծերի կառավարման ժամանակակից մեթոդների կիրառումը Հայաստանում, Շինարարության և ճարտարագիտության խնդիրներ 3 (2021) 45-53:
- [8] **B.W. Tuckman, M.A. Jensen C.**, Stages of small-group development revisited. Group & Organization Studies, 2(4) (2017).419–427, <https://doi.org/10.1177/105960117700200404>.
- [9] **И.И. Богомолов**, Новые подходы к управлению строительными проектами и их использование в учебном процессе. IV Межд. научно-практическая конференция, БНТУ, 2023, <https://rep.bntu.by/handle/data/141123>.
- [10] **E.V. Kolesnikova, D.V. Lukyanov, O.I. Sherstyuk**, Assessment of Teamwork Efficiency at the Project Initiation Stage. Project Management 1 (2015), Available at: <https://www.researchgate.net/publication/282877224>.
- [11] **Д.А. Кудрявцев, А.А. Кудрявцева**, Исследование процесса оценки эффективности работы команды. Современные технологии управления 2 (2018), <https://cyberleninka.ru/article/n/issledovanie-protsesssa-otsenki-effektivnosti-raboty-komandy>.
- [12] **H. Gharaibeh**, Developing a Scoring Model to Evaluate Project Management Software Packages Based on ISO/IEC Software Evaluation Criterion. Journal of Software Engineering and Applications, 7(6) (2014) 483-495, Available at: https://file.scirp.org/Html/4-9301718_42099.htm.

КОМПЛЕКСНАЯ МОДЕЛЬ ОЦЕНКИ ЭФФЕКТИВНОСТИ КОМАНДНОГО УПРАВЛЕНИЯ ПРИ РЕАЛИЗАЦИИ СТРОИТЕЛЬНЫХ ПРОЕКТОВ

Зара Зауровна Манвелян*, Рима Констандиновна Степанян

Национальный университет архитектуры и строительства Армении, г. Ереван, РА

**zaramanvelian@gmail.com*

В условиях профессионального многообразия в строительной отрасли обеспечение высокого уровня сотрудничества является важным фактором успешной реализации проектов. Эффективное управление командами играет решающую роль в качестве основы для успешного завершения строительных проектов. В статье проведён анализ эффективности командной работы в различных строительных организациях Армении, а также рассмотрены особенности командного управления в строительных проектах, включая роль иерархической структуры, формирование механизмов коммуникации, управление конфликтами и влияние стилей руководства. Особое внимание уделяется особенностям местного рынка и практическим аспектам применения современных моделей управления. Цель статьи — разработать модель оценки для анализа эффективности командного управления в строительных проектах, которая позволит изучить влияние факторов формирования команды, взаимодействия, организационной структуры, стиля руководства и сотрудничества на успешность проекта.

Ключевые слова: особенности управления командами, иерархическая структура, конфликты, модель оценки, факторы сотрудничества

COMPREHENSIVE MODEL FOR EVALUATING TEAM MANAGEMENT EFFECTIVENESS IN CONSTRUCTION PROJECTS

Zara Manvelyan*, Rima Stepanyan

Armenian National University of Architecture and Construction, Yerevan, RA

**zaramanvelian@gmail.com*

Ensuring a high level of collaboration amid professional diversity in the construction industry is a crucial prerequisite for project success. Effective team management plays a decisive role as the foundation for the successful completion of construction projects. This article presents an analysis of team performance effectiveness in various construction organizations in Armenia and examines the characteristics of team management in construction projects, including the role of hierarchical structures, the formation of communication mechanisms, conflict management, and the influence of leadership styles. Special attention is given to the specifics of the local market and the practical application of modern management models. The purpose of this study is to develop an evaluation model for analyzing the effectiveness of team management in construction projects, which will enable the investigation of the impact of team formation, interaction, organizational structure, leadership style, and collaboration factors on project success.

Keywords: team management characteristics, hierarchical structure, conflicts, evaluation model, collaboration factors

Մանվելյան Զարա Զատուրի, տ.գ.թ., դոցենտ (ՀՀ, ք. Երևան) – ՃՇՀԱՀ, «Էկոնոմիկայի, իրավունքի և կառավարման» ամբիոն, (+374)93368026, zaramanvelian@gmail.com, **Ստեփանյան Ռիմա Կոնստանդինի** (ՀՀ, ք. Երևան) – ՃՇՀԱՀ, «Էկոնոմիկայի, իրավունքի և կառավարման» ամբիոն, մագիստրանտ, (+374)98328722, rimastepanyan2002@gmail.com

Манвелян Зара Зауровна, канд.техн.наук, доцент (РА, г. Ереван) - НУАСА, кафедра Экономики, права и управления, (+374)93368026, zaramanvelian@gmail.com, **Степанян Рима Константиновна** (РА, г. Ереван) - НУАСА, кафедра Экономики, права и управления, магистрант, (+374)98328722, rimastepanyan2002@gmail.com

Manvelyan Zara, Ph.D., Associate Professor (RA,Yerevan) – NUACA, Department of Economics, Law and Management, (+374)93368026, zaramanvelian@gmail.com, **Stepanyan Rima** (RA,Yerevan) – NUACA, Department of Economics, Law and Management, master’s student, (+374)98328722, rimastepanyan2002@gmail.com

Ներկայացվել է՝ 09.04.2025թ.

Գրախոսվել է՝ 30.05.2025թ.

Ընդունվել է տպագրության՝ 29.08.2025թ.

**ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԱՅԻՆ ԳՐԱԴԻԵՆՏԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՆՔԵՐՈՒՄ**

Տիգրան Դավիթի Մանուկյան

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք. Երևան, ՀՀ

myan_tigran@mail.ru

Ուսումնասիրված և վերլուծված է ջերմաստիճանային գրադիենտի փոփոխությունն արտադրական նշանակության սենքերում, որտեղ առկա է մեխանիկական օդափոխության համակարգ և սենքի բարձրությունը մեծ է 4 մ-ից: Այսպիսի սենքերում առկա է ջերմային անջատումների զգալի քանակ և օդի ծավալային հոսքը կախված է մի շարք գործոններից, որոնք կարող են զգալիորեն փոփոխել օդափոխության համակարգի արժեքը: Այդ գործոններից է մատակարար և շրջանառու օդի ջերմաստիճանների միջև նախապես սահմանված ջերմաստիճանային տարբերությունը: Արտադրական սենքերում, որտեղ օդաբաշխիչ սարքերը տեղադրված են առաստաղին մոտ, անհրաժեշտ է հաշվի առնել աշխատանքային գոտուց վերև գտնվող հավելյալ ջերմաստիճանային գրադիենտը, որի համար կատարվել է փորձնական ուսումնասիրություն: Հնդկաժուռներ կայացված է օդի ջերմաստիճանի բաշխման չափումների արդյունքները: Արտադրական սենքում մատակարար օդի համար նախատեսված են հողմային դիֆուզորներ, իսկ արտաձման համակարգի համար՝ այլումինե կարգավորվող ճաղաշարեր: Կատարվել են չափումներ և հաշվարկվել է ջերմաստիճանային գրադիենտի փոփոխությունը 2...7 մ բարձրության միջակայքում:

Բանալի բառեր. *ջերմաստիճանային գրադիենտ, մեխանիկական օդափոխություն, ջերմային անջատումներ, ջերմային հարմարավետություն*

Ներածություն

Հետազոտության համար ընտրված շինությունը մետաղական կոնստրուկցիաների արտադրամաս է, որի ֆիզիկական չափերն են. լայնություն՝ 22 մ, երկարություն՝ 82 մ, բարձրություն՝ 10,5 մ: Շինության բոլոր պատերն արտաքին են՝ 500 մմ հաստությամբ փրփրապոլիուրեթանից կառուցված, դրսից և ներսից մետաղե երեսապատումով, առաստաղը ևս կազմված է նույն նյութերից, շինության հատակն անմիջապես հենված է հողի վրա: Մենքում աշխատողների առավելագույն քանակը 36 է, շինության հարմարավետ պայմանների ապահովման համար նախատեսված է ներաձման և արտաձման օդափոխության համակարգ: Մենքում հիմնական ջերմային անջատումները տեղի են ունենում մարդկանցից, լուսավորությունից և հաստոցներից:

Օդի ծավալային հոսքի հաշվարկման համար կարևոր պայման է սահմանել ներաձման և արտաձման օդի ջերմաստիճանները: Այս խնդիրը համեմատաբար դյուրին է սենքերում, որտեղ առաստաղի բարձրությունը 4 մ է և օդաբաշխիչ սարքերը տեղադրված են աշխատանքային


գոտուն հնարավորինս մոտ [1, 2]: Արտադրական սենքերում, որտեղ առաստաղի բարձրությունը մեծ է 4 մ-ից և օդաբաշխիչ սարքերը տեղադրված են առաստաղին մոտ, առկա է ջերմաստիճանի փոփոխություն սենքի բարձրության ուղղությամբ: Այս խնդիրը հատկապես կարևոր է արտադրական այնպիսի սենքերում, որտեղ առկա է կառուցվածքային և տեխնոլոգիական պահանջ ներածման և արտածման օդաբաշխիչների տեղի հետ կապված. ներածումը՝ սենքի առաստաղին մոտ, արտածումը՝ աշխատանքային գոտուց բարձր:

Աշխատանքային գոտում ուղղահայաց ջերմաստիճանային գրադիենտը ջերմային հարմարավետության ամենակարևոր գործոններից է: Էներգիայի սպառման տեսանկյունից առավել կարևոր է գնահատել ընդհանուր սենքում հնարավոր ջերմաստիճանի աճը, քան պարզապես ներածման և արտածման օդերի ջերմաստիճանների տարբերությունը, միաժամանակ անհրաժեշտ է աշխատանքային գոտում ապահովել հարմարավետ պայմաններ [3, 4]: Աշխատանքային գոտուց վեր ջերմաստիճանի բարձրացումը (θ) սերտորեն կապված է այն խնդրի հետ, որը բնութագրում է սենյակի միջին ջերմաստիճանային գրադիենտը (δt): Վերջինս դեռևս բավարար կերպով ուսումնասիրված չէ Հայաստանում՝ սենքերի 4 մ և ավելի բարձրության դեպքում:

Նյութեր և մեթոդներ

Հաշվարկվել են շինության համար ջերմային կորուստները, պահանջվող ներածման և արտածման օդաքանակներն ըստ նորմատիվատեխնիկական փաստաթղթերի [5-7]:

Չափումները կատարվել են 2024թ.-ի ապրիլից մինչև օգոստոս ամիսները: Չափիչ սարքերը տեղադրվել են հնարավորինս խնդրահարույց հատվածներում: Չափումների համար օգտագործվել են 8 հատ տվիչներ՝ կարգավորվող դիրքով ներածման օդի ջերմաստիճանի չափման և հաստատուն դիրքով աշխատանքային գոտում օդի ջերմաստիճանի չափման համար, մյուս տվիչները տեղադրվել են 1 մ հեռավորությամբ՝ հաստատուն դիրքերում: Տվիչների դիրքերը պատկերված են նկ. 1-ում:



Նկ. 1. Չափիչ սարքերի և տվիչների դիրքը սենքում

Սկզբնական չափումները բացահայտեցին այն հատվածները, որտեղ օդափոխության համակարգը բավական արդյունավետ չէր գործում, և այն հատվածները, որտեղ չափազանց ինտենսիվ էր: Ջերմաստիճանի չափումները կատարվել են յուրաքանչյուր 10 *րոպեն* մեկ PT1000 տեսակի տվիչներով:

Մեխանիկական դրդմամբ օդափոխության համակարգերում, որոնք սպասարկում են զգալի ջերմային անջատումներ ունեցող սենքեր, պահանջվող օդաքանակի մեծությունը կախված է նաև ներածման և արտածման գոտիների միջև ջերմաստիճանների տարբերությունից [8]: Օդի հոսքի քանակը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$L = Q / \rho c \Delta t, \quad (1)$$

որտեղ L -ն օդի քանակն է, u^3/δ , ρ – ն՝ օդի խտությունը, lq/u^3 , c – ն՝ օդի ջերմունակությունը, $\varphi u/lq^0C$, Δt – ն՝ ջերմաստիճանների տարբերությունը, 0C , Q – ն սենքի ջերմային պահանջն է, φu :

Սենքերում, որտեղ առաստաղի բարձրությունը մեծ է, ջերմաստիճանի փոփոխությունը կարող է արտահայտվել հետևյալ բանաձևով՝

$$\Delta t^{max} = \{[t_{wq} + \delta t(h_{wp} - h_{wq})] - t_b\}^{max}, \quad (2)$$


որտեղ t_{wq} -ն աշխատանքային գոտու օդի ջերմաստիճանն է, 0C , t_b -ը՝ ներածվող օդի ջերմաստիճանը, h_{wp} -ը՝ արտածման ճաղաշարի բարձրությունը, h_{wq} –ը՝ աշխատանքային գոտու բարձրությունը, u , δt -ն սենյակի միջին ջերմաստիճանային գրադիենտն է, $^0C/u$:

Սենյակի միջին ջերմաստիճանային գրադիենտն արտահայտում է օդի ջերմաստիճանի փոփոխությունը բարձրության ուղղությամբ, չափված հատակի մակարդակից ուղղահայաց հեռավորությամբ՝ $\delta t (^0C/u)$ [9]: Հոդվածում հիմք է ընդունվել աշխատանքային գոտու բարձրությունը՝ 1,5...1,9 u : Միջին ջերմաստիճանային գրադիենտը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$\delta t = \frac{\theta}{h_{1wq} - h_{wq}} = \frac{t_{1wq} - t_{wq}}{h_{1wq} - h_{wq}}, \quad (3)$$

որտեղ θ -ն աշխատանքային գոտուց վերև ջերմաստիճանի բարձրացումն է, 0C , h_{1wq} -ը՝ աշխատանքային գոտուց վերև բարձրությունը, h_{wq} -ը՝ աշխատանքային գոտու բարձրությունը, u , t_{1wq} –ը՝ աշխատանքային գոտուց վերև օդի ջերմաստիճանը, t_{wq} -ը՝ աշխատանքային գոտու օդի ջերմաստիճանը:


Սենքերում, որտեղ գերակշռում է զգայական ջերմային բեռը, կարելի է տարանջատել երկու գոտի՝ աշխատանքային, որտեղ պետք է ապահովել սահմանված հարմարավետ պայմանները և անցումային, որը գտնվում է աշխատանքային գոտուց բարձր և ջերմային պայմանների ապահովումը պարտադիր չէ: Այս գոտում դիտվում է ջերմաստիճանի շերտավորում և լրացուցիչ ջերմաստիճանային գրադիենտի բարձրացում: Նկ. 2-ում ներկայացված է միջին ջերմաստիճանային գրադիենտի փոփոխությունը, կախված աշխատանքային գոտուց, հեռավորության և բարձրության տարբերությունից: Ըստ նկ. 2-ի, միջին ջերմաստիճանային գրադիենտը նվազում է աշխատանքային գոտուց:



Նկ. 2. Սենքում միջին ջերմաստիճանի գրաֆիկ միջին ջերմաստիճանային գրադիենտ աճի՝ $\Delta t = 2, 3, 4^{\circ}\text{C}$ արժեքների դեպքում

Արդյունքներ և քննարկում.


Նկ. 3 և նկ. 4-ում ներկայացված են օդի ջերմաստիճանի փոփոխություններն ու միջին ջերմաստիճանային գրադիենտը, որոնք գրանցվել են 2024թ. ապրիլ, հուլիս, օգոստոս ամիսներին: Գրաֆիկներում ներկայացված են աշխատանքային գոտու ջերմաստիճանի փոփոխությունները, արտածման և ներածման ճաղաշարերին մոտ օդի ջերմաստիճանը: Ապրիլ ամսին աշխատանքային գոտում գրանցված օդի ջերմաստիճանի աճը կազմել է $5,8^{\circ}\text{C}$, ինչը եղել է ողջ չափման ընթացքում ամենաբարձր արժեքը: Ներածման օդի նվազագույն ջերմաստիճանն ստացվել է $17,8^{\circ}\text{C}$, այդ ժամանակահատվածում աշխատանքային գոտում օդի ջերմաստիճանը եղել է $26,2^{\circ}\text{C}$, իսկ արտածվող օդի ջերմաստիճանը՝ $29,3^{\circ}\text{C}$: Սենքում միջին ջերմաստիճանային գրադիենտը (δt) կազմել է $0,7^{\circ}\text{C}/\text{m}$:



Նկ. 3. Սենքում օդի ջերմաստիճանի և օդի միջին ջերմաստիճանային գրադիենտի փոփոխության գրաֆիկ


Ներածման օդի ջերմաստիճանի ժամանակավոր աճը (պայմանավորված արտաքին օդի ջերմաստիճանի բարձրացմամբ) հանգեցրել է աշխատանքային գոտու և արտածվող օդի ջերմաստիճանների բարձրացման: Միևնույն ժամանակ անցումային գոտում օդի ջերմաստիճանի բարձրացման ցուցանիշը (θ) նվազել է, ինչի արդյունքում նվազել է նաև միջին ջերմաստիճանային

գրադիենտը: Ապրիլ ամսին ներածվող օդը եղել է թարմ, վերաօգտագործված օդի խառնուրդ, որն ապահովել է կայուն ջերմաստիճան աշխատանքային գոտում [10]: Հուլիս և օգոստոս ամիսներին միջին ջերմաստիճանային աճը կազմել է $1,78\text{ }^{\circ}\text{C}$, ինչը եղել է ամբողջ չափման ընթացքում ամենացածր արժեքը: Ներածվող թարմ օդի ջերմաստիճանի նվազագույն արժեքը եղել է $22,8\text{ }^{\circ}\text{C}$, այդ ժամանակահատվածում աշխատանքային գոտում օդի ջերմաստիճանը կազմել է $24,5\text{ }^{\circ}\text{C}$, իսկ արտածման օդի ջերմաստիճանը՝ $27,5\text{ }^{\circ}\text{C}$: Միջին ջերմաստիճանային գրադիենտը կազմել է $0,58\text{ }^{\circ}\text{C}/\text{m}$: Ապրիլ ամսվա չափումներից ստացված ջերմաստիճանային տարբերությունների պատճառը եղել է սառեցման համակարգի բացակայությունը, ինչի հետևանքով ներածվող թարմ օդի ջերմաստիճանը եղել է գրեթե նույնը, ինչ արտաքին օդի ջերմաստիճանն է:




Նկ. 4. Մենքում օդի ջերմաստիճանի և օդի միջին ջերմաստիճանային գրադիենտի փոփոխության գրաֆիկ

Նկ. 5 և նկ. 6-ում ներկայացված են ջերմաստիճանային գրադիենտի և օդի ջերմաստիճանի փոփոխություններն ընտրված երկու օրերի համար՝ ապրիլից մինչև հուլիս:




Նկ. 5. Մենքում օդի ջերմաստիճանը և միջին ջերմաստիճանային գրադիենտը նշված ժամանակահատվածում (ապրիլ)

Ըստ ստացված գրաֆիկների ապրիլ ամսին արտադրամասում օդի ջերմաստիճանը մնացել է գրեթե անփոփոխ, հուլիս և օգոստոս ամիսներին այն կախված է եղել արտաքին օդի ջերմաստիճանից: Ցերեկվա և գիշերվա ջերմաստիճանային տարբերությունները հստակ արտահայտված են գրաֆիկում: Կարելի է նկատել, որ ներածվող օդի ջերմաստիճանի բարձրացմանը զուգընթաց միջին ջերմաստիճանային գրադիենտը նվազում է [11]:



Նկ. 6. Մենքում օդի ջերմաստիճանը և միջին ջերմաստիճանային գրադիենտը նշված ժամանակահատվածում (հուլիս)

Նկ. 7-ում ներկայացված է արտադրամասի տարբեր բարձրություններում օդի ջերմաստիճանի փոփոխությունը՝ համեմատած աշխատանքային գոտում օդի ջերմաստիճանի և դրա բարձրացման հետ:



Նկ. 7. Մենքում օդի ջերմաստիճանի փոփոխությունը տարբեր բարձրություններում, սենքում ջերմաստիճանի փոփոխությունն ըստ սովիչների

Եզրակացություն

- Արտադրամասում օդի ջերմաստիճանի շերտավորումն արձանագրվում է ինչպես նվազագույն, այնպես էլ առավելագույն ջերմաբեռնվածության ժամանակ:
- Օդի միջին ջերմաստիճանային գրադիենտը հակադարձ հարաբերական է ներածվող օդի ջերմաստիճանին՝ հատկապես ամռանը, երբ սրահ է մատակարարվում արտաքին կամ վերաօգտագործիչով անցկացված օդ:

- Աշխատանքային գոտուց վերև 2 մ տարածությունում դիտվում է օդի ջերմաստիճանի զգալի աճ: Դրանից վեր աճը նվազում է:
- Հաստատվել է սրահում ընդհանուր օդի ջերմաստիճանի աճի և աշխատանքային գոտու այդ աճի միջև կապը: Այս կապը թույլ է տալիս ավելի հեշտությամբ գնահատել անհրաժեշտ օդի ջերմաստիճանի աճը՝ օդի ծախսի հաշվարկման համար նմանատիպ տեխնոլոգիական և ջերմային պայմաններ ունեցող սրահներում, որոնք հազեցած են առանց սառեցման օդափոխիչ կայաններով:

Գրականության ցանկ

- [1] **M. Karim, R. Al-Mansour**, HVAC Design for Industrial Facilities, Springer, 2018, 245 p.
- [2] **Y. Zhou, X. Wang**, Air Distribution and Energy Efficiency in Industrial Buildings, Elsevier, 2017, 294 p.
- [3] **Q. Chen**, Ventilation and Airflow in Large Indoor Spaces, CRC Press, 2013, 310 p.
- [4] **ASHRAE**, Handbook of Fundamentals, ASHRAE Publications, Atlanta, 2021, 980 p.
- [5] **K. Lee, H. Tanaka**, Thermal Stratification and Comfort in High-Ceiling Rooms, Journal of Building Physics 42(2) (2019) 134–150.
- [6] **R. Mikalsen**, Heat Transfer in Industrial Environments, Wiley-Blackwell, 2016, 268 p.
- [7] **Ս.Կ. Քարամյան**, Շենքերի ջերմատեխնիկական հարաչափերի գործիքային չափազորում. Ուս.մեթ.ձեռն., ՄԱԶՕ, Երևան, 2013, 55 էջ:
- [8] **M. Nowak, P. Lewandowski**, Indoor Climate Control: Theory and Practice, Springer, 2020, 312p.
- [9] **S. Sattari & B. Farhanieh**, Experimental Analysis of Temperature Gradients in Factory Halls, Energy and Buildings 86 (2015) 206–213.
- [10] **M. Krajčík, A. Simone**, Numerical Modeling of Vertical Air Temperature Gradient in Industrial Halls, Building and Environment 89 (2015) 206–218.
- [11] **S. Holmberg, Y. Li**, Ventilation of Large Spaces with High Ceilings, Building Services Engineering Research and Technology 31(3) (2010) 223–235.

АНАЛИЗ ИЗМЕНЕНИЯ ТЕМПЕРАТУРНОГО ГРАДИЕНТА В ПОМЕЩЕНИЯХ ПРОМЫШЛЕННОГО НАЗНАЧЕНИЯ

Манукян Тигран Давидович

Национальный университет архитектуры и строительства Армении, г. Ереван, РА

myan_tigran@mail.ru

Изучено и проанализировано изменение температурного градиента в помещениях промышленного назначения, оснащённых системой механической вентиляции и имеющих высоту потолка более 4 метров. В таких помещениях наблюдается значительное количество тепловых расслоений, а объёмный расход воздуха зависит от ряда факторов, которые могут существенно повлиять на стоимость и эффективность вентиляционной системы. Одним из таких факторов является заранее заданная разница температур между подаваемым и циркулирующим воздухом. В производственных

помещениях, где воздухораспределительные устройства установлены вблизи потолка, необходимо учитывать дополнительный температурный градиент выше рабочей зоны. С этой целью было проведено экспериментальное исследование. В статье представлены результаты измерений распределения температуры воздуха. В рассматриваемом промышленном помещении для подачи воздуха использовались воздушные диффузоры, а для вытяжной системы — регулируемые алюминиевые решетки. Были выполнены измерения и рассчитано изменение температурного градиента в диапазоне высот от 2 до 7 метров.

Ключевые слова: температурный градиент, механическая вентиляция, тепловые выделения, тепловой комфорт

ANALYSIS OF TEMPERATURE GRADIENT VARIATION IN INDUSTRIAL PREMISES

Tigran Manukyan

National University of Architecture and Construction of Armenia, Yerevan, RA

myan_tigran@mail.ru

The purpose of the article is to study and analyze the variation of the temperature gradient in industrial premises equipped with mechanical ventilation systems and having a ceiling height greater than 4 meters. In such premises, there is a significant number of thermal layers, and the volumetric airflow depends on a number of factors that can substantially affect the cost and efficiency of the ventilation system. One of these factors is the predefined temperature difference between the supply and recirculated air. In industrial halls where air distribution devices are installed near the ceiling, it is necessary to consider the additional temperature gradient above the occupied zone. To investigate this, an experimental study was conducted. The article presents the results of air temperature distribution measurements. In the examined industrial hall, wind-type diffusers were used for supply air, and adjustable aluminum grilles were used for the exhaust system. Measurements were carried out, and the change in temperature gradient was calculated within the height range of 2 to 7 meters.

Keywords: temperature gradient, mechanical ventilation, thermal stratification, thermal comfort

Մանուկյան Տիգրան Դավիթի (ՀՀ, ք. Երևան) – ՃՇՀԱՀ, ԶԳՄՕ ամբիոն, հայցորդ (+374)33373708, *myan_tigran@mail.ru*

Манукян Тигран Давидович (РА, г. Ереван) - НУАКА, кафедра Теплогазоснабжения и вентиляции, соискатель, (+374)33373708, *myan_tigran@mail.ru*

Manukyan Tigran (RA, Yerevan) - NUACA, Chair of ventilation, gas and heat supply, PHD student, (+374)33373708, *myan_tigran@mail.ru*

Ներկայացվել է՝ 17.06.2025թ.

Գրախոսվել է՝ 17.07.2025թ.

Ընդունվել է տպագրության՝ 29.08.2025թ.

КОНТРОЛЬ МИКРОКЛИМАТА В ЗДАНИИ ПОСРЕДСТВОМ ИЗМЕРЕНИЯ ТЕМПЕРАТУРНОГО ГРАДИЕНТА СТЕН

Сергей Ашотович Минасян*, Тигран Давидович Манукян

Национальный университет архитектуры и строительства Армении, г. Ереван, РА

*sergey.minasyan@yahoo.com

В исследовании температурный градиент стен анализировался как параметр для мониторинга и управления внутренней температурой помещений. Экспериментальные данные были собраны в восьми зданиях района Нарекаци (г. Ереван). Результаты измерений показали, что температурный градиент варьируется в диапазоне от $13,1^{\circ}\text{C}/\text{м}$ до $30,8^{\circ}\text{C}/\text{м}$. Максимальное значение ($30,8^{\circ}\text{C}/\text{м}$) было зарегистрировано в восьмом здании, тогда как минимальное ($13,1^{\circ}\text{C}/\text{м}$) — в седьмом. Установлено, что более высокий градиент температуры коррелирует с пониженными значениями внутренней температуры. Анализ взаимосвязей параметров температурного режима выявил, что внутренняя температура помещений линейно зависит от внешней температуры, тогда как температурный градиент находится в обратно пропорциональной зависимости от коэффициента теплопроводности, определяющего интенсивность теплообмена между конструкционными элементами здания и окружающей средой. На основании полученных данных разработаны тепловые математические модели, описывающие термодинамические характеристики ограждающих конструкций. Выведенные уравнения, полученные методами графического анализа, могут быть использованы в качестве расчетных параметров при проектировании зданий, позволяя оптимизировать внутренний температурный режим в соответствии с нормативными требованиями. Результаты исследования подтверждают необходимость комплексного учета внешней и внутренней температурных нагрузок, а также температурного градиента стен для повышения эффективности управления микроклиматическими условиями внутри помещений.

Ключевые слова: температура, температурный градиент, теплопроводность, излучение тепла, микроклимат

Введение

Температура представляет собой фундаментальную физическую величину, количественно характеризующую тепловое состояние материальных объектов [1]. В отличие от количества теплоты, температура может рассматриваться как параметр термодинамического состояния системы, либо как мера средней кинетической энергии частиц вещества. Проблема теплового дискомфорта внутри помещений обусловлена физико-механическими и теплофизическими свойствами строительных материалов, включая потолочные панели, стеновые ограждения (каменные, бетонные и композитные), дверные конструкции, элементы кровли, а также их совокупное влияние на тепловой баланс зданий.

Одной из ключевых задач проектирования зданий является обеспечение оптимальных термогигиенических условий, соответствующих нормам комфорта для человека. Помимо элементов ограждающих конструкций (кровля, перекрытия, двери), существенное влияние на температурный режим помещений оказывает тепловая инерция стен, определяющая их способность аккумулировать и перераспределять тепловую энергию.

Температура объекта определяется его внутренней энергией, обусловленной кинетическим движением частиц. При тепловом контакте двух тел, состоящих из одинакового материала, теплопередача осуществляется до достижения состояния термодинамического равновесия, при котором температурный градиент стремится к нулю [2, 3].

Температурный градиент является векторной физической величиной, характеризующей интенсивность и направление изменения температуры в пространстве. Величина градиента выражается в единицах температуры ($^{\circ}\text{C}$, K) на единицу длины (м , см) и является определяющим фактором в процессах теплопередачи. Разность температур служит движущей силой теплового потока, реализуемого за счет механизмов теплопроводности, конвекции и излучения. Согласно второму началу термодинамики, передача тепла всегда осуществляется в направлении уменьшения температуры, то есть от более нагретых областей к менее нагретым.

Кроме того, температура оказывает влияние на широкий спектр физико-химических свойств материалов, включая фазовый переход, объемную плотность, коэффициенты растворимости, давление насыщенного пара и электрическую проводимость. В биологических системах строгий температурный контроль играет решающую роль, поскольку даже незначительные отклонения температуры человеческого тела от физиологической нормы ($\sim 310\text{ K}$) могут приводить к необратимым изменениям в метаболических процессах.

Настоящее исследование направлено на анализ температурного градиента стеновых конструкций зданий с учетом их геометрических и теплофизических параметров. Оценка температурных полей внутренних и внешних поверхностей стен позволит сформировать математические модели, обеспечивающие прогнозирование и оптимизацию теплового режима помещений с учетом внешних климатических условий и конструктивных особенностей зданий.

Методология и результаты

Экспериментальные данные были собраны в восьми зданиях района Нарекаци (г. Ереван). *Результаты измерений.* Для каждого из восьми зданий ежедневно измерялась толщина стены (δ) с помощью длинной измерительной линейки и полученные данные фиксировались. Температура наружных стен ($T_{нж}$) измерялась ртутным стеклянным термометром, который закреплялся на стене с помощью бумажной ленты [4, 5]. Термометр оставляли как на внешней, так и на внутренней поверхностях стены в течение шести часов. По истечении точно шести часов снимались показания температуры наружной ($T_{нж}$) и внутренней ($T_{вн}$) поверхностей стен, после чего термометр удаляли. Градиент температуры каждой стены рассчитывался по следующему уравнению:

$$\Delta T_{т.г.} = (T_{нж} - T_{вн}) \cdot \Delta \delta, \quad (1)$$

где $\Delta T_{т.г.}$ - температурный градиент, $T_{нж}$ - температура наружной плоскости стены, $T_{вн}$ - температура внутренней поверхности стены, $\Delta \delta$ - толщина стены.

Результаты, полученные для восьми различных зданий, представлены в таблице.


Таблица

Результаты измерений и рассчитанный градиент температуры

Здания	I	II	III	IV	V	VI	VII	VIII
Толщина стены, $\Delta\delta$, м	0,26	0,17	0,15	0,17	0,14	0,17	0,23	0,13
Температурный градиент, $\Delta T_{т.з.}$, °C	15,4	17,7	20,0	11,8	28,6	17,7	13,1	30,8
Температура наружной плоскости стены, $T_{нж}$, °C	36	37	38	36	39	38	35	38
Температура внутренней поверхности стены, $T_{вн}$, °C	32	34	35	34	35	35	32	34

Обсуждение

Целью данной работы было исследование зависимости температурного градиента от толщины стены как способа контроля теплового потока и передачи тепла в жилых зданиях. Результаты, представленные на рис. 1, показывают вариации температурного градиента в разных зданиях. Здание №8 имеет наибольший температурный градиент, но наименьшую толщину стены, тогда как здание №5 демонстрирует высокий температурный градиент, а здание №4 - самый низкий. Кроме того, в таблице можно наблюдать обратную зависимость между толщиной стены и температурным градиентом, которое более наглядно показано на рис. 2.

**Рис. 2. Температурный градиент по зданиям**

На рис. 1–4 представлены различные графики и диаграмма, которые объясняют взаимосвязь между различными параметрами, используемыми для регулирования температуры стен, тем самым поддерживая прохладу в помещении.




Рис. 2. Зависимость между толщиной стены и температурным градиентом




Рис. 3. График градиента температуры в зависимости от толщины стенки

На рис. 3 представлен график зависимости температурного градиента от толщины стены. График показывает, что с увеличением толщины стены тепловой градиент здания уменьшается, согласно уравнению усредняющей линии (2):

$$\Delta T = -0,0044\Delta L + 0,2634 \quad (2)$$

ΔT , представленное в (2), аналогично полученному в аналогичных исследованиях в других работах [6-8]. При увеличении толщины стен температура в помещении, как правило, становится выше, что приводит к увеличению теплопроводности.

Уменьшение толщины стены обычно увеличивает теплопередачу (значит, здание быстрее нагревается), а увеличение толщины стены снижает теплопередачу и помогает сохранить прохладу.




Рис. 4. График зависимости внутренней температуры от внешней температуры

На рис. 3 представлен график зависимости внутренней температуры от внешней. Из графика видно, что между двумя переменными существует прямая пропорциональная связь: с увеличением внешней температуры возрастает и внутренняя температура, а также увеличивается температурный градиент. Это указывает на то, что теплопроводность обратно пропорциональна температурному градиенту. Таким образом, чтобы снизить тепловые потери здания, необходимо увеличить толщину стен, что способствует росту температурного градиента. Температура стены может быть определена с учетом внутренней и внешней температур через порождающую функцию или с помощью уравнения (3):

$$T_{нж} = 0.8378 T_{вн} + 8.8324. \quad (3)$$

Аналогичное уравнение, схожее с (3) было получено в другом исследовании [9-11].

На рис. 4 представлено сравнение внешней и внутренней температур, аналогичное описанному на рис. 1, для восьми исследуемых зданий. Наблюдаемая корреляция между переменными подтверждает, что внутренняя температура пропорциональна внешней: с увеличением температуры внутри здания возрастает и температура снаружи.

В исследовании установлено, что внутренняя температура здания зависит от толщины его стен, причем температура внутри обратно пропорциональна толщине стен. Также наблюдается пропорциональное увеличение внутренней температуры с увеличением внешней. Таким образом, температура стен и температурные градиенты могут использоваться для регулирования температуры помещения, и изменение толщины стен позволяет эффективно контролировать температурный режим здания.

Закключение

Анализ градиента температуры стен в восьми различных зданиях, проведённый в данном исследовании, подтвердил, что температура внешней поверхности стены всегда выше, чем температура её внутренней поверхности. Кроме того, по мере увеличения внешней температуры ($T_{н\text{юс}}$) внутренняя температура ($T_{вн}$) также возрастает, что приводит к увеличению градиента температуры и, соответственно, снижению теплопроводности конструкций здания.

Полученные в ходе исследования параметры могут служить важными расчетными характеристиками при проектировании зданий. Их учет при возведении стен позволит эффективно регулировать внутреннюю температуру помещений, обеспечивая требуемый уровень комфорта и энергоэффективности.

Список литературы

- [1] J. Smith, L. Brown, Thermal Comfort in Modern Buildings, Academic Press., New York, 2015, 320 p.
- [2] K. Andersen, S. Petersen, Measurement of Temperature Gradients in Building Walls, De Gruyter, Berlin, 2019, 270 p
- [3] S. Kim, Heat Transfer in Building Envelopes, Hanul, Seoul, 2014, 340 p.
- [4] Ս.Կ. Քարամյան, Շենքերի ջերմատեխնիկական հարաչափերի գործիքային չափազրույթ. Ուս.մեթ.ձեռն., ՄԱԶԾ, Երևան, 2013, 55 էջ:
- [5] ՀՀՇՆ22-01-2024. Շինարարական կլիմայաբանություն. ՀՀ շինարարական նորմեր, 259 էջ:
- [6] A.N. Alyaev, Thermal Engineering Calculations of Building Enclosures, Stroyizdat, Moscow, 2012, 350 p.
- [7] A.G. Dyakonov, Fundamentals of Building Thermal Physics, Higher School Publishing, Moscow, 2015, 310 p.
- [8] N.A. Kiselev, Building Thermal Physics and Energy Saving, ASV Publishing, Moscow, 2018, 370p.
- [9] O.O. Oyebanjo, O.A. Oyebanjo, Y.O. Ogunlana, Comparison of the Thermal Properties of Some Selected Ceiling Materials for Cost Effectiveness in Nigeria, Journal of Science and Information Technology 17(1) (2022) 27–35.
- [10] N. Gesa, R.A. Atser, I. Aondoakaa, Investigation of the Thermal Insulation Properties of Selected Ceiling Materials Used in Makurdi Metropolis (Benue State, Nigeria), Local Publication, Makurdi, 2014, 45 p.
- [11] N.J. Obianwu, G.T. Akpabio, I.B. Obot, Comparison of Thermal Insulation Efficiency of Some Selected Materials Used as Ceiling in Building Design, Scholars Research Library 2(3) (2010) 253–259.

**ՇԵՆՔՈՒՄ ՄԻԿՐՈԿԼԻՄԱՅԻ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏԵՐԻ ԶԵՐՄԱՍՏԻՃԱՆԱՅԻՆ
ԳՐԱԴԻԵՆՏԻ ՉԱՓՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ**

Սերգեյ Աշոտի Մինասյան*, Տիգրան Դավիթի Մանուկյան

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք. Երևան, ՀՀ

**sergey.minasyan@yahoo.com*

Հետազոտության ընթացքում վերլուծվել է պատերի ջերմաստիճանային գրադիենտը, որպես ներքին ջերմային ռեժիմի մշտադիտարկման և կառավարման հիմնական պարամետր: Փորձնական տվյալները հավաքվել են ք. Երևանի Նարեկացի թաղամասի 8 շենքերում: Հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ ջերմաստիճանային գրադիենտը տատանվում է $13,1...30,8$ °C/մ սահմաններում: Առավելագույն արժեքը ($30,8$ °C/մ) նշագրվել է ութերորդ շենքում, նվազագույնը ($13,1$ °C/մ)՝ յոթերորդ շենքում: Հաստատվել է, որ ջերմաստիճանային գրադիենտի աճի հետ ներքին ջերմաստիճանը նվազում է, ինչը վկայում է նշված պարամետրերի միջև կոռելյացիոն կապի մասին: Շենքերի ջերմատեխնիկական բնութագրերից երևում է, որ ներքին ջերմաստիճանն ուղիղ կապված է արտաքին ջերմաստիճանի հետ, մինևույն ժամանակ ջերմաստիճանային գրադիենտը հակադարձ հարաբերական է պատերի նյութերի ջերմահաղորդականությանը: Վերջինս բնորոշում է շենքի կոնստրուկցիոն տարրերի և արտաքին միջավայրի միջև ջերմափոխանցման ինտենսիվությունը: Հավաքված տվյալների հիման վրա մշակվել են ջերմաֆիզիկական մաթեմատիկական մոդելներ, որոնք թույլ են տալիս քանակական առումով նկարագրել շենքի պատերի ջերմահաղորդականության օրինաչափությունները: Գրաֆիկական վերլուծության միջոցով ստացված հավասարումները կարող են օգտագործվել ջերմատեխնիկական հաշվարկներում և շենքերի նախագծման գործընթացում, որպեսզի ապահովվի ներքին ջերմային ռեժիմի օպտիմալացումը՝ համապատասխանելով նորմատիվային պահանջներին: Հետազոտության արդյունքները հաստատում են արտաքին և ներքին ջերմային բեռնվածությունների, նաև պատերի ջերմաստիճանային գրադիենտի ընդհանուր հաշվառման անհրաժեշտությունը՝ շենքերի ներքին միկրոկլիմայի կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով:

Բանալի բառեր. ջերմաստիճան, ջերմաստիճանի գրադիենտ, ջերմահաղորդականություն, ջերմային ճառագայթում, միկրոկլիմա

CONTROL OF MICROCLIMATE IN A BUILDING BY MEASURING THE TEMPERATURE GRADIENT OF WALLS

Sergey Minasyan*, Tigran Manukyan

National University of Architecture and Construction of Armenia, Yerevan, RA

**sergey.minasyan@yahoo.com*

In this study, the temperature gradient of walls was analyzed as a parameter for monitoring and controlling the internal temperature of rooms. Experimental data were collected in eight buildings in the Narekatsi district (Yerevan). The measurement results showed that the temperature gradient varies in the range from 13.1°C/m to 30.8°C/m. The maximum value (30.8°C/m) was recorded in the eighth building, while the minimum (13.1°C/m) was in the seventh. It was established that a higher temperature gradient correlates with lower values of internal temperature. Analysis of the relationships between temperature regime parameters revealed that the internal temperature of rooms linearly depends on the external temperature, while the temperature gradient is inversely proportional to the thermal conductivity coefficient, which determines the intensity of heat exchange between the structural elements of the building and the environment. Based on the obtained data, thermal mathematical models were developed that describe the thermodynamic characteristics of the building envelope structures. The derived equations, obtained by methods of graphical analysis, can be used as calculation parameters in building design, allowing the optimization of the internal temperature regime in accordance with regulatory requirements. The results of the study confirm the need for a comprehensive accounting of external and internal temperature loads, as well as the temperature gradient of walls to improve the efficiency of managing microclimatic conditions inside rooms.

Keywords: *temperature, temperature gradient, thermal conductivity, heat radiation, microclimate*

Մինասյան Սերգեյ Աշոտի, տ.գ.դ., պրոֆեսոր (ՀՀ, ք. Երևան) – ՃՀՀԱՀ, ՋԳՄՕ ամբիոն, (+374)91408689, sergey.minasyan@yahoo.com, **Մանուկյան Տիգրան Դավիթի** (ՀՀ, ք. Երևան) – ՃՀՀԱՀ, ՋԳՄՕ ամբիոն, հայցորդ, (+374)33373708, myan_tigran@mail.ru

Минасян Сергей Ашотович, д.т.н., профессор (РА, г. Ереван) - НУАКА, кафедра Теплогазоснабжения и вентиляции, (+374)91408689, sergey.minasyan@yahoo.com, **Манукян Тигран Давидович** (РА, г. Ереван) - НУАКА, кафедра Теплогазоснабжения и вентиляции, соискатель, (+374)33373708, myan_tigran@mail.ru
Minasyan Sergey, D.Sc., Professor (RA, Yerevan) - NUACA, Chair of ventilation, gas and heat supply, (+374)98429265, sergey.minasyan@yahoo.com, **Manukyan Tigran** (RA, Yerevan) - NUACA, Chair of ventilation, gas and heat supply, PHD student, (+374)33373708, myan_tigran@mail.ru

Ներկայացվել է՝ 30.04. 2025թ.

Գրախոսվել է՝ 26.05.2025թ.

Ընդունվել է տպագրության՝ 29.08.2025թ.

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԿԵՐՊԱՐԻ ԲԱԶՄԱՇԵՐՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԱ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԵՎ ՂՈՒԿԱՍ ՉՈՒԲԱՐՅԱՆԻ ՔԱՆԴԱԿՆԵՐՈՒՄ

Նարե Թաթուլի Նադարյան

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք. Երևան, ՀՀ
nare.nadaryan11@gmail.com

Հոդվածում ներկայացված է հայ դասական երաժշտարվեստի հիմնադիր, կոմպոզիտոր, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Ալեքսանդր Սպենդիարյանի կերպարի բազմաշերտ վերլուծությունը՝ հիմնվելով ԽՍՀՄ գեղարվեստի ակադեմիայի ակադեմիկոս Արա Սարգսյանի և ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ Ղուկաս Չոբարյանի քանդակագործական մեկնաբանությունների համեմատական ուսումնասիրության վրա: Հետազոտությունը ցույց է տալիս, որ Ա. Սարգսյանի ստեղծագործություններում գերակշռում է ռեալիստական մոտեցումը՝ կենտրոնանալով կերպարի ֆիզիկական և հոգեբանական բնութագրերի ճշգրիտ վերարտադրման վրա: Մինչդեռ Ղ. Չոբարյանի աշխատանքներում առկա է սիմվոլիկ մեկնաբանություն, որն ընդգծում է կոմպոզիտորի ստեղծագործական էության խորհրդանշական վերամարմնավորումը: Հոդվածը կարող է հիմք հանդիսանալ արվեստաբանության, ինչպես նաև դիզայնի ոլորտում մշակութային խորհրդանիշների ստեղծման և պատկերագրական լուծումների զարգացման համար:

Բանալի բառեր. Ալեքսանդր Սպենդիարյան, Արա Սարգսյան, Ղուկաս Չոբարյան, քանդակ, կերպարային վերլուծություն, հուշարձան, ռեալիզմ

Ներածություն

Ալեքսանդր Սպենդիարյանը, որպես ազգային երաժշտարվեստի խոշորագույն ներկայացուցիչ, մշտապես եղել է արվեստագետների հետաքրքրությունների կենտրոնում [1]: Նրա երաժշտական ժառանգությունը ոգեշնչել է բազմաթիվ նկարիչների և քանդակագործների, որոնք փորձել են իրենց արվեստի լեզվով ներկայացնել Ա. Սպենդիարյանի մտավոր և ստեղծագործական ներաշխարհը: Արա Սարգսյանը և Ղուկաս Չոբարյանը տարբեր տարիներին անդրադարձել են նրա կերպարին՝ ստեղծելով աշխատանքներ, որոնք բացահայտում են Ա. Սպենդիարյանի կերպարի հոգեբանական, խորհրդանշական և մշակութային շերտերը: Այս հոդվածում քննվում են արվեստագետների քանդակները՝ ձևաբանական և բովանդակային համատեքստում:

Նյութեր և մեթոդներ

Ուսումնասիրության նյութ են կազմում Ալեքսանդր Սպենդիարյանի քանդակագործական պատկերումները՝ Արա Սարգսյանի 1937 թ. բրոնզե դիմաքանդակը, Ղուկաս Չոբարյանի 1971 թ. մարմարե դիմաքանդակը, ինչպես նաև նրանց համատեղ ստեղծած 1957 թ. հուշարձանային

հորինվածքը: Այս ստեղծագործությունները բացահայտում են Ա. Սպենդիարյանի կերպարի բազմաշերտությունն ու տարբեր արվեստագետների մեկնաբանությունները:

Հոդվածի մեթոդաբանությունը ձևավորվել է երկու հիմնական սկզբունքով.

- ոճական համեմատություն՝ բացահայտելու, թե ինչպես են նույն կերպարի մեջ արտացոլվում ռեալիզմի և սիմվոլիզմի տարրերը,
- պատմամշակութային վերլուծություն՝ հասկանալու համար, թե ինչպես է Ա. Սպենդիարյանի կերպարը վերափոխվում տարբեր ժամանակաշրջաններում:

Աշխատանքում օգտագործված են ինչպես տեղական, այնպես էլ միջազգային արվեստագիտական աղբյուրներ, մասնավորապես, Վ. Հարությունյանի «Արա Սարգսյան» [2], Մ. Երզնկյանի «Հոդվածներ արվեստի մասին» աշխատանքները [3], ինչպես նաև միջազգային հեղինակների ուսումնասիրությունները: Ուսումնասիրության համար նյութ են ծառայել նաև Արա Սարգսյանի և Հակոբ Կոջոյանի տուն-թանգարանի արխիվում պահպանվող համապատասխան վավերագրերը [4]: Այս աղբյուրներն ապահովում են համատեքստային համադրություն և տեսական հենք, ինչը կարևոր է համեմատական վերլուծության լիարժեքության համար: Ուսումնասիրությունը հիմնված է կերպարագիտական և համեմատական մեթոդների վրա՝ ներառյալ կերպարային վերլուծության սկզբունքները:

Ուսումնասիրությունը սահմանափակվում է նշված քանդակագործների որոշակի ստեղծագործություններով և դրանց ընկալման վերլուծությամբ: Միևնույն ժամանակ, արդյունքները կարող են ծառայել որպես տեսական հիմք հայկական կերպարվեստի և դիզայնի ոլորտում մշակութային խորհրդանիշների ձևավորման և զարգացման հետազոտությունների համար:

Արվեստագիտական ուսումնասիրություններում ձևաբանական և կերպարագիտական մոտեցումների համադրումը դիտվում է որպես արդի մեթոդաբանական ուղղություն [5]:

Արդյունքներ և քննարկում

Արա Սարգսյանը Ա. Սպենդիարյանի կերպարին անդրադարձել է մի քանի դիմաքանդակներում, որոնցից առավել հայտնի է 1937 թ. ստեղծված բրոնզե տարբերակը (նկ. 1): Նյութի ընտրությունն այստեղ ոչ պակաս կարևոր է, քան հորինվածքային լուծումները: Դ.Վ. Թումփսոնի դիտարկմամբ, նյութի մշակման տեխնիկան և դրա կիրառման եղանակները կարող են ոչ միայն տեխնիկական, այլև գաղափարային բովանդակություն հաղորդել գեղարվեստական ստեղծագործությանը [6]: Այս տեսակետը համահունչ է նաև Է. Շանքենի մոտեցմանը, ըստ որի՝ նյութը և մեղիան արվեստում ոչ միայն կատարում են գործառնության դեր, այլև ձևավորում են կերպարի ընկալման խորքային շերտեր [7]: Այս համատեքստում բրոնզի կիրառությունն Ա. Սպենդիարյանի դիմաքանդակում ուժեղացնում է կերպարի հաստատակամության և մտավոր լարվածության ընկալումը:



Նկ. 1. Արա Սարգսյան, Ալեքսանդր Սպենդիարյան, 1937, բրոնզ

Քանդակագործը շեշտադրել է կերպարի հոգեբանական լարվածությունը, մտավոր կենտրոնացումը և ստեղծագործական ներուժը: Դիմագծերի մանրակրկիտ մշակումն արտահայտում է ուժեղ կամային բնավորություն, որը բնորոշ է Ա. Սպենդիարյանի գործունեությանը: Դիմաքանդակում արտահայտված է այն եզակին և մասնավորը, որը հատուկ է միայն Ա. Սպենդիարյանին, կազմում է նրա էությունը, տարբերում նրան մյուս մարդկանցից: Այդ ամենն այն արդյունքն է, որ Ա. Սարգսյանը ճանաչում էր Ա. Սպենդիարյան մարդուն և կոմպոզիտորին: Քանդակագործը մեծ կոմպոզիտորի կյանքի վերջին տարիներին պարբերաբար հանդիպել է նրա հետ և նույնիսկ մտերմացել: Շփումների ընթացքում քանդակագործի հիշողության մեջ տպավորվել էին Ա. Սպենդիարյանի դիմագծերը և շարժումները: Վարպետը 1928 թ. հանել է նաև Ա. Սպենդիարյանի մահադիմակն ու աջ ձեռքը (բրոնզ):

Իսկ Ղուկաս Չուբարյանը Ա. Սպենդիարյանի կերպարին մոտեցել է այլ գեղագիտական դիրքերից: Նրա մարմարե քանդակը (1971 թ., նկ. 2), տեղադրված երաժշտական դպրոցի առջև, ընդգծում է կերպարի ներքին հանգստությունն ու խորհրդավորությունը: Լ. Պետրոսյանը, անդրադառնալով արվեստում նյութերի օգտագործման մշակույթին, ընդգծում է, որ նյութի ընտրությունը և դրա կառուցվածքը կարող են ուղղակիորեն ազդել կերպարի ընկալման վրա [8]: Այդ իմաստով մարմարի զուսպ փայլը և սառը հանգիստ մակերևույթը նպաստում են Ա. Սպենդիարյանի կերպարի սիմվոլիկ ընկալմանը: Դ. Չուբարյանը ներկայացրել է մի մեծանուն կոմպոզիտորի, ով ունի բովանդակային՝ մտավոր և հոգևոր հարուստ կենսագրություն [3]: Քանդակագործը կոմպոզիտորի գլուխը պատկերել է փոքր-ինչ վեր հանած դիրքով, ինչն էլ կերպարին ներքին դինամիկա է հաղորդել: Դ. Չուբարյանը կարողացել է տեսնել ու արտահայտել Ա. Սպենդիարյանի ապրած տարիների ամփոփ նկարագիրը:



Նկ. 2. Ղուկաս Չուբարյան, Ալեքսանդր Սպենդիարյան, 1971, մարմար

Հատուկ ուշադրության են արժանի 1957 թ. նոյեմբերի 17-ին Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնի մոտ միաժամանակ տեղադրված Ա. Սպենդիարյանի և Հ. Թումանյանի հուշարձանները:

1953 թ. Երևանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեն հայտարարում է մրցույթ՝ Ա. Սպենդիարյանի և Հ. Թումանյանի հուշարձանների համար: Այս երկու հուշարձանները ստեղծելու որոշումը միաժամանակ է ընդունվել: Նման ընտրությունը պատահական չէր. Հ. Թումանյանի և Ա. Սպենդիարյանի հանդիպումը հայ ժողովրդին տվել է ազգային օպերայի առաջին գլուխգործոցը՝ «Ալմաստը», որը մեծ կոմպոզիտորը գրել է ըստ ամենայն հայոց մեծ բանաստեղծի «Թմբկաբերդի առումը» պոեմի: Տեղին է հիշել, որ հենց այս ստեղծագործությամբ (1933 թ.) է կայացել Օպերային թատրոնի բացումը: Երբաղխորհրդի գործկոմի 1953 թ. որոշմամբ հուշարձանի վերջնական տարբերակը համատեղ մշակելու համար որպես հիմք ընդունվել է երկու խորհրդանշական անվանումներ ունեցող նախագիծ՝ Ա. Սարգսյանի ու ճարտարապետ Գ. Աղաբաբյանի «Ալմաստ» (Սպենդիարյանի օպերան է՝ 4 գործողությամբ) կարգախոսով նախագիծը և քանդակագործ Ղ. Չուբարյանի ու ճարտարապետ Ֆ. Դարբինյանի «Երեք արմավենի» (կոմպոզիտորի գրած սիմֆոնիկ պատկերն է՝ ըստ Միխայիլ Լեբունտովի համանուն բանաստեղծության) նախագիծը: Այս առիթով Ա. Սարգսյանը նամակ է գրել Երևանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի նախագահ Վազիրիկ Մեկոյանին. «Ձեր առաջարկության առթիվ հայտնում եմ իմ համաձայնությունն աշխատակցելու կոմպոզիտոր Սպենդիարյանի հուշարձանի քանդակման և կառուցման աշխատանքների կապակցությամբ, կոնկուրսին մասնակցելու «Երեք արմավենիներ» պրոյեկտի հեղինակների հետ» [9]:

Մրցույթի արդյունքում Ա. Սարգսյանն ու նրա նախկին ուսանող, քանդակագործ Ղ. Չուբարյանը ստացան արձանի վրա աշխատելու հավասար իրավունքներ:

Այդ մրցույթին հաջորդած չորս տարիների ընթացքում քանդակագործները միասին աշխատել են Ա. Սպենդիարյանի արձանի վրա՝ իրագործելով մտահղացումների լավագույն կողմերը, իսկ Ա. Սարգսյանը միայնակ շարունակել է աշխատանքը Հ. Թումանյանի արձանի հետ:

Ա. Սպենդիարյանի հուշարձանը կառուցված է բրոնզից, իսկ պատվանդանը՝ Բջնիի շագանակագույն-վարդագույն մարմարից (բարձրությունը պատվանդանով 8,5 մ է, (նկ. 3):



Նկ. 3. Արա Սարգսյան, Ղուկաս Չուբարյան, Ալեքսանդր Սպենդիարյանի հուշարձանը, 1957, բրոնզ

Ա. Սպենդիարյանի արձանը մտահղացված ու քանդակված է ստեղծագործական տոգորման պահին՝ ամբողջովին երաժշտությամբ կլանված, ունի հոսուն գծեր, որոնք ոչ միայն նպաստում են ընդհանուր երաժշտական տրամադրության դրսևորմանը, այլև, կարծես, քանդակը հավաքում են մի ամփոփ «շրջանակի» մեջ և չեն թողնում, որ կոմպոզիտորն երես առ երես առնչվի դիտողի հետ, դուրս գա իր ստեղծագործական մեկուսացումից: Նա դիտողի հետ ակտիվ փոխհարաբերության մեջ չի մտնում, բայց վարակում է իր տրամադրությամբ և դրա շնորհիվ ընկալվում ակտիվ ու անմիջականորեն [10]: Ֆիգուրի դասական համաչափ լուծումներն ու հոսուն գծերն ապահովում են ներդաշնակ կապ ինչպես շրջակա ճարտարապետական միջավայրի, այնպես էլ գաղափարական բովանդակության հետ [11]:

Ինչպես նշել է արվեստի տեսաբան Է. Պանոֆսկին, կերպարների վերլուծությունն արվեստում պահանջում է միաժամանակ կառուցվածքային, սիմվոլիկ և մշակութաբանական դիտարկում [12]: Այդ տեսանկյունից, Ա. Սարգսյանի և Ղ. Չուբարյանի քանդակները ներկայացնում են ոչ միայն գեղարվեստական ձևաչափ, այլ նաև գաղափարական համակարգ՝ արտահայտված նյութի ընտրությամբ, դիրքով, լուծությամբ և շարժման դինամիկայով:

Լ. Երվանդյանի դիտարկմամբ՝ նրանց համատեղ աշխատանքը վկայում է հեղինակային մտածողությունների փոխհամադրության և մեկնաբանությունների ամբողջականացման ունակության մասին, ինչը համահունչ է Ա. Սպենդիարյանի կերպարի բազմաշերտությանը [13]:

Այսպիսով, բոլորաքանդակը, այն էլ բազմոցին թիկնած վիճակում, միշտ էլ եղել է քանդակագործական դժվար խնդիրներից մեկը, և բոլոր անվանի քանդակագործները չէ, որ հաղթահարել են այդ խնդիրը: Ա. Սարգսյանի և Ղ. Չուբարյանի աշխատանքը դիտողին հնարավորություն է տալիս տարբեր դիտանկյուններից դիտել քանդակը: Վերջինիս շուրջը պտտվելու, տարբեր դիր-

քերից դիտելու շնորհիվ առաջանում են զանազան տպավորություններ: Արվեստագետները հետաքրքիր կերպար են ստեղծել. պատկերվողի արտաքին, ֆիզիկական տեսքի մեջ կարողացել են ներդնել մտորող, խոհուն, կյանքի իմաստությունն ըմբռնած անվանի կոմպոզիտորի ներաշխարհը: Այդ տեսանկյունից Ա. Սարգսյանի և Ղ. Չուբարյանի քանդակները ներկայացնում են ոչ միայն գեղարվեստական լուծումներ, այլև պատկերագրական և գաղափարական համակարգեր:

Եզրակացություն

Ա. Սարգսյանի և Ղ. Չուբարյանի գործերում ակնհայտ է երկու տարբեր մտածողությունների և գեղարվեստական մոտեցումների հանդիպումը: Ա. Սարգսյանը քանդակագործության մեջ ավելի շատ կենտրոնացել է ֆիզիկական բնույթի, հստակ դիմագծերի և հոգեբանական պլաստիկայի վրա, մինչդեռ Ղ. Չուբարյանն իր արձաններում տվել է խորհրդանշական և հուզական մեկնաբանություններ: Նրանց համատեղ ստեղծագործությունը վեր է հասնում անհատական մոտեցումների սահմանները՝ ձևավորելով համահայկական կերպարային համակարգ, որտեղ Ա. Սպենդիարյանը հանդես է գալիս ոչ միայն որպես անհատ, այլ նաև որպես մշակութային հիշողության կրող:

Այս ուսումնասիրության գիտական նորույթը կայանում է նրանում, որ անդրադարձ է կատարվում ոչ միայն քանդակագործական տեխնիկական լուծումներին, այլև կերպարային մեկնաբանության մեթոդաբանությանը:

Ա. Սպենդիարյանի կերպարի քանդակագործական մեկնաբանությունների ուսումնասիրությունը կարևոր ներդրում է հայ կերպարվեստի մեջ: Մինչ այժմ հիմնականում արվել են ձևաբանական կամ պատմական նկարագրություններ, սակայն համեմատական վերլուծությունն Ա. Սարգսյանի և Ղ. Չուբարյանի գործերի միջև թույլ է տալիս տեսնել, թե ինչպես է միևնույն կերպարը, անցնելով տարբեր քանդակագործների ձեռքերով, ձեռք բերում նոր իմաստներ: Սա ոչ միայն քանդակագործության պատմության, այլև մշակութային ժառանգության ընկալման կարևոր դաս է:

Գրականության ցանկ

- [1] **Ն. Ավետիսյան**, Ալեքսանդր Սպենդիարյանը և ժամանակը (հոգվածների և Սպենդիարյանին նվիրված գիտաժողովի զեկուցումների ժողովածու), Երևան, 2011, 5 էջ:
- [2] **Վ. Հարությունյան**, Արա Սարգսյան, Երևան, 1982, 15 էջ:
- [3] **Մ. Երզնկյան**, Հոգվածներ արվեստի մասին, Երևան, 2016, 146 էջ:
- [4] Քաղվածք Երևանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի 11.03.1953 թ. նիստի «Ալեքսանդր Սպենդիարյանի հուշարձանը կառուցելու» մասին թիվ 4/226 արձանագրությունից: Արա Սարգսյանի և Հակոբ Կոչոյանի տուն-թանգարանի պահոց:
- [5] **H. Borgdorff**, The Conflict of the Faculties: Perspectives on Artistic Research and Academia, Leiden University Press, 2012, 12 p.
- [6] **D. Thompson**, The Materials and Techniques of Medieval Painting. Mineola, NY, 2012, 11 p.
- [7] **A. Shanken**, Art and Electronic Media, Phaidon Press, 2014, 5 p.

- [8] **Լ. Պետրոսյան**, Նյութերն ու տեխնոլոգիաները որմնանկարային գրաֆիկայում 20–21-րդ դարերում, ՃՇՀԱՀ Գիտական աշխատություններ 1(91) (2025) 106–115:
- [9] Արա Սարգսյանի գրված 05.07.1953թ. նամակը՝ Վ. Սեկոյանին: Արա Սարգսյանի և Հակոբ Կոջոյանի տուն-թանգարանի պահոց:
- [10] **Վ. Հարությունյան**, Արա Սարգսյան, Երևան, 1975, 90 էջ:
- [11] **Ա. Աղասյան**, Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում, Երևան, 2009, 121 էջ:
- [12] **Е. Panofsky**, Meaning in the Visual Arts. University of Chicago Press, 1982, 25 p.
- [13] **Լ. Երվանդյան**, Արա Սարգսյան և Դուկաս Չոբարյան. Համատեղ գեղարվեստական նախագծերի քննություն. Հայ արվեստագիտություն 2(17) (2005) 55–64:

МНОГОСЛОЙНОСТЬ ОБРАЗА АЛЕКСАНДРА СПЕНДИАРЯНА В СКУЛЬПТУРАХ АРА САРГСЯНА И ГУКАСА ЧУБАРИЯНА

Наре Татуловна Надарян

Национальный университет архитектуры и строительства Армении, г. Ереван, РА
nare.nadaryan11@gmail.com

В статье рассматривается многослойность образа Александра Спендиаряна в скульптурных интерпретациях Ара Саргсяна и Гукаса Чубаряна. Анализируются художественные решения, стилевые особенности и различные подходы к передаче образа. Отмечается, что у А.Саргсяна преобладает реалистическая и психологическая детализация, тогда как у Г.Чубаряна акцентируется символизм и духовное восприятие. Также затрагивается их совместная работа над памятником, демонстрирующая объединение двух подходов в создании целостного образа А.Спендиаряна. Это исследование может служить основой для дальнейших работ в области искусствоведения, дизайна и культурологии.

Ключевые слова: Александр Спендиарян, Ара Саргсян, Гукас Чубарян, скульптура, анализ образа, реализм, символизм

THE MULTILAYERED IMAGE OF SPENDIARYAN IN THE SCULPTURES OF ARA SARGSYAN AND GHUKAS CHUBARYAN

Nare Nadaryan

National University of Architecture and Construction of Armenia, Yerevan, RA
nare.nadaryan11@gmail.com

This article explores the multilayered image of Alexander Spendiaryan in the sculptural interpretations of Ara Sargsyan and Ghukas Chubaryan. It analyzes the artistic approaches, stylistic features, and different methods of portraying the figure. The study highlights the dominance of realistic and psychological precision in Sargsyan's work, while Chubaryan's approach emphasizes symbolism and spiritual expression. The article

also examines their collaborative monument, which synthesizes both perspectives into a comprehensive representation of Spendaryan. These findings can serve as a foundation for further studies in art criticism, design, and cultural research.

Keywords: Alexander Spendaryan, Ara Sargsyan, Ghukas Chubaryan, sculpture, image analysis, realism, symbolism

Նադարյան Նարե Թաթուլի, արվ. թեկն. (ՀՀ, ք. Երևան) – ՃՇՀԱՀ, Դիզայնի ամբիոն, դասախոս,
(+374)98880339, nare.nadaryan11@gmail.com

Надарян Наре Татуловна, канд.искус. (РА, г. Ереван) - НУАКА, кафедра Дизайна, преподаватель,
(+374)98880339, nare.nadaryan11@gmail.com

Nadaryan Nare, PhD in Art history (RA, Yerevan) - NUACA, department of Design, lecturer, (+374)98880339,
nare.nadaryan11@gmail.com

Ներկայացվել է՝ 30.06.2025թ.

Գրախոսվել է՝ 18.07.2025թ.

Ընդունվել է տպագրության՝ 29.08.2025թ.

**ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՎԱԾՔԻ ԱՄԲՈՂՋ ԽՈՐՈՒԹՅԱՄԲ ՎԵՐԱՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅՈՒՄ ՓՐՓՐԱԲԵՏՈՒՄԻ ԵՎ ՑԵՄԵՆՏԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Խաչիկ Միմոնի Չքոլյան

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք. Երևան, ՀՀ

xachik.chqolyan@mail.ru

Հետազոտական աշխատանքի վերլուծության մեջ ներկայացվում է ճանապարհային պատվածքի ամբողջ խորությամբ վերաօգտագործման (Full-Depth Reclamation, FDR) տեխնոլոգիայի կիրառումը Հայաստանի Հանրապետությունում՝ կենտրոնանալով փրփրաբխտումի և ցեմենտի օգտագործման վրա: Հետազոտությունը նպատակ ունի ուսումնասիրել օգտագործվող հավելանյութերի ֆիզիկամեխանիկական և քիմիական հատկությունները, նյութերի դիմադրությունը կլիմայի և դինամիկ բեռների ազդեցության տակ, ինչպես նաև զնահատել այս նյութերի արդյունավետությունը և տնտեսական առավելությունները, հիմնված Հայաստանի Հանրապետության պաշտոնական տվյալների վրա:

Բանալի բառեր. *ասֆալտբետոն, ամբողջ խորությամբ վերաօգտագործում, փրփրաբխտում, ցեմենտ, հավելանյութեր*

Ներածություն

Հայաստանի ճանապարհային ցանցը, որի մեծ մասը կազմված է ասֆալտբետոնային ծածկով ճանապարհներից, կարևոր դեր է խաղում երկրի տնտեսական և սոցիալական զարգացման գործում: Շատ ճանապարհներ, կառուցված 20...30 տարի առաջ, պահանջում են հիմնանորոգում, կապված մաշվածության, ծանր բեռների և կլիմայական գործոնների հետ: Վերանորոգման ծախսերի աճը, նյութերի գների բարձրացումը և բնապահպանական խնդիրները խթանում են նորարարական տեխնոլոգիաների կիրառումը, ինչպիսին է ամբողջ խորությամբ վերաօգտագործումը (FDR): Համեմատած ոչ կոշտ ճանապարհային պատվածքների վերականգնման այլ տեխնոլոգիաների հետ, ամբողջ խորությամբ վերաօգտագործման տեխնոլոգիայի կիրառման ժամանակ զգալիորեն նվազեցվում են նոր հավելանյութերի ներմուծումները, էներգիայի ծախսը և դեպի մթնոլորտ վնասակար արտանետումները: Կառուցվածքային տեսակետից ոչ կոշտ պատվածքների վերականգնման ամբողջ խորությամբ վերաօգտագործման տեխնոլոգիան հնարավորություն է տալիս լիովին վերացնել ճանապարհածածկի վրա անվահետքերի (rutting) և արտացոլվող ճաքառաջացման (reflective cracking) հետ կապված բոլոր հիմնախնդիրները: Գոյություն ունեցող ասֆալտբետոնի և ստորև տեղադրված շերտերի մանրացումը թույլ է տալիս ստանալ պատվածքի հատիկային շերտ, որը կարող է օգտագործվել ինչպես առանց հավելանյութերի կիրառման, այնպես էլ կայունացնող հավելանյութերով: Խառնուրդի մեջ կայունացնող

հավելանյութերի ավելացման կարիք սովորաբար լինում է այն դեպքերում, երբ մանրացված նյութը չի ունենում անհրաժեշտ մեխանիկական բնութագրեր և կառուցվածքային ամրություն դիմագրավելու համար սպասվող արտաքին բեռնվածքներին: Բազմաթիվ հետազոտություններ են իրականացվել ամբողջ խորությամբ վերաօգտագործման տեխնոլոգիայով վերականգնված ճանապարհային պատվածքների շերտերի կոշտության բարձրացման ուղղությամբ: Դրա համար խառնուրդի մեջ հեղուկ կամ պինդ ձևով կարող են ներմուծվել տարբեր տիպի հավելանյութեր, որոնցից են կալցիումի և մագնեզիումի քլորիդները, կիրը (հանգած և չհանգած), ցեմենտի կամ կրի վառարանների փոշին, պորտլանդցեմենտը (չոր և հեղուկ), բիտումային էմուլսիան (նորմալ և պոլիմերային), փրփրեցված բիտումը: Հնարավոր է նաև երկու և ավել հավելանյութերի համալիր կիրառում: Ըստ Բեհնհուդի, սառը վերաօգտագործվող խառնուրդի բնութագրերի վրա որոշիչ ազդեցություն է ունենում հավելանյութի տիպը: Առավել տարածված հավելանյութերից է պորտլանդ ցեմենտը, որը կիրառություն է ստացել նաև ՀՀ-ում: Վերջին ժամանակներս բազմաթիվ հետազոտություններ են կատարվել ուսումնասիրելու համար ցեմենտով և բիտումային էմուլսիայով մշակված սառը խառնուրդների առաձգականության մոդուլները՝ վերականգնված հիմքի բավարար կոշտության հասնելու համար [1-3]: Հետազոտությունները վերլուծել են ցեմենտի և բիտումի համակցված կիրառումը պատրաստված նյութերի մեխանիկական հատկությունների վրա ամրացման պայմանների՝ ջերմաստիճանի և խոնավության ազդեցությունը: Ի հակադրություն միայն ցեմենտի կամ ցեմենտի և բիտումի փոքր քանակությամբ խառնուրդների, նոր տաք ասֆալտբետոնային խառնուրդներն ավելի ցածր դիմադրություն են ցուցաբերում կրկնվող բեռնվածքների նկատմամբ: Սառը վերամշակվող խառնուրդներում ցեմենտի պարունակության բարձրացումը 1 % -ից մինչև 2,5 % դրականորեն է ազդում մեխանիկական հատկությունների երկարաժամկետ կայունության վրա: Ցեմենտի և բիտումային էմուլսիայի տարբեր համամասնությունների ազդեցության վերլուծությունը ցույց է տվել, որ բարձր տոկոսային պարունակությամբ հավելանյութերի և երկարատև ամրացման դեպքում, շերտի դինամիկ մոդուլը զգալիորեն բարելավվում է [4-6]: Որոշ գիտնականներ՝ Ջոլե Օլիվերան, Ուգո Սիլվան, Անաբելա Մարեինսը և այլոք, ուսումնասիրել են քայքայված ճանապարհային հատված, որը փորձել են վերականգնել ամբողջ խորությամբ վերականգնման տեխնոլոգիայի միջոցով՝ ցեմենտի փոխարեն օգտագործել են փրփրաբիտում: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ փրփրաբիտումի վերամշակումը ցուրտ տեղանքում մի քանի առավելություն ունի, համեմատած այլ նյութերի, օրինակ էմուլսիա կամ ցեմենտ [7, 8]:

Փրփրաբիտումը և ցեմենտը լայնորեն օգտագործվում են որպես կայունացնող նյութեր FDR-ի գործընթացում շնորհիվ իրենց ֆիզիկամեխանիկական հատկությունների: Այս նյութերի օգտագործումը թույլ է տալիս ոչ միայն բարելավել ճանապարհների որակը, այլև նվազեցնել բնապահպանական ազդեցությունը՝ նպաստելով կայուն զարգացմանը: Սույն հոդվածը նպատակ ունի ուսումնասիրել և վերլուծել փրփրաբիտումի և ցեմենտի ֆիզիկամեխանիկական և քիմիական հատկությունները, ինչպես նաև կիրառման առանձնահատկությունները Հայաստանում:

նի Հանրապետության պայմաններում՝ հաշվի առնելով տեղական կլիմայական, երկրաբանական և տնտեսական գործոնները: Հետազոտությունը նաև ուսումնասիրում է FDR տեխնոլոգիայի միջազգային փորձը և դրա օգտագործման հնարավորությունները Հայաստանի ճանապարհաշինության մեջ, ինչպես նաև իրականացվում են ֆինանսական հաշվարկներ, հիմնված Հայաստանի պաշտոնական տվյալների վրա:

Նյութեր և մեթոդներ

Պատվածքի ամբողջ խորությամբ վերաօգտագործման տեխնոլոգիա: Ամբողջ խորությամբ վերաօգտագործման (full depth reclamation) տեխնոլոգիան ճանապարհային պատվածքի համալիր վերականգնման մեթոդ է, որի դեպքում գոյություն ունեցող պատվածքը՝ ասֆալտբետոնային ծածկը և հիմքը, երբեմն նաև լրացուցիչ հիմքն ու հիմնատակի շերտերը որոշակի սահմանված խորությամբ, հավասարաչափ մանրացվում և խառնվում են՝ ստանալով համասեռ ամուր հիմքի նյութ:

Գործընթացը բաժանվում է երեք փուլի:

- **Մանրացում:** Ամբողջ խորությամբ վերաօգտագործումն ամբողջությամբ իրականացվում է աշխատատեղում՝ առանց ջերմային ազդեցության կիրառման: Կիրառվում են վերամշակող մեքենաներ (օրինակ՝ Wirtgen WR 2500), մշակման շերտի խորությունը, կախված գոյություն ունեցող ճանապարհային պատվածքի կոնստրուկցիայից, կարող է փոփոխվել 100...300 մմ/սահմաններում: Համեմատած ոչ կոշտ ճանապարհային պատվածքների վերականգնման այլ տեխնոլոգիաների հետ, ամբողջ խորությամբ վերաօգտագործման տեխնոլոգիայի կիրառման դեպքում զգալիորեն նվազեցվում են նոր լրանյութերի ներմուծումները, եներգիայի ծախսը և դեպի մթնոլորտ վնասակար արտանետումները: Կառուցվածքային տեսակետից ոչ կոշտ պատվածքների վերականգնման ամբողջ խորությամբ վերաօգտագործման տեխնոլոգիան հնարավորություն է տալիս լիովին վերացնել ճանապարհածածկի վրա անվահետքերի (rutting) և արտացոլվող ճաքառաջացման (reflective cracking) հետ կապված բոլոր հիմնախնդիրները: Գոյություն ունեցող ասֆալտբետոնի և ստորև տեղադրված շերտերի մանրացումը թույլ է տալիս ստանալ պատվածքի հատիկային շերտ, որը կարող է օգտագործվել ինչպես առանց հավելանյութերի կիրառման, այնպես էլ կայունացնող հավելանյութերով [9]:

- **Խառնում:** Խառնուրդի մեջ կայունացնող հավելանյութերի ավելացման կարիք սովորաբար լինում է այն դեպքերում, երբ մանրացված նյութը չի ունենում անհրաժեշտ մեխանիկական բնութագրեր և կառուցվածքային ամրություն՝ դիմագրավելու համար սպասվող արտաքին բեռնվածքներին: Բազմաթիվ հետազոտություններ են իրականացվել ամբողջ խորությամբ վերաօգտագործման տեխնոլոգիայով վերականգնված ճանապարհային պատվածքների շերտերի կոշտության բարձրացման ուղղությամբ: Դրա համար խառնուրդի մեջ հեղուկ կամ պինդ ձևով կարող են ներմուծվել տարբեր տիպի հավելանյութեր, որոնցից են՝ փրփրաբխտումը (1,5...3,0 %) և ցեմենտը (2...5 %), որոնք ներարկվում են խառնիչի միջոցով՝ ապահովելով միատեսակ բաշխում [10, 11]:

• **Խտացում և ծածկում:** Վերջին երրորդ փուլում իրականացված խառնուրդը խտացվում է և ծածկվում համապատասխան հաստությամբ ասֆալտբետոնե շերտով [12]:

Արդյունք և քննարկում

Ամբողջ խորությամբ վերաօգտագործման տեխնոլոգիայի մեջ օգտագործվող հավելանյութերի քիմիական կազմը և ֆիզիկամեխանիկական հատկությունները:

• **Փրփրաբիտում**

Փրփրաբիտումն արտադրվում է տաք բիտումի ($160...80\text{ }^{\circ}\text{C}$) մեջ սառը ջրի ($2...5\text{ }\%$) և օդի ներարկմամբ, ինչի առաջացում է բարձր ծավալով և ցածր մածուցիկությամբ փրփուր: Փրփուրի կայունությունը կախված է բիտումի տեսակից (օրինակ՝ 60/70 կամ 80/100 ներթափանցման աստիճան), ջրի պարունակությունից և ջերմաստիճանից: Հայաստանում օգտագործվող բիտումը (60/70) բնութագրվում է բարձր կաշտությամբ և ջերմաստիճանային կայունությամբ, ինչը նպաստակահարմար է FDR-ի մեջ օգտագործման համար: Փրփրաբիտումի քիմիական կազմը ներառում է ածխաջրածիններ ($80...85\text{ }\%$), ծծումբ ($3...5\text{ }\%$), ազոտ ($1...2\text{ }\%$) և հետքային տարրեր, որոնք ապահովում են ճկունություն և կաշտություն.

- o առաձգականություն՝ $1,5...2,5\text{ ՄՊա}$,
- o ճկունություն՝ $2...3\text{ }\%$ ձգում,
- o ջերմաստիճանային կայունություն՝ $-20\text{ }^{\circ}\text{C}$ -ից $+60\text{ }^{\circ}\text{C}$,
- o դիմակայում է ջերմային ճաքերին [10, 11]:

• **Ցեմենտ**

Ցեմենտն (սովորաբար Պորտլանդ ցեմենտ) օգտագործվում է FDR-ում որպես կապակցող նյութ՝ բարձրացնելով խառնուրդի կոշտությունն ու կրողունակությունը: Ցեմենտի քիմիական կազմը ներառում է CaO ($60...65\text{ }\%$), SiO_2 ($20...25\text{ }\%$), Al_2O_3 ($5...7\text{ }\%$) և Fe_2O_3 ($2...4\text{ }\%$).

- o սեղմման ամրություն՝ $5...10\text{ ՄՊա}$,
- o կոշտություն՝ $10...15\text{ ԳՊա}$,
- o խոնավության դիմադրություն՝ $80...90\text{ }\%$,
- o ամրության պահպանում 28 օր ջրում [13]:

Պատվածքի ամբողջ խորությամբ վերաօգտագործման տեխնոլոգիայում տարբեր կայունացնող հավելանյութերի կիրառման արդյունավետության վերլուծություն Երևան-Մևան (Մ4) ճանապարհային հատվածի օրինակով:

Ինչպես վերը նշվեց, ամբողջ խորությամբ վերաօգտագործման տեխնոլոգիայում կարող են օգտագործվել տարբեր կայունացնող նյութեր, որոնցից հիմնականներն են փրփրաբիտումը և ցեմենտը: Հայաստանի կլիմայական և սեյսմիկ պայմանները պահանջում են ճանապարհային նյութեր, որոնք կդիմակայեն ջերմաստիճանային տատանումներին, խոնավության ներթափանցմանը և սեյսմիկ բեռներին:

Հետազոտական աշխատանքներն իրականացվել են հետևյալ հաջորդականությամբ՝

- **Գրականության վերլուծություն:** Ուսումնասիրվել են միջազգային և տեղական աղբյուրներ՝ FDR-ի կիրառության վերաբերյալ, ինչպես նաև FDR-ի մեջ խառնվող հավելանյութերի՝ ցեմենտի և փրփրաբխտումի հատկությունները:

- **Տնտեսական վերլուծություն:** Հաշվարկվել են սկզբնական և երկարաժամկետ ծախսերը՝ հիմնված Հայաստանում շինարարական նյութերի գների վրա:

Հետազոտությունը կենտրոնացել է Երևան-Սևան (Մ4) ճանապարհի 70 կմ հատվածի վրա:

Երևան-Սևան (Մ4) ճանապարհային հատվածի վերաբերյալ տվյալներ, որոնք վերցրած են Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունից.

- հաշվարկային ճանապարհի երկարությունը՝ 70 կմ,
- ինտենսիվությունն օրական՝ 10000...15000 մեքենա,
- տարեկան ջերմաստիճանի տատանումը՝ -15°C -ից $+35^{\circ}\text{C}$,
- սեյսմիկ գոտի՝ 8 բալ:

Ճանապարհն ընտրվել է իր բարձր ծանրաբեռնվածության և լեռնային տեղանքի համար [14]:

Տնտեսական վերլուծություն: Հաշվարկները հիմնված են Հայաստանի պաշտոնական տվյալների վրա [15]: Երևան-Սևան (Մ4) ճանապարհի 70 կմ հատվածի համար (8 մ լայնություն, 25 մ/ խորություն).


- **FDR (փրփրաբխտում + ցեմենտ)**

- բխտում՝ 250 000 ՀՀ դրամ/տոննա (2,5 %), ցեմենտ՝ 30 000 ՀՀ դրամ/տոննա (3 %),
- 1 մ-ի արժեքը՝ 50 000 ՀՀ դրամ (ներառյալ վերամշակում և խտացում),
- ընդհանուր ծախս $(70\,000 \times 8 \times 0,25 = 40\,000 \text{ մ}^3)$ ՝ 7 մլրդ ՀՀ դրամ
- ծառայության ժամկետ՝ 20...25 տարի, վերանորոգում չի պահանջվում,
- Տարեկան ծախս (25 տարի)՝ 280 մլն ՀՀ դրամ:

- **Ավանդական վերակառուցում**

- 1 մ-ի արժեք՝ 80 000 ՀՀ դրամ (ներառյալ նոր նյութեր),
- ընդհանուր ծախս՝ 11,2 մլրդ ՀՀ դրամ,
- վերանորոգում 7...10 տարին մեկ (3...4 մլրդ ՀՀ դրամ), 25 տարվա ընթացքում՝ 17,2...19,2 մլրդ ՀՀ դրամ,
- տարեկան ծախս (25 տարի)՝ 688...768 մլն ՀՀ դրամ:

• **Խնայողություն:** FDR-ը խնայում է 10,2...12,2 մլրդ ՀՀ դրամ 25 տարվա ընթացքում՝ հաշվի առնելով վերանորոգման ցածր հաճախականությունը (նկար):



Նկ. FDR (փրփրաբխտում + ցեմենտ)-ի և ավանդական վերակառուցման ծախսերի համեմատությունը

Եզրակացություն

Ամբողջ խորությամբ վերաօգտագործման տեխնոլոգիան ճանապարհային պատվածքի վերականգնման առավել արդյունավետ մեթոդներից է, որը լայն տարածում է ստացել ժամանակակից ճանապարհաշինությունում: Ամբողջ խորությամբ վերաօգտագործման տեխնոլոգիայով վերականգնված ճանապարհային պատվածքների շերտերի կոշտության բարձրացման ուղղությամբ կիրառություն են ստացել տարբեր տիպի հավելանյութեր, որոնցից է փրփրաբխտումը և ցեմենտը: Հետազոտական աշխատանքում ներկայացվում է ասֆալտբետոնային ծածկ ունեցող ճանապարհային հատվածը: Հետազոտական աշխատանքներից պարզ է դառնում, որ օգտագործելով փրփրաբխտում և ցեմենտ, առաջարկվում է կայուն և ծախսարդյունավետ լուծում Հայաստանի Հանրապետության ճանապարհաշինարարության համար: Ըստ վերլուծության արդյունքների ցուցանիշների, ստացվել են հետևյալ արդյունքները՝ ճաքերի նվազում, կրողունակության բարձրացում և ֆինանսական խնայողությունը՝ 10,2...12,2 մլրդ ՀՀ դրամ 25 տարվա ընթացքում:

Գրականության ցանկ

- [1] **Հ.Հ. Գյուլզադյան, Ա.Մ. Ղազարյան**, Ասֆալտբետոնային ծածկերի վերաօգտագործման տեխնոլոգիայի կիրառության միջազգային փորձի վերլուծություն. ՃՇՀԱՀ գիտական աշխատություններ Հ.III (66) (2017) 32-39:
- [2] **A. Behnood, M. M. Gharehveran, F.G. Asl, and M. Ameri**, Effects of Copper Slag and Recycled Concrete Aggregate on the Properties of CIR Mixes with Bitumen Emulsion, Rice Husk Ash, Portland Cement and Fly Ash, Construction and Building Materials 96 (October 2015) 172–180.

- [3] **Հ.Հ. Գյուլգադյան, Խ.Ս. Չոլյան**, Ճանապարհային պատվածքների ամբողջ խորությամբ վերաօգտագործելու փորձի վերլուծություն. ՃՇՀԱՀ գիտական աշխատություններ Հ.Ի (82) (2022) 31-40:
- [4] **M. Bocci, A. Grilli, F. Cardone, and A. Graziani**, A Study on the Mechanical Behaviour of Cement–Bitumen Treated Materials, *Construction and Building Materials* 25(2) (February 2011) 773–778.
- [5] **A. Graziani, C. Godenzoni, F. Cardone, and M. Bocci**, Effect of Curing on the Physical and Mechanical Properties of Cold- Recycled Bituminous Mixtures, *Materials & Design* 95 (April 2016) 358–369.
- [6] **B. Dolzycki, M. Jaczewski, and C. Szydlowski**, The Long-Term Properties of Mineral-Cement-Emulsion Mixtures, *Construction and Building Materials* 156 (December 2017) 799–808.
- [7] **L. Abreu, J. Oliveira, H. Silva, C. Silva, D. Palha, P. Fonseca**, Foamed bitumen: an alternative way of producing asphalt mixtures. *Cienc. Technol. Mater.* 29.1 (2017a) e198-e203.
- [8] **L.P.F. Abreu, J.R.M. Oliveira, H.M.R.D. Silva, D. Palha, P.V. Fonseca**, Suitability of different foamed bitumens for warm mix asphalts with increasing recycling rates. *Construction and Building Materials* 142 (2017b) 342-353.
- [9] **G. Bergeron**, Performance des techniques de retraitement en place et de recyclage à froid au Québec, in: Congrès annuel de 2005 de l'Association des transports du Canada (Ottawa, Canada: Association des transports du Canada, 2005).
- [10] **M.M. Iwanski, A. Chomicz-Kowalska, K. Maciejewski**, Resistance to moisture-induced damage of half-warm-mix asphalt concrete with foamed bitumen. *Materials* 13 (2020).
- [11] **A. Chomicz-Kowalska, K. Maciejewski, M.M. Iwański, K. Janus**, Effects of zeolites and hydrated lime on volumetrics and moisture resistance of foamed warm mix asphalt concrete. *Bulletin of the Polish Academy of Sciences. Tech. Sci.* 69(2) (2021) e136731, **DOI:** 10.24425/bpasts.2021.136731.
- [12] **D.R. Luhr, W.S. Adaska, G.E. Halsted**, Guide to Full-Depth Reclamation (FDR) with Cement, Portland Cement Association, 2007.
- [13] **S.P. Dunuweera, R.M. G. Rajapakse**, Cement Types, Composition, Uses and Advantages of Nanocement, Environmental Impact on Cement Production, and Possible Solutions. *Advances in Materials Science and Engineering* (Wiley Online Library). 2018-04-04.
- [14] Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն Երևան, Հայաստան, 2023:
- [15] Ճանապարհաշինության ծախսերի և վերանորոգման ծրագրեր 2022-2023. ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն, Երևան, Հայաստան, 2023.

АНАЛИЗ ПРИМЕНЕНИЯ ВСПЕНЕННОГО БИТУМА И ЦЕМЕНТА В ТЕХНОЛОГИИ ПОЛНОЙ ГЛУБИННОЙ РЕГЕНЕРАЦИИ ДОРОЖНОГО ПОКРЫТИЯ

Хачик Симонович Чколян

Национальный университет архитектуры и строительства Армении, Ереван, РА

xachik.chqolyan@mail.ru

В рамках анализа исследовательской работы представлено применение технологии полной глубинной регенерации (Full-Depth Reclamation, FDR) дорожного покрытия в Республике Армения с

акцентом на использование вспененного битума и цемента. Исследование направлено на изучение физико-механических и химических свойств используемых добавок, устойчивости материалов к воздействию климатических и динамических нагрузок, а также на оценку эффективности и экономических преимуществ этих материалов на основе официальных данных Республики Армения.

Ключевые слова: асфальтобетон, использование на всю глубину, вспененный битум, цемент, добавки

ANALYSIS OF THE USE OF FOAMED BITUMEN AND CEMENT IN THE FULL-DEPTH RECLAMATION TECHNOLOGY OF ROAD PAVEMENT

Khachik Chkolyan

National University of Architecture and Construction of Armenia, Yerevan, RA
xachik.chqolyan@mail.ru

The analysis of the research work presents the application of Full-Depth Reclamation (FDR) technology for road pavement in the Republic of Armenia, focusing on the use of foamed bitumen and cement. The study aims to investigate the physio-mechanical and chemical properties of the used additives, the resistance of materials to climatic and dynamic loads, as well as to evaluate the effectiveness and economic advantages of these materials based on official data from the Republic of Armenia.

Keywords: asphalt concrete, full-depth reclamation, foamed bitumen, cement, additives

Չքոլյան Խաչիկ Միմոնի (ՀՀ, ք. Երևան) - ՃՇՀԱՀ, Ճանապարհների և կամուրջների ամբիոն, ասպիրանտ, (+374)77028155, xachik.chqolyan@mail.ru

Чколян Хачик Симонович (РА, г. Ереван) – НУАСА, кафедра Дорог и мостов, аспирант, (+374)77028155, xachik.chqolyan@mail.ru

Chkolyan Khachik (RA, Yerevan) – NUACA, Chair of Roads and Bridges, PHD student, (+374)77028155, xachik.chqolyan@mail.ru

Ներկայացվել է՝ 21.05.2025թ.

Գրախոսվել է՝ 02.06.2025թ.

Ընդունվել է տպագրության՝ 29.08.2025թ.

**ԲԱԶԱՆՏԵ ԹԵԼԻԿՆԵՐԻ ՖԻԶԻԿԱՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ
ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՊԱՐՀԱՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Խաչիկ Միմոնի Չքոլյան

*Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք. Երևան, ՀՀ
xachik.chqolyan@mail.ru*

Հետազոտական աշխատանքում ներկայացվում է բազալտե թելիկների ֆիզիկամեխանիկական հատկությունների և դրանց կիրառության վերլուծությունը Հայաստանի Հանրապետության ճանապարհաշինարարության ոլորտում: Ուսումնասիրվում են բազալտե թելիկների ամրությունը, ջերմակայունությունը, կոռոզիոն կայունությունը և դրանց առավելություններն օգտագործվող նյութերի նկատմամբ: Ներկայացվում են փորձարարական տվյալներ, տնտեսական հաշվարկներ և բնապահպանական վերլուծություններ: Բազալտե թելիկների ուսումնասիրության արդյունքները ցույց են տվել բարձր արդյունավետություն՝ նվազեցնելով ճանապարհների վերանորոգման ծախսերը և բարձրացնելով դրանց երկարակեցությունը:

Բանալի բառեր. բազալտե թելիկներ, ֆիզիկամեխանիկական հատկություններ, ճանապարհաշինարարություն, ասֆալտբետոն, հավելանյութեր

Ներածություն

Գոյություն ունեցող ճանապարհային ցանցի տեխնիկական վիճակի պահպանման և վերականգնման միջոցառումները համաշխարհային ճանապարհաշինության համար տարեց-տարի դառնում են ավելի արդիական: Բնակչության աճի և տնտեսական զարգացման հետևանքով, վերջին տարիների ընթացքում ամբողջ աշխարհում ձևավորվել է ասֆալտբետոնային ծածկով ճանապարհների ճյուղավորված զարգացած ցանց: Վերոնշյալ ճանապարհների վրա դինամիկ բեռների ազդեցության տակ ժամանակի ընթացքում առաջանում են բազում խնդիրներ, որոնցից հիմնականը ճաքերի առաջացումն է: Հետևաբար, ճաքերը և դրանց հետևանքները հայտնի են որպես բարդ խնդիրներ, որոնք չեն կարող անտեսվել ծածկի նախագծման և կառուցման ժամանակ: Ներկայումս ասֆալտբետոնե ծածկերի ճաքերի խնդրի լուծումը ճանապարհաշինության ոլորտում արդի խնդիր է հանդիսանում [1–4]: Ճիշտ և նպատակային իրականացված նախագծային գործընթացները կարող են նվազեցնել այդ ներդրումները, ինչպես նաև բարձրացնել շահագործման ժամանակ ճանապարհածածկերի հուսալիությունը: Ասֆալտբետոնե խառնուրդի կազմի նախագծումն ընդհանուր նախագծային գործընթացի կարևոր մասերից է և դրանում ընդունված սկզբունքներն ու ընթացակարգերը, ընդհանուր գործընթացի այլ բաղադրամասերի հետ մեկտեղ, մեծ չափով կարող են նպաստել ճանապարհածածկերի որակի և երկարակեցության բարձրացմանը, որը ներկայումս Հայաստանի Հանրապետությունում նույնպես խիստ արդիա-

կան է [5]: Նմանատիպ բաղադրիչ կարող են լինել մանրաթելերը, որոնց օգտագործումը, ինչպիսին բազալտն է, արդյունավետ միջոց է ասֆալտբետոնն խառնուրդների ամրությունը, ճաքերի դիմադրությունը և երկարակեցությունը բարձրացնելու համար [6-10]: Սույն հոդվածը նպատակ ունի ուսումնասիրել միջազգային զիտահետազոտողների կողմից իրականացված բազալտե թելիկների ֆիզիկամեխանիկական հատկությունների հետազոտությունները և ըստ այդ հետազոտությունների իրականացնել վերլուծություններ և ֆինանսատնտեսական հաշվարկներ Հայաստանի Հանրապետության պայմաններում՝ համատեղելով տեսական հիմքերը, միջազգային փորձը և փորձարարական տվյալները:

Նյութեր և մեթոդներ

Բազալտե թելիկների քիմիական կազմը, ֆիզիկամեխանիկական հատկությունները և արտադրությունը: Բազալտե թելիկները արտադրվում են բնական բազալտի հալեցումից 1300...1700 °C ջերմաստիճանում, որին հաջորդում է թելերի ձգումը բարձր արագությամբ պտտվող գլանների միջոցով: Բազալտի քիմիական կազմը ներառում է՝ SiO₂ (45...55%), Al₂O₃ (15...20%), Fe₂O₃ (5...15%), CaO (5...10%) և այլ օքսիդներ, որոնք ապահովում են բարձր կայունություն:

- **Առաձգականություն:** 3000...4000 ՄՊա, 20...30% ավելի բարձր, քան ապակե թելիկներինը (2500...3000 ՄՊա) և պողպատը (3500...4500 ՄՊա):
- **Առաձգականության մոդուլ:** 85...100 ԳՊա, ապահովում է կոշտություն, որը կանխում է դեֆորմացիան ծանր բեռների դեպքում:
- **Խտություն:** 2,6...2,8 գ/սմ³, 3 անգամ ավելի թեթև, քան պողպատը (7,8 գ/սմ³), ինչը հեշտացնում է տեղափոխումը և կիրառումը:
- **Ջերմակայունություն:** Դիմակայում է մինչև 700 °C ջերմաստիճան՝ առանց կառուցվածքի փոփոխության, ի տարբերություն սինթետիկ թելիկների, որոնք հալվում են 200...300 °C-ում:
- **Կոռոզիոն կայունություն:** Քիմիապես կայուն է ալկալային (pH 12...14) և թթվային (pH 2...4) միջավայրերում, ի տարբերություն պողպատի, որը ենթակա է ժանգոտման:

Արտադրության գործընթացն էներգաարդյունավետ է՝ համեմատած պողպատի կամ ապակե թելիկների հետ, քանի որ չի պահանջում բարդ քիմիական մշակում [11-15]:

Բազալտե թելիկների կիրառությունը ճանապարհաշինարարությունում: Բազալտե թելիկներն օգտագործվում են ճանապարհաշինարարության տարբեր ոլորտներում:

- **Ասֆալտբետոնի ամրապնդում:** Թելիկները (0,2...0,5% զանգվածով, 12 մ/երկարությամբ, որի ձգման ամրությունը 2325 ՄՊա է) ավելացվում են ասֆալտբետոնին՝ բարձրացնելով ճաքակայունությունը և ջերմաստիճանային տատանումների նկատմամբ կայունությունը:

- **Գեոցանցեր և ամրացման ցանցեր:** Բազալտե գեոցանցերը կիրառվում են ճանապարհի հիմքի ամրապնդման համար, նվազեցնելով հիմնատակի դեֆորմացիան և բարձրացնելով կրողունակությունը:
- **Բետոնե կոնստրուկցիաներ:** Բազալտե թելիկները օգտագործվում են կամուրջների, ճանապարհային սալերի և ջրահեռացման համակարգերի ամրապնդման համար՝ փոխարինելով պողպատե ամրանները [16, 17]:

Արդյունքներ և քննարկում

Հայաստանի ճանապարհաշինության առանձնահատկությունները: Հայաստանի Հանրապետության ճանապարհային ցանցը ժամանակի ընթացքում բախվում է բազմաթիվ խնդիրների՝ կապված լեռնային տեղանքի, ջերմաստիճանային տատանումների, սեյսմիկ ակտիվության և ծանր բեռնատարների ազդեցության հետ: Ավտոճանապարհների կառուցումը պահանջում է զգալի միջոցների ներդրումներ, որոնց մեծ մասը բաժին է հասնում ասֆալտբետոնային ծածկերին: Այս պայմանները պահանջում են նյութեր, որոնք դիմակայում են ջերմաստիճանային ճաքերին, խոնավության ներթափանցմանը և դինամիկ բեռներին: Ըստ վերևում նշված գիտահետազոտողների հետազոտությունների, կարելի է եզրակացնել, որ բազալտե թելիկները, շնորհիվ իրենց ջերմակայունության, կոռոզիոն կայունության և սեյսմիկ բեռներին դիմակայելու ունակության, կարող են դրական ազդեցություն ունենալ Հայաստանի Հանրապետության ճանապարհաշինարարության վրա (նկար):

Տնտեսական վերլուծություն: Հաշվարկները հիմնված են Հայաստանի պաշտոնական տվյալների վրա [18]: Կամայական վերցնում են Հայաստանի Հանրապետությունում գտնվող 10 կմ երկարությամբ ճանապարհային հատված, որն ունի 8 մ լայնություն, 8 սմ հաստություն:

- **Բազալտե թելիկներով ասֆալտբետոն.**


- o թելիկների զին՝ 500 000 ՀՀ դրամ/տոննա, 0,4% խառնուրդում,
- o բիտում՝ 250 000 ՀՀ դրամ/տոննա, լցանյութ՝ 20 000 ՀՀ դրամ/տոննա,
- o 1 մ³-ի արժեք՝ 70 000 ՀՀ դրամ,
- o ընդհանուր ծախս ($10000 \times 8 \times 0,08 = 6400$ մ³)՝ 0,448 մլրդ ՀՀ դրամ,
- o ծառայության ժամկետ՝ 20...25 տարի, վերանորոգում չի պահանջվում,
- o տարեկան ծախս (25 տարի)՝ 17,92 մլն ՀՀ դրամ:

- **Սովորական ասֆալտբետոն.**

- o 1 մ³-ի արժեք՝ 60 000 ՀՀ դրամ,
- o ընդհանուր ծախս՝ 0,384 մլրդ ՀՀ դրամ,
- o վերանորոգում 10 տարին մեկ (0,214 մլրդ ՀՀ դրամ), 25 տարվա ընթացքում՝ 0,919 մլրդ ՀՀ դրամ,
- o տարեկան ծախս (25 տարի)՝ 36,76 մլն ՀՀ դրամ:

- **Խնայողություն.**

Բազալտե թելիկները խնայում են 0,471 մլրդ ՀՀ դրամ 25 տարվա ընթացքում՝ հաշվի առնելով վերանորոգման ցածր հաճախականությունը:



Նկ. Բազալտե թելիկներով ասֆալտբետոնի և սովորական ասֆալտբետոնի ծախսերի համեմատությունը

Եզրակացություն

Հետազոտական աշխատանքը ցույց է տվել, որ բազալտե թելիկները զգալի ազդեցություն կունենան Հայաստանի Հանրապետության ճանապարհաշինարարության ոլորտում՝ շնորհիվ իրենց բարձր ֆիզիկամեխանիկական հատկությունների: Լաբորատոր փորձարկումները հաստատել են, որ բազալտե թելիկներն ունեն բարձր սեղմման և առաձգական ամրություն, ջերմա- և կոռոզիոն կայունություն: Հայաստանի կլիմայական պայմաններում՝ բնորոշ ջերմաստիճանային տատանումներով և սեյսմիկ ակտիվությամբ, բազալտե թելիկներն ապահովում են ճանապարհային ծածկույթի կայունություն՝ նվազեցնելով ջերմային ճաքերի առաջացումը և բարձրացնելով ծառայության ժամկետը մինչև 15...20 տարի: Տնտեսական վերլուծությունը ցույց է տվել, որ բազալտե թելիկների օգտագործումը նվազեցնում է ճանապարհների վերանորոգման ծախսերը՝ համեմատած ավանդական նյութերի հետ: Հաշվի առնելով Հայաստանի բյուջետային սահմանափակումները և ճանապարհային ցանցի ընդլայնման անհրաժեշտությունը՝ նշված տեխնոլոգիան առաջարկում է ծախսարդյունավետ լուծում: Բազալտե թելիկները, շնորհիվ իրենց բարձր ամրության, ջերմակայունության և կոռոզիոն կայունության, առաջարկում են արդյունավետ լուծում Հայաստանի ճանապարհաշինարարության համար:

Գրականության ցանկ

- [1] **B. Peng, W. Gong, and X. G. Meng**, A study on gradation design method of micro asphalt gravel middle layer mixtures, *Journal of Wuhan University of Technology (Transportation Science & Engineering)* 25 (2018) 259–263.
- [2] **L. Wang and Z. G. Liu**, Cracking cause and treatment measure of semi-rigid base asphalt pavement, *Journal of China & Foreign Highway* 5 (2020) 84–86.
- [3] **J. G. Wei, Q. L. Fu, and J. D. Xu**, Effect of asphalt binder on pavement performance of asphalt macadam, *Journal of Highway and Transportation Research and Development* 11 (2014) 1–8.
- [4] **D. Li**, Research on mechanical characteristics and design method of graded crushed stone material, *China and Foreign Highway* 19 (2017) 102–106.
- [5] **Է. Կ. Բեգոյան, Հ. Հ. Գյուլգադյան**, Ասֆալտբետոնային խառնուրդի կազմի նախագծման մասին. ՃՇՀԱՀ գիտական աշխատություններ 2 (80) (2021) 40–47:
- [6] **A. Ibrahim, S. Faisal, and N. Jamil**, Use of basalt in asphalt concrete mixes. *Construction and Building Materials* 23(1) (2009) 498–506.
- [7] **N. Morova**, Investigation of usability of basalt fibers in hot mix asphalt concrete. *Construction and Building Materials*, 47 (2013) 175–180.
- [8] **Y. Zheng, Y. Cai, G. Zhang, and H. Fang**, Fatigue property of basalt fiber-modified asphalt mixture under complicated environment. *Journal of Wuhan University of Technology-Mater. Sci. Ed.* 29(5) (2014) 996–1004.
- [9] **C. Gao, and W. Wu**, Using ESEM to analyze the microscopic property of basalt fiber reinforced asphalt concrete. *International Journal of Pavement Research and Technology* 11(4) (2018) 374–380.
- [10] **É. Lachance-Tremblay, M. Vaillancourt, and D. Perraton**, Evaluation of the impact of recycled glass on asphalt mixture performances. *Road Materials and Pavement Design* 17(3) (2016) 600–618.
- [11] **A. Dorigato, A. Pegoretti**, Fatigue resistance of basalt fibers-reinforced laminates. *J Compos Mater* 46 (15) (2012) 1773–1785.
- [12] **T. De'ak, T. Czig'any**, Chemical composition and mechanical properties of basalt and glass fibers: A comparison. *Text Res J* 79 (7) (2009) 645–651.
- [13] **V.V. Gur'ev, E.I. Neproshin, G.E. Mostovoi**, The effect of basalt fiber production technology on mechanical properties of fiber. *Glass Ceram* 58 (2001) 62–65.
- [14] **V. Dhand, G. Mittal, K.Y. Rhee, S.J. Park, D. Hui**, A short review on basalt fiber reinforced polymer composites. *Compos Part B Eng* 73 (2015) 166–180.
- [15] **K. Singha**, A short review on basalt fiber. *Int J Text Sci* 1 (4) (2012) 19–28.
- [16] **Г.Э. Окольников, Н.В. Новиков, А.Ю. Старчевская, Г.С. Пронин**, Применение базальтовой сетки в конструкциях автомобильных дорог. Российский университет дружбы народов, Инженерная академия, Департамент архитектуры и строительства. Системные технологии 2 (31) (2019).
- [17] **Xin Yan, Ronghua Ying, Jian Jin and Yuntai Zhang**, Study on Cracking Resistance of Basalt Fiber-Reinforced Microbond Asphalt Macadam. *Advances in Civil Engineering*. Article ID 6647766 (2021) 9 p.
- [18] **Ճանապարհաշինության ծախսերի և վերանորոգման ծրագրեր 2022-2023. ՀՀ Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն, Երևան, Հայաստան, 2023:**

ФИЗИКО-МЕХАНИЧЕСКИЕ СВОЙСТВА БАЗАЛЬТОВЫХ ВОЛОКОН И ИХ ПРИМЕНЕНИЕ В ДОРОЖНОМ СТРОИТЕЛЬСТВЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Хачик Симонович Чколян

Национальный университет архитектуры и строительства Армении, г. Ереван, РА
xachik.chqolyan@mail.ru

В исследовательской работе представлен анализ физико-механических характеристик базальтовых волокон и областей их применения в сфере дорожного строительства Республики Армения. Изучаются прочность, термо- и коррозионная стойкость базальтовых волокон и их преимущества по сравнению с традиционно используемыми материалами. Представлены экспериментальные данные, экономические расчеты и экологический анализ. Результаты исследования показали высокую эффективность базальтовых волокон, способствующих снижению затрат на ремонт дорог и увеличению их долговечности.

Ключевые слова: базальтовые волокна, физико-механические свойства, дорожное строительство, асфальтобетон, добавки

PHYSICAL-MECHANICAL PROPERTIES OF BASALT FIBERS AND THEIR USE IN ROAD CONSTRUCTION IN THE REPUBLIC OF ARMENIA

Khachik Chkolyan

National University of Architecture and Construction of Armenia, Yerevan, RA
xachik.chqolyan@mail.ru

The research paper presents an analysis of the physical-mechanical properties and use of basalt fibers in the road construction sector of the Republic of Armenia. The study examines the strength, thermal resistance, corrosion resistance, and advantages of basalt fibers compared to conventionally used materials. Experimental data, economic calculations, and environmental analyses are provided. The results of the study demonstrate the high efficiency of basalt fibers, reducing road maintenance costs and enhancing their durability.

Keywords: Basalt fibers, physical-mechanical properties, road construction, asphalt concrete, additives

Չրոյշան Խաչիկ Միմոնի (ՀՀ, ք. Երևան) - ՃՇՀԱՀ, Ճանապարհների և կառուցողների ամբիոն, ասպիրանտ, (+374)77028155, xachik.chqolyan@mail.ru

Чколян Хачик Симонович (РА, г. Ереван) – НУАСА, кафедра Дорог и мостов, аспирант, (+374)77028155, xachik.chqolyan@mail.ru

Chkolyan Khachik (RA, Yerevan) – NUACA, Chair of Roads and Bridges, PHD student, (+374)77028155, xachik.chqolyan@mail.ru

Ներկայացվել է՝ 20.05.2025թ.

Գրախոսվել է՝ 09.06.2025թ.

Հնդրունվել է տպագրության՝ 29.08.2025թ.

ՄԻՋՆԱԿԱՐԳ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՏԵՐԻԵՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՄԱՆ ՌԵՆՈՎԱՑԻՈՆ ՄՈԴՈՒԼՆԵՐԻ
ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԴԻԶՍՅՆ ԱՌԱՋԱՐԿ

Անահիտ Խաչատուրի Պետրոսյան*, Արսեն Վլադիմիրի Մկրտչյան,
Անահիտ Վահեի Կիրակոսյան, Կարեն Արսենի Մելիքյան

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք. Երևան, ՀՀ

* an_arch@mail.ru

Ներկայացված են ՀՀ-ում գործող դպրոցները և դրանցում ռենովացիոն մոդուլներով ժամանակակից պահանջներին համապատասխան ինտերակտիվ կրթության կազմակերպման հնարավորությունները և նախադրյալները: Նպատակը և խնդիրներն են հիմնվելով Հայաստանում գործող ուսումնական հաստատությունների և դպրոցների միջազգային փորձի տիպաբանական վերլուծությանը՝ ուսումնասիրել կազմը և բացահայտել բաղկացուցիչ տարրերի բովանդակությունից բխող կապը: Դիտարկվել են շարժական միջավայրի կոնստրուկցիան, կառուցվածքային առանձնահատկությունները, նյութը, նախագծման հիմնական սկզբունքները և կրթության գործընթացում կիրառման դրդապատճառները: Ուսումնասիրվել է նախագծվող միջավայրի ձևագոյացման մեթոդը, համադրելով առարկայական առանձնահատկություններին և խնդիրներին, առաջադրելով ինտերակտիվ ծավալների կիրառման շահավետությունը՝ կրթելու նպատակով հնարավորինս հարմար տեղաշարժ: Նպաստավոր նախադրյալներ են ստեղծվում բազմաբնույթ կրթական միջավայրի ձևավորման, դասերի ընթացքում տարատեսակ զբաղվածությունների ներգրավման և զուգահեռաբար դասի տարրեր ձևերի վարման ներդրման համար: Ներկայացվում է ճկուն ձևափոխվող հարմարավետ կրթական միջավայր, միաժամանակ գեղագիտական որակական չափանիշներին և էրգոնոմիկ պահանջներին համապատասխան: Ներկայացվում են խորհրդային ժամանակաշրջանի տիպարային ուսումնական հաստատություններում տեղակայված ինտերակտիվ նորաստեղծ ուսումնական մոդուլներ, որոնք կիրառելի են ռենովացիայի ենթակա ՀՀ դպրոցներում ժամանակակից կրթության խթանման համար:

Բանալի բառեր. հանրակրթական դպրոց, ռենովացիա, ինտերակտիվ տրանսֆորմացվող միջավայր, նորաստեղծ ուսումնական մոդուլներ, ժամանակակից կրթություն

Ներածություն

Կրթության սոցիալական ինստիտուտը չափազանց կարևոր դեր է խաղում հասարակության բնականոն գործունեության և զարգացման գործընթացում, որի շնորհիվ նախորդ սերունդների աշխատանքի արդյունքում կուտակված նյութական և հոգևոր արժեքները, գիտելիքները, փորձը և ավանդույթները փոխանցվում և ձուլվում են մարդկանց նոր սերնդին: Ժամանակակից

կրթությունը, կատարելով բազմաթիվ սոցիալական գործառնություններ, դառնում է էլ ավելի բազմաչափ և բազմաֆունկցիոնալ, ինչի շնորհիվ կրթական հաստատությունները, որպես քաղաքային միջավայրի կարևոր տարրեր, սկսում են ենթարկվել ինտերիերում նախագծման ձևերի և մեթոդների խիստ վերանայման և վերաիմաստավորման: Հայաստանի կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է: Ուստի այս ամենին կնպաստի համապատասխան ոգով նախագծված միջավայրը: Ներկայումս ՀՀ-ում գործող դպրոցների գերակշռող մեծամասնությունը նախագծվել և կառուցվել է Խորհրդային Միության ժամանակաշրջանում [1]: Վերը նշվածը ևս մեկ կարևոր խնդիր և պատճառ է դպրոցական միջավայրի վերանախագծման և դիզայն ռենովացիայի համար:

Դպրոցական համալիրի ինտերիերի դիզայն նախագծումն ապահովում է աշակերտների հարմարավետ և հանգիստ ժամանցն ամբողջ ուսումնական օրվա ընթացքում: Հանրակրթական դպրոցը պետական կրթական օբյեկտների ամենազանգվածային տեսակն է, խորհրդային ժամանակաշրջանում դպրոցական հաստատությունների նախագծումն իրականացվել է ըստ ստանդարտ տիպարային և գրեթե նույնական նախագծերի: Ներկայումս առկա են կառուցված մի քանի ժամանակակից մասնավոր դպրոցներ, ճարտարապետադիզայներական նոր լուծումներով: Միևնույն ժամանակ իրականացվում են արդեն իսկ գործող խորհրդային տիպարային դպրոցների ժամանակակից պահանջներին համապատասխան ռենովացիոն վերանորոգումներ, հիմք ընդունելով ՀՀ ԿԳՄՄ նախարարության կողմից մշակված և դպրոցաշինության մեջ շրջանառվող «Դպրոցի ձևավորման և հարդարման մեթոդական ուղեցույց» փաստաթղթային համակազմը [2]:

Ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ օրեցօր կրթության նկատմամբ աճող և փոփոխվող մոտեցումը ենթադրում է ինտերակտիվ տրանսֆորմացվող տիպային միջավայրի մոդուլների ձևավորման միջոցով լուծում: Ապագա դպրոցների միջավայրը նման կլինի բազմաբնույթ մոդուլների միավորմանը՝ ուսման, սպորտի, ստեղծագործական գործունեության, սննդի ընդունման համար: Ամենօրյա զարգացող տեխնոլոգիաների հետ համադրելով նախագծման նախկին համակարգը [3] և պլանավորման գործառական մեթոդները, պահանջվում են նոր մոտեցումներ և ստանդարտներ, հիմնվելով հետևյալ հիմնախնդիրների վրա՝

- դպրոցների տիպային ինտերիեր նախագծումից անցում բազմաբնույթ ուսումնական հաստատությունների ձևավորմանը,
- դպրոցների «փակ» և «բաց» ինտերակտիվ բազմաֆունկցիոնալ հատկագծային գոտիների ընդգծման և առանձնացմանը, ընդհանուր նորաստեղծ տեխնոլոգիական հնարավորությունների ապահովում,
- դասերի ընթացքում տարատեսակ զբաղվածության ներգրավման հնարավորություն և դասասենյակների կազմակերպում, որոնք ապահովում են զուգահեռաբար դասի վարման տարբեր ձևեր:

Միջնակարգ կրթական հաստատությունների ռենովացիայի առավելությունները

Արտաքին գործոններ. Ընդհանուր բարեկեցության բարելավում, դպրոցի վարկանիշի բարձրացում, նոր աշակերտների համար գրավչություն, թաղամասի աշխուժացում, դրական սոցիալական ազդեցություն, բաց միջավայր [4]:

Կրթություն. ուսուցման նոր մոտեցումների առաջացում, դասերի նոր ձևաչափերի ավելացում, տեխնոլոգիաների ուսուցման նոր ոճերի ինտեգրում, դպրոցականների զարգացման խթան, կրթական ընդլայնված կարիքների և պահանջների որակի բարելավում:

Ներքին գործոններ. լավագույն կադրերի պահպանում և ներգրավում, ներառական դպրոցականների ուսման պայմանների հնարավորություն կամ բարելավում, ուրախ դպրոցականներ և անձնակազմ, հարմարավետություն, հեշտ փոխազդեցություն, վստահության և գոհունակության առաջացում ուսումնական գործընթացում [5]:

Ուսումնասիրության նպատակն է՝ ներկայացնել դպրոցների ռենովացիոն մոդուլների հայեցակարգային դիզայն նախագիծ՝ հաշվի առնելով միջնակարգ կրթական հաստատությունների միջավայրի կազմակերպմանը ներկայացվող ժամանակակից պահանջները, ուսումնասիրելով ոլորտի առանձնահատկությունները: Առաջարկել ռենովացիոն մոդուլներ, որոնք թույլ կտան անցում կատարել դպրոցների տիպարային միջավայրից դեպի նոր տրանսֆորմացվող ինտերակտիվ աշխատանքային կրթական պայմաններ, դպրոցների անձնակազմի և աշակերտների համար, խթանելով միջնակարգ ուսումնական հաստատությունների կրթական որակի բարելավումը և վերափոխել արտադպրոցական ոլորտները [6]:

Նյութեր և մեթոդներ

Գիտական աշխատանքի նպատակն է բացահայտել կրթական միջնակարգ հաստատությունների համար ենթակառուցվածքային փոփոխությունների ձևեր ռենովացիոն մեթոդով՝ հնարավորություն ընձեռնելով թարմացնել և ժամանակակից դարձնել կրթական կազմակերպության տարածքները միջավայրային մոդուլների, դրանց իրականացման մեթոդների մշակմամբ և ռազմավարություններ օգտագործել դպրոցական վերափոխման նախագծերի վրա աշխատելիս: Ներկա ժամանակում դպրոցներն ավելի հաճախ պատրաստ են կարճաժամկետ փոփոխությունների, որոնք նախատեսված են արագ ազդեցության համար: Այսպիսով, կրթական միջավայր նախագծելիս կարևոր է հասկանալ այդ վերափոխումների սկզբունքներն ու իմաստները, որոնք կօգնեն ձևավորել ողջամիտ նախագծեր տեղեկատվական կառուցվածքային ֆունկցիոնալ լուծումների հարցում [7]: Նախագծի հիմնական նպատակային խնդիր է դառնում միջնակարգ կրթական հաստատությունների տարածքների համար ինտեգրված ներքին լուծումների մշակումը, որոնք հետագայում փուլ առ փուլ կարող են իրականացվել գոյություն ունեցող դպրոցների կողմից՝ տվյալ կրթական կազմակերպության համար հարմարավետ ռիթմով: Գոյություն ունեցող միջնակարգ կրթական հաստատությունների շենքերի ռենովացիայի մոդուլային նախագծման կիրառման

նպատակն է զգալի օգուտներ բերել շինությունների ներքին տարածության ավելացմանը, կրճատել միջոցների և ժամանակի ծախսերը՝ չընդհատելով ուսումնական գործընթացը երկար ժամանակով կամ բացառել անհրաժեշտությունն ուսումնառողներին մեկ այլ շենք «տեղափոխելու»։ Նման լուծումների նպատակն է դառնալ համապիտանի ալգորիթմ միջնակարգ կրթական հաստատությունների համար, որոնք կարող են օգտագործվել ՀՀ-ում տիպարային և ոչ տիպարային դպրոցների միջավայրերի վերափոխման, բարելավման հարցում [8]։

Ուսումնասիրության նյութ են հանդիսանում միջնակարգ կրթական հաստատությունները։ Հանրակրթական դպրոցների միջավայրային նախագծման և կազմակերպման՝ ռենովացիոն մոդուլների նախագծման ընդգրկումով՝ ելնելով ժամանակակից իրականության ներկայացվող պահանջներից, խնդիրներից և գործառույթներից։ Դիտարկվում են խորհրդային ժամանակաշրջանի տիպարային ուսումնական հաստատությունների հատակագծային և դիզայն նախագծման լուծումները, առանձնահատկությունները և համապատասխանությունը ժամանակակից պահանջներին [9]։

Աշխատանքի հիմք են հանդիսանում հետևյալ հիմնախնդիրները.

- ուսումնասիրել և վերլուծել տիպարային դպրոցները, ժամանակակից դպրոցների պահանջները, միջավայրի կազմակերպման առանձնահատկությունները,
- բացահայտել ռենովացիոն մոդուլների ձևավորման, դասավանդողների մասնագիտական պահանջների և կարիքների, դասավանդման գործընթացի առանձնահատկությունները, արդյունավետ ուսումնական միջավայրի ձևավորման հիմնական տարրերը,
- ներկայացնել հետազոտական աշխատանքի արդյունքը՝ ժամանակակից ռենովացիոն մոդուլները փաստացի կիրառելու նպատակով [10]։

ՀՀ-ում տարբեր ժամանակաշրջանների դպրոցների տիպաբանական նկարագիրը

1930-50 թթ. Դրական - շենքերն ունեն պարզ ձևագոյացություն՝ մեծ դասարաններով, երեխաների կողմնորոշման հարմարավետություն, կենտրոնացում միայն դասապրոցեսի վրա։

Բացասական - տարածքների օգտագործման արդյունավետության ցածր գործակից. երկար մուր միջանցքներ, ներքին բակեր. տարբեր անհրաժեշտ ֆունկցիոնալ տարածքների սակավություն (լաբարատորիաներ, դահլիճներ, ճաշարաններ). խիստ կարիներտային ուսուցման համակարգ. տեխնիկական սենքերի բացակայություն. խիստ համաչափ հորինվածքային հատակագիծ. կրող պատերի համակարգ, ինչը դժվարեցնում է վերահատակագծման և փոփոխությունների հնարավորությունը։

1960-70 թթ. Դրական - միջանցքներն օգտագործվում են որպես հանգստի գոտի. ըստ հարկերի սկսում են առանձնացվել կրտսեր, միջին և բարձր դասարանները. շենքերը բաժանվում են բլոկերի ըստ ուսումնական գործընթացի. ձևավորվում են ներքին բակեր. դպրոցը փողոցի եզրագծից տեղափոխվում է շենքերի բակ. ավելանում են ֆունկցիոնալ տարածքները։

Բացասական - շենքերի խիստ ներքին միջավայր. դասարանների և միջանցքների նմանություն. երեխաների տարածական կողմնորոշման դժվարություն. սենյակների և լաբորատորիաների մեջ մեծ հեռավորություն:

1980-ական թվականներից մինչ օրս. Դրական - տարածքների օգտագործման արդյունավետության բարձրացում. բազմաֆունկցիոնալ տարածքների ավելացում. նմանատիպ ֆունկցիաներով տարածքների միավորում մոդուլների, կորպուսների մեջ. միջավայրային լուծումների բազմազանություն՝ ոչ ստանդարտ սարքավորումներ, կահույք, հարդարման նյութեր, ավելի ուշ նաև բարձր տեխնոլոգիաներ. կաբինետներից անցում բաց հատակագծման՝ ուսուցման համակարգի, սենքերի գործառական կապվածության:

Բացասական - երբեմն շենքերի բարդ ձևեր, որոնք հանգեցնում են հավելյալ անհիմն ծախսերի, որոշ դեպքերում բարդ ձևերը կարող են հանգեցնել երեխաների տեսողական և տարածական կողմնորոշման բարդացման:

Միջնակարգ կրթական հաստատությունների միջավայրի գոտիավորման ժամանակ հստակեցվում է դպրոցներում տարածքների գործառնական խմբերի կազմը և հաշվի են առնվում նաև տեղական պայմանները: Հիմնական դպրոցը ներառում է նորների երկու խումբ՝ պարտադիր և առաջարկվող բազային մակարդակի կրթություն ապահովող: Դպրոցների «փակ» ուսումնական գոտու ձևավորումը նախատեսվում է հանրապետությունում ընդունված դասերի կազմակերպման դասալաբորատոր համակարգ, որում յուրաքանչյուր դասի համար նշանակվում է սեփական ուսումնական տարածք, որը հագեցած է կահույքով և անհրաժեշտ բոլոր տարրերով՝ ըստ երեխաների տարիքային խմբերի և այլ առանձնահատկությունների, և լրացուցիչ ստեղծվում են հատուկ սարքավորված սենյակներ և լաբորատորիաներ համակարգչային, տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման, ժամանակակից կրթական ծրագրերի իրականացման համար նախատեսված՝ ըստ պետական կրթական չափորոշիչների: Կարևոր տարր է ուսումնական հաստատությունների «բաց» տարածքային գոտիների զարգացումը: Նման մոտեցումը թույլ է տալիս խոսել սովորողների առողջացման և ֆիզիկական զարգացման, և դրա կազմակերպման գործում դպրոցի դերի բարձրացման մասին, ինչն անկասկած իրագործվում է նաև միջավայրային ճշգրիտ և գործառնական կազմակերպման լուծումների շնորհիվ՝ ապահովելով արդյունավետ արտադպրոցական գործունեություն: Կարևոր է նաև արտացոլել հանդիսությունների դահլիճների, դպրոցական ճաշարանների, գրադարանների, լաբորատոր սենյակների, արհեստանոցների և արվեստանոցների, բժշկական սենյակների, ուսուցիչների համար նախատեսված տարածքների ռենովացիոն նախագծման, ձևավորման հարցերը: Ներկա փուլում միջնակարգ հանրակրթական դպրոցում ուսումնական գործընթացի մասնակիցները կենտրոնացած են անձի համակողմանի զարգացման, գործունեության ուսումնական և արտադպրոցական ոլորտների ընդլայնման վրա: Ամրապնդվում է հաղորդակցության ոլորտի դերը, մեծանում են դպրոցական ֆունկցիոնալ և գեղագիտական կողմի պահանջները: Ժամանակակից դպրոցական շենքը վերափոխվում է ուսումնական գործընթացում մասնակիցների փոփոխվող գործունեության բնույթի ազդեցության

տակ: Պլանավորման կազմակերպման կենտրոնը դառնում է հաղորդակցական տարածքը, բարդանում է ուսումնական և արտադպրոցական տարածքների անվանակարգը [11]:

Հանրակրթական միջնակարգ ուսումնական հաստատությունների ժամանակակից միջավայրի կազմակերպումն անհրաժեշտ է իրականացնել, բացառելով գոյություն ունեցող շինությունների կոնստրուկտիվ միջամտությունը, միևնույն ժամանակ հաշվի առնելով մի շարք գործոններ.

- *տարածքի առավելագույն օգտագործում*՝ համընդհանուր տարածքների կազմակերպում,
- *գործառույթային ճկունություն*՝ միջավայրում փոփոխություններ կատարելու նորաստեղծներդրման հնարավորություն, շարժունակ փոխակերպվող կահույքի, միջնապատերի օգտագործում, որոնք թույլ են տալիս ինտերակտիվ դարձնել տարածքը, անհատական և խմբային դասընթացներ անցկացնելու, ուսուցման գործընթացում առաջնահերթությունները շեշտելու, համակողմանի զարգացման համար,
- *ճանաչողական գործունեությանը նպաստող կառուցվածքի ստեղծում* - որքան ավելի հարմար են շենքում դասասենյակները, այնքան ավելի հարմարավետ է զգում աշակերտը և ուսուցիչը դրանցում, ինչը նպաստում է ընդհանուր կրթական մակարդակի բարձրացմանը,
- *գեղագիտական գործունեություն* - այն ժամանակակից հանրության կարևորագույն պահանջներից է, գեղագիտական դաստիարակությունն աճող սերնդի համակողմանի զարգացման մասն է կազմում,
- հաշմանդամություն ունեցող երեխաների համար անհրաժեշտ պայմանների կազմակերպում:

Հայեցակարգային առաջարկի տեսլականն է տարիների ընթացքում ունենալ դպրոցի միջավայրում ներդաշնակ կրթվող երջանիկ աշակերտ, ապահովել և հասանելի դարձնելով բարձրորակ և մրցունակ կրթություն: Ուսումնասիրության նորարարությունը՝ դա մոդուլային կոնստրուկցիաների, տրանսֆորմացվող բազմաֆունկցիոնալ օգտագործվող ծավալատարածական ձևի, կերպարի գործառնական համատեղումն է դպրոցի միջավայրում [12]:

Հիմնվելով ժամանակակից շարժական մոդուլների կոնստրուկցիաների տարատեսակների ուսումնասիրության վրա, մոդուլների կոնստրուկտիվ ձևն ու հանգույցները լուծվել են՝ ելնելով միջազգային փորձի վերլուծություններից և տեղական շինանյութերի հնարավորություններից: Մոդուլի չափերը և տարածքի գոտիավորումը բխում է հիմնական գործառնական ուղղվածությունից:

Արդյունքներ և քննարկում

Հայեցակարգային առաջարկը ներկայացնում է մշակված մոդուլների համակարգ՝ բազմաֆունկցիոնալ, ներդաշնակ և հարմարավետ դպրոցական միջավայր ստանալու համար գոյություն

ունեցող տարբեր ժամանակի հանրակրթական դպրոցների ելակետային հատակագծերի օրինակների վրա՝ բացահայտելու նոր սերնդի կրթական հաստատությունների դիզայն կազմակերպման նախադրյալները:

Դպրոցական միջավայրի հայեցակարգային առաջարկի կազմավորումը կախված է հետևյալ հիմնական գործոններից՝

1. *Տարածաշրջանի պատմական համատեքստը, դպրոցի պատմական համատեքստը,*
2. *Դպրոցի գտնվելու վայրը, ճարտարապետական առանձնահատկությունները, հորինվածքը, ծավալը, չափերը,*
3. *Դպրոցի ուղղվածությունը, երեխաների տարիքը, գույների և ծավալների հոգեբանական ազդեցությունը, միջավայրի ընկալման առանձնահատկությունները, ներառական երեխաների պահանջները,*
4. *Գործառնական գոտիների ծավալատարածական փոփոխարարությունները և կապը միմյանց հետ, ներկայացվող պահանջները, տարածքների չափերը, բնական լուսավորության անհրաժեշտությունը, մեծ, միջին և փոքր ֆունկցիոնալ գոտիների, տարածքների կապը,*
5. *Համաշխարհային դիզայն միտումները, գերիշխող ոճային լուծումները,*
6. *Շենքի կառուցվածքային համակարգը, նյութերի ընտրությունը և որակը, կառուցվածքային տարրերի ձևերը և չափերը:*

Ուսումնասիրության հայեցակարգային առաջարկի նպատակն է ձևավորել՝

- *միջավայրի հարմարավետություն.*
 - Գործառնական տարածքների միջև կապի և անցումների կազմակերպում, ազատ տեղաշարժվելու հնարավորություն, հարմարավետ մոդուլային կահույքի օգտագործում ըստ գործառույթի, երգոնոմիկ պահանջների ապահովում,
 - Համապատասխան դասապրոցեսին տրամադրող գունային լուծումների և լուսավորություն առաջադրում,
- *Էսթետիկ որակական չափանիշների ապահովում.*
 - Առաջադրված մտքի դիպուկ դիտողական ներկայացում, նյութերի համապատասխան ընտրություն և կիրառում,
 - Ժամանակակից հանգստի տարածքների առաջադրում, տրամադրող և գեղեցիկ միջավայրի ապահովում, ինտերակտիվ լուծումներ,
 - Միջավայրի նավիգացիոն համակարգի ապահովում և կապվածություն բլոկերի միջև,

- *անվտանգություն.*

- Բուժկետի, վթարային ելքերի, սանհանգույցային գոտիների միջև գործառնական հաղորդակցման ապահովում:

Հայեցակարգային առաջարկի կառուցվածքը (նկ. 1, 2), հիմնվելով ուսումնասիրությունների, ներկայացնում է՝

1. Գործառնական մոդուլային անհրաժեշտ տարածքները և դրանց միջև կապն ըստ տիպաբանության,
2. Հատակագծային և գոտիավորման առաջարկ մոդուլների ներգրավմամբ դպրոցների որոշակի տիպարային հատակագծային օրինակների վրա,
3. Ծավալատարածական հորինվածքների, դիզայն կերպարայնության գծագրերի մշակում,
4. Դիզայն դիագրամների և արժանահատիկ տեսքերի ներկայացում ,
5. Դպրոցական միջավայրի կազմակերպման գունագրաֆիկական լուծումների առաջադրում, հիմնված հետազոտական աշխատանքի արդյունքների վրա,
6. Նյութերի և հանգույցների պարզաբանում, նորաստեղծ կոնստրուկցիաների կիրառման շահավետ նախադրյալներ:

Դպրոցական միջավայրի կառուցման տարածաձավալային միջոցներն են՝

- *Միջավայրի մասշտաբայնությունը*, գոյություն ունի անմիջական կապ երեխայի ուսուցանման արդյունավետության և դասընթացի անցկացման միջավայրի ծավալի, մասշտաբի և հարմարավետության միջև,
- *Ծավալահատակագծային լուծումներ*, ազատ «շնչող», «պարզից բարդ» ընկալելի տարածքները դպրոցական օբյեկտների նախագծման կարևոր նախապայմաններից են,
- *Ժամանակակից գույների, նյութերի, հյուսվածքների ազդեցություն, հատակի ծածկույթներ*,
- *Բնական և արհեստական լույսի ազդեցություն*,
- *Բնական և արհեստական միջավայրի ազդեցություն*,
- *Նորարար տեխնոլոգիաների ազդեցություն տարածության կազմակերպման մեջ*,
- *Ծավալահատակագծային լուծումներ, նավիգացիոն համակարգի ինտեգրում:*

Այդպիսի միջավայրը կարող է ստեղծվել հետևյալ միջոցների կիրառմամբ՝

- Մտածողության խաղեր ինտերիերում,
- Գրաֆիկական ներդրումներ,
- Առաջադրանքներ ծավալային մտածողության համար:

Գույների, նյութերի և հյուսվածքների ազդեցությունը:

Միջավայրի ճիշտ ընտրված գույները, նյութերը և հյուսվածքները կարող են նվազեցնել անհանգստությունը կամ բարձրացնել ստեղծագործական էներգիան, իսկ երեխաների դեպքում էլ ավելի նրբանկատ պետք է գտնվել այս ամենի ընտրության հանդեպ: Կարևոր է, որ կրթական

տարածքում մարդը և նրա գործունեությունը միշտ ավելի գերակշռող դիրքում լինեն և ոչ թե ինտերիերը:

Միջնակարգ կրթական հաստատություններում միջավայրի մոդուլային կառուցվածքի կիրառման առավելություններն են՝

- ռեսուրսների խնայողություն, ցածր ինքնարժեք (համեմատած նոր շենքի կառուցման հետ),
- իրականացման ժամանակի կրճատում,
- գործառնականություն, ճկուն կառուցվածք, վերափոխման հնարավորություն և ներուժ:



Նկ. 2. Հայեցակարգային առաջարկ

Աշխատանքի նորարարությունն է ներկայացնել հայեցակարգ և դրա իրականացման ձևեր, որոնք կիրառելի են ՀՀ-ի դպրոցներում ռենովացիոն վերափոխման նպատակով, ինչն էլ կբարելավի միջնակարգ կրթական հաստատությունների ժամանակակից պահանջներին համապատասխանության աստիճանը և կլինի շահագործման մեջ հուսալի:

Եզրակացություն

Միջնակարգ ուսումնական հաստատության ձևավորումը զգալի ազդեցություն ունի սովորողների ուսումնական և սոցիալ-զգայական արդյունքների վրա: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ դպրոցի ֆիզիկական միջավայրն ազդում է աշակերտների ճանաչողական զարգացման, վարքագծի և սովորելու մոտիվացիայի վրա: Օրինակ՝ բավարար բնական լույսով, լավ օդափոխությամբ և համապատասխան ակուստիկա ունեցող դասասենյակները նպաստում են աշակերտների ուսումնառության որակի բարձրացմանը և նվազեցնում վարքային խնդիրները:

Երբ տարածքը լավ պլանավորված է, ճշգրիտ օգտագործված, սովորողներն ավելի ներգրավված, ապահովում է անհատականացման, համագործակցության հեշտացում, և հետադարձ կապն ավելի արդյունավետ է:

Ըստ հետազոտությունների ինտերիերի ձևավորումը նույնպես ազդում է դպրոցականների հոգեբանական բարեկեցության և ուսման արդյունքների վրա: Այսպիսով, տարրական և միջնակարգ դպրոցում ոչ միայն բավարար բնական լուսավորություն, հարմարավետ ջերմաստիճան և մաքուր օդ է հարկավոր, այլև այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ դիզայնի անհատականացումը, դրա բազմաֆունկցիոնալությունը և գույնի օգտագործումը, որոնք կարող են զգալիորեն բարձրացնել աշակերտի առաջադիմությունը: Դպրոցներն ընդունում են ավելի ստեղծագործական ուսուցման ոճ, համագործակցության վրա կենտրոնանալու հետ մեկտեղ: Խրախուսելով երեխաների ստեղծարար բնույթը՝ նրանց հնարավորություն տալով փորձեր կատարել ծրագրերի, ծրագրավորման և այլ տեխնոլոգիաների հետ, ամրապնդվում է ինքնավստահությունը և օգնում աշակերտներին սովորել «փորձի և սխալի» արդյունքում ստացված դասերը: Ժամանակակից դպրոցական միջավայրի առանձին պահանջներից մեկն է կենտրոնացումը մարդու և նրա գործունեության վրա, այսինքն՝ «միջավայրը պետք է համապատասխանի և հարմարավետ լինի մարդու համար, այլ ոչ թե մարդը՝ միջավայրի»:

Դպրոցների արդյունավետ ձևավորումը ներառում է տարրերի ինտեգրում, որոնք աջակցում են աշակերտների ուսումնառությանը և բարեկեցությանը: Դրանք ներառում են.

1. Ճկուն ուսումնական տարածքներ. ուսումնական տարածքների վերափոխման և փոփոխականության հնարավորությունը, որոնք կարող են հեշտությամբ հարմարվել ուսուցման տարբեր ոճերին, կարող են աջակցել աշակերտների ներգրավվածությանը, համագործակցությանը և ստեղծարարությանը:
2. Տեխնոլոգիաների ինտեգրում. դասասենյակներում տեխնոլոգիաների ինտեգրումը կարող է ուժեղացնել ուսանողների ուսուցումը՝ ապահովելով մուլտիմեդիական ռեսուրսներ, առցանց հետազոտական գործիքներ, ինտերակտիվ ուսուցման, ինչպես նաև հանգստի հարթակների հասանելիություն:
3. Միջավայրային հարմարավետություն և անվտանգություն. դպրոցների միջավայրը պետք է կազմակերպվի էկոլոգիապես մաքուր նյութերի օգտագործմամբ, համապատասխան էրգոնոմիկ պահանջների՝ ստեղծելով առողջ ուսումնական միջավայր:

4. Ներառական ձևավորում. ներառական տարածքների ստեղծում, որոնք հասանելի են բոլոր աշակերտներին, ներառյալ հաշմանդամություն կամ հատուկ կարիքներ ունեցողների պահանջները:
5. Գեղագիտական որակական չափանիշների ապահովում. նախագծվում են ավելի շատ միջառարկայական տարածքներ՝ ազատ հատակագծման սկզբունքով նախագծված տարածքներ, ավելի հստակ տեսանելիություն և բարելավված ակուստիկա ապահովելու համար: Ներառվում են ճկուն միջնապատեր՝ ավելի շատ բնական լույս, հեշտությամբ շարժվող կահույք և, իհարկե, ներդաշնակ գույների համադրություններ հաճելի հյուսվածքներով նյութերի հետ:

Արդյունավետ դպրոցների ռենովացիայի նախագիծ ստեղծելու համար ուսումնասիրվել և վերլուծություն է ստացել համաշխարհային լավագույն փորձը, առաջադրվել են ժամանակակից կրթական միջավայրերի նախագծման նախադրյալները, պահանջները: Իրականացվել է կարիքների և պահանջների գնահատում՝ պարզելու աշակերտների կրթական և ֆիզիկական կարիքները: Ուսումնասիրությունը ներկայացնում է տեսական հիմք, հստակ դիզայն առաջարկություններ և կարող է կիրառվել համապատասխան ոլորտում:

Գրականության ցանկ

- [1] **Է.Ա. Տիգրանյան**, Հասարակական շենքերի և կառուցվածքների ճարտարապետական նախագծման հիմունքներ, «Լույս», Երևան, 1989, 390 էջ:
- [2] ԿԳՄՍ նախարարության կողմից մշակված և դպրոցաշինության մեջ շրջանառվող «Դպրոցի ձևավորման և հարդարման մեթոդական ուղեցույց» փաստաթղթային համակազմ:
- [3] **А.Г. Григорян, М.Л. Товмасын**, Архитектура Советской Армении, Стройиздат, Москва, 1986, 320 с.
- [4] **В.Ф. Рунге, Ю.П. Манусевич**, Эргономика в дизайне среды, «Архитектура-С», Москва, 2005, 328 с.
- [5] **А.Л.Гельфонд**, Архитектурное проектирование общественных зданий и сооружений, «Архитектура-С», Москва, 2006, 280 с.
- [6] **В.И. Степанов, Л.Б. Мирчевская**, Конкурсные проекты школьных зданий, Стройиздат, Москва, 1979, 55 с.
- [7] Рекомендации по реконструкции и модернизации существующего фонда школьных зданий в соответствии с современными педагогическими требованиями, Правительство Москвы, Москомархитектура, 1997.
- [8] **S. Kramer**, Building to educate, School architecture and Design Braun Publishing, 176 p.
- [9] https://www.archdaily.com/995050/renovation-of-the-primary-school-affiliated-to-longjiang-foreign-language-school-atelier-cns?ad_source=search&ad_medium=projects_tab <https://science-education.ru/ru/article/view?id=29484>
- [10] <https://www.archdaily.com/1006091/pony-school-l-and-m-design-lab>
- [11] <https://www.behance.net/gallery/125991325/NEW-BUILDING-TERRITORY-RENOVATION-OF-SCHOOL-86>
- [12] <https://nauka-pedagogika.com/pedagogika-13-00-01/dissertaciya-proektirovanie-obrazovatel'nogo-protsesta-v-shkole>
- [13] <https://bvzd.ru/vopros/modulnaya-shkola-vozvedenie-i-ekspluataciya-zdaniy>

КОНЦЕПТУАЛЬНЫЙ ДИЗАЙН-ПРОЕКТ РЕНОВАЦИОННЫХ МОДУЛЕЙ ДЛЯ ОРГАНИЗАЦИИ ИНТЕРЬЕРА СРЕДНИХ ОБЩЕОБРАЗОВАТЕЛЬНЫХ УЧРЕЖДЕНИЙ

Анаит Хачатуровна Петросян*, Арсен Владимирович Мкртчян,

Анаит Вагеевна Киракосян, Карен Арсенович Меликян

Национальный университет архитектуры и строительства Армении, Ереван, РА

**an_arch@mail.ru*

Представлены действующие в РА школы, а также возможности и предпосылки для организации интерактивного образования в соответствии с современными требованиями, с обновленными модулями. Цель и задачи – изучить состав и выявить связи, вытекающие из содержания составляющих элементов, на основе типологического анализа международного опыта образовательных учреждений и школ, действующих в Армении. Рассмотрены конструкция мобильной среды, особенности конструкции, материал, основные принципы проектирования и мотивы использования в образовательном процессе. Изучался метод проектирования среды, сочетая его с предметными особенностями и проблемами, выдвигая на первый план пользу использования интерактивных объемов с целью обучения, наиболее подходящего движения. Создаются благоприятные предпосылки для формирования многопрофильной образовательной среды, привлечения различных занятий на уроках и внедрения разных форм проведения урока параллельно. Представлена гибкая, трансформируемая, комфортная образовательная среда, отвечающая эстетическим стандартам качества и эргономическим требованиям. Представлены интерактивные инновационные образовательные модули, расположенные в образцовых учебных заведениях советского периода, которые применимы для продвижения современного образования в реконструируемых школах РА.

Ключевые слова: *общеобразовательная школа, ремонт, интерактивная трансформируемая среда, инновационные образовательные модули, современное образование*

RENOVATION MODULES FOR ORGANIZING THE INTERIOR OF SECONDARY EDUCATIONAL INSTITUTIONS

Anahit Petrosyan, Arsen Mkrtchyan, Anahit Kirakosyan, Karen Meliqyan

National University Of Architecture And Construction Of Armenia, Yerevan, RA

an_arch@mail.ru

The schools operating in the RA are presented, as well as the possibilities and prerequisites for organizing interactive education in accordance with modern requirements, with updated modules. The goal and objectives are to study the composition and identify the connections arising from the content of the constituent elements, based on the typological analysis of the international experience of educational institutions and schools operating in Armenia. The design of the mobile environment, design features, material, basic design principles and motives for use in the educational process are considered. The method of designing the environment was studied, combining it with subject features and problems, highlighting the benefits of using interactive volumes for the purpose of learning, the most appropriate movement. Favorable prerequisites are created for the formation of a multidisciplinary educational environment, attracting various activities in

the classroom and introducing different forms of conducting a lesson in parallel. A flexible, transformable, comfortable educational environment is presented that meets aesthetic quality standards and ergonomic requirements. Interactive innovative educational modules are presented, located in exemplary educational institutions of the Soviet period, which are applicable for promoting modern education in reconstructed schools of the RA.

Keywords: general education school, renovation, interactive transformable environment, innovative educational modules, modern education

Պետրոսյան Անահիտ Խաչատուրի, Ճ.թ., դոցենտ (ՀՀ, ք. Երևան) - ՃՇՀԱՀ, Ինտերիերի և էքստերիերի դիզայնի ամբիոն, (+374)93357849, an_arch@mail.ru, **Մկրտչյան Արսեն Վլադիմիրի, Ճ.թ.** (ՀՀ, ք. Երևան) - ՃՇՀԱՀ, Ինտերիերի և էքստերիերի դիզայնի ամբիոն, ասիստենտ, (+374)98984543, mk-ars@mail.ru, **Կիրակոսյան Անահիտ Վահեի** (ՀՀ, ք. Երևան) - ՃՇՀԱՀ, Ինտերիերի և էքստերիերի դիզայնի ամբիոն, մագիստրանտ, (+374)91274689, anahit.kirakosyan00@gmail.com, **Մելիքյան Կարեն Արսենի, Ճ.թ.** (ՀՀ, ք. Երևան) - ՃՇՀԱՀ, Ինտերիերի և էքստերիերի դիզայնի ամբիոն, ասիստենտ, (+374)91221136, karenmelikian@mail.ru

Петросян Анаит Хачатуровна, канд.архит., доцент (РА, г. Ереван) - НУАСА, кафедра Дизайна интерьера и экстерьера, (+374)93357849, an_arch@mail.ru, **Мкртчян Арсен Владимирович, канд.архит.** (РА, г. Ереван) – НУАСА, кафедра Дизайна интерьера и экстерьера, ассистент, (+374) 98984543, mk-ars@mail.ru, **Киракосян Анаит Вагеевна** (РА, г. Ереван) - НУАСА, кафедра Дизайна интерьера и экстерьера, магистрант, (+374)91274689, anahit.kirakosyan00@gmail.com, **Меликян Карен Арсенович, канд.архит.** (РА, г. Ереван) – НУАСА, кафедра Дизайна интерьера и экстерьера, ассистент, (+374)91221136, karenmelikian@mail.ru

Petrosyan Anahit, (Ph.D) in Architecture, Associate Professor (RA, Yerevan) – NUACA, department of Design Interior and Exterior, (+374)93357849, an_arch@mail.ru, **Mkrtychyan Arsen, (Ph.D) in Architecture** (RA, Yerevan) – NUACA, department of Design Interior and Exterior, assistant, (+374)98984543, mk-ars@mail.ru, **Kirakosyan Anahit** (RA, Yerevan)–NUACA, department of Design Interior and Exterior, master student, (+374)91274689, anahit.kirakosyan00@gmail.com, **Melikian Karen, (Ph.D) in Architecture** (RA, Yerevan) – NUACA, department of Design Interior and Exterior, assistant, (+374)91221136, karenmelikian@mail.ru

Ներկայացվել է՝ 05.05.2025թ.

Գրախոսվել է՝ 17.06.2025թ.

Ընդունվել է տպագրության՝ 29.08.2025թ.

DOI: <https://doi.org/10.54338/18294200-2025.2-13>**ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ****ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԻ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ****Ռոբերտ Գրենիկի Պետրոսյան, Սիրանուշ Արամայիսի Գալստյան*,****Գայանե Գաբիկի Հովհաննիսյան***Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք. Երևան, ՀՀ***galstyansiranush@nuaca.am*

Շինարարությունը հանդիսանում է ՀՀ տնտեսության ռազմավարական ճյուղերից, որն ակտիվորեն զարգանում է վերջին տասնամյակում: Շուկայում մրցակցության աճը խթանում է շինարարական կազմակերպություններին առավել արդյունավետ օգտագործել իրենց ֆինանսական ռեսուրսները: Հողվածի նպատակն է գնահատել շինարարական արդյունաբերության կազմակերպության ֆինանսական կայունությունը ֆինանսական գործակիցների կիրառման միջոցով՝ հիմնվելով ֆինանսական հաշվետվությունների վերլուծության վրա: Որպես հետազոտության առարկա ուսումնասիրվել է «ԱՐՇԻՆ» ՍՊԸ-ի 2020-2024 թթ. ֆինանսական գործունեությունը: Վերլուծության հիմքում ընկած են վիճակագրական, համեմատական և գործակիցների վերլուծությունների մեթոդները: Արդյունքները վկայում են կազմակերպության բավարար իրացվելիության պահպանման, ինչպես նաև շահութաբերության և ակտիվների շրջանառության նվազման միտումների մասին: Հետազոտությունն ընդգծում է ֆինանսական կառավարման ռազմավարության բարելավման անհրաժեշտությունը՝ կազմակերպության ներդրումային գրավչության բարձրացման նպատակով:

Բանալի բառեր. ֆինանսական գործակիցներ, շինարարական արդյունաբերություն, ֆինանսական վերլուծություն, ֆինանսական հաշվետվություն

Ներածություն

Շինարարական ոլորտում ֆինանսական վերլուծությունն ունի առանցքային նշանակություն, կապված բարձր կապիտալիզացման, ակտիվների ցածր շրջանառության և շահույթի դանդաղ գեներացման առանձնահատկությունների հետ: Տնտեսական կայունության ապահովման և ռազմավարական որոշումների հիմնավորման նպատակով գործնականում կիրառվում են ֆինանսական գործակիցների համակարգային վերլուծություններ, որոնք համարվում են կառուցակարգված մոտեցումներ՝ կազմակերպության գործունեության գնահատման համար:

Ֆինանսական գործակիցների վերլուծությունը հնարավորություն է տալիս ստանդարտացնել հաշվապահական հաշվետվությունների տվյալները, բացահայտել ընկերության կայունության, շահութաբերության, վճարունակության և ակտիվների օգտագործման արդյունավետության մակարդակը:

Այս մոտեցումը նվազեցնում է տվյալների սխալ մեկնաբանման հավանականությունը՝ ի տարբերություն առանձին թվաբանական ցուցանիշների վերլուծության: Գործակիցների համապարփակ վերլուծությունը ոչ միայն օգնում է հասկանալ ընկերության ներկայիս ֆինանսական վիճակը, այլ նաև կանխատեսել զարգացման հնարավոր ուղղությունները շուկայում մրցունակ մնալու նպատակով [1]:

Բացի այդ, պետք է շեշտել, որ շինարարական ընկերությունների գնահատման համար առավել նպատակահարմար է օգտագործել վերլուծական մոդելներ: Նման համալիր մոդելների կիրառումը թույլ է տալիս վեր հանել շինարարական բիզնեսի թաքնված ֆինանսական ռիսկերը և բարելավել ռեսուրսների բաշխման արդյունավետությունը [2]:

Այս առումով անհրաժեշտ է խորությամբ վերլուծել այն գործակիցների ամբողջությունը, որոնք առավել կիրառելի են շինարարական արդյունաբերության կազմակերպությունների համար, և դրանով իսկ նպաստել ֆինանսական կայունության գնահատման մեթոդների զարգացմանը:

Նյութեր և մեթոդներ

Ֆինանսական գործակիցները հարաբերական ցուցանիշներ են, որոնք բնութագրում են կազմակերպության ֆինանսական վիճակի տարբեր ասպեկտներ, որոնք հաշվարկվում են որպես ֆինանսական հաշվետվությունների և ֆինանսական հաշվառման ցուցանիշների հարաբերակցություն:

Մշակվել են ավելի քան 100 նման գործակիցներ, սակայն դրանցից շատերը լրացնում կամ պարզաբանում են միմյանց, փոխկապակցված են և ունեն տարբեր անուններ, բայց հաշվարկվում են նույն մեթոդով և հակառակը՝ ունեն նույն անունները, սակայն հաշվում են տարբեր մեթոդներով:

Ֆինանսական վերլուծություն կատարելիս ֆինանսական գործակիցների կարևորությունը մեծ է, քանի որ թույլ են տալիս՝

- ֆինանսական գործակիցների արժեքների դինամիկան վերլուծելիս բացահայտել կազմակերպության զարգացման միտումները,
- բացահայտել ֆինանսական ռիսկերի սնանկության հավանականության բարձր աստիճան ունեցող կազմակերպություններին, որոշել կազմակերպության ուժեղ և թույլ կողմերը,
- տարբեր կազմակերպությունների ֆինանսական գործակիցների ցուցանիշների համեմատության միջոցով ներդրում կատարել առավել գրավիչ ցուցանիշներ ունեցող կազմակերպությունում,
- կանխատեսել կազմակերպության ֆինանսական արդյունքները և ֆինանսական վիճակը [3]:

Ֆինանսական գործակիցները կազմակերպության ֆինանսական կայունությունը գնահատելու լավագույն միջոցն են, որոնք կազմակերպության մասին տեղեկատվությունն օգտագործո-

դին պատկերացում են տալիս կազմակերպության իրացվելիության, վճարունակության, շահութաբերության և արդյունավետության մասին: Ֆինանսական գործակիցներն արտացոլում են ընկերության ֆինանսական գործունեության արդյունքները և հաշվարկվում են ֆինանսական հաշվետվությունների տվյալների հիման վրա: Աղբյուրները կարող են լինել հաշվեկշիռը, շահույթի և վնասի մասին հաշվետվությունը, չբաշխված շահույթի մասին հաշվետվությունը, դրամական հոսքերի մասին հաշվետվությունը: Դրանք հակադրվում են մակրոտնտեսական ցուցանիշներին, որոնք բնութագրում են ողջ ազգային տնտեսության վիճակն ու զարգացումը:

Ֆինանսական գործակիցներն ունեն որոշակի առավելություններ, որոնցից առաջինը դրանց լայն տարածվածությունն է, որը պայմանավորված է դրանց հաշվարկման պարզությամբ: Մյուս առավելությունն այն է, որ ստանում ենք հարաբերական արժեքներ և որոնք կարող ենք համեմատել ոչ միայն տվյալ ընկերության, այլև ցանկացած այլ ընկերության նույն գործակիցների խմբի ցուցանիշների հետ համեմատության համար:

Հաշվարկելով ֆինանսական գործակիցները՝ կազմակերպության վարչական անձնակազմը ստանում է կազմակերպության ֆինանսական վիճակի մասին օբյեկտիվ գնահատական անցյալում, ներկայում և կանխատեսվող ապագայում, որը հնարավորություն է տալիս պատկերացում կազմել թույլ կողմերի, առկա խնդիրների և հնարավոր աճի մասին:

Կան ընդհանուր ֆինանսական գործակիցներ, սակայն դրանք ստանդարտացված և միանշանակ չեն, ինչպես և միանշանակ չեն դրանց հաշվարկման ալգորիթմները և ստացված ցուցանիշները [4, 5]:

Ֆինանսական գործակիցները դասակարգվում են հինգ հիմնական կատեգորիաներով՝

Իրացվելիության գործակիցները գնահատում են ընկերության ընթացիկ պարտավորություններն ակտիվներով մարելու կարողությունը: Բարձր ցուցանիշները վկայում են արագ մարման և վճարունակության, իսկ ցածր ցուցանիշները՝ ֆինանսական խնդիրների հնարավորության մասին են:

Գործարար ակտիվության գործակիցները գնահատում են, թե որքան արագ է կազմակերպությունը շրջանառում իր ակտիվները և եկամուտները գներացնելու համար:

Շահութաբերության գործակիցները գնահատում են կազմակերպության շահութաբերությունը և գնահատում դրա կատարողականը և ֆինանսական կայունությունը:

Վճարունակության կամ կապիտալի կառուցվածքի գործակիցները չափում են կազմակերպության ֆինանսական հզորությունը և երկարաժամկետ պարտավորությունները մարելու կարողությունը [6]:

Շինարարությունը ՀՀ տնտեսության առաջատար ճյուղերից է: Այն մշտապես զարգացում է ապրում: Շուկայի մրցակիցները ստեղծում են անզիջում մրցակցային պայմաններ և նման պայմաններում առավել կարևոր է ֆինանսական վիճակի վերլուծության արդյունքները՝ սնանկությունից խուսափելու համար:

Կազմակերպության ֆինանսական արդյունքների վերլուծության հիմնական նպատակներն են գնահատել շահույթի ցուցանիշների դինամիկան, դրանց փաստացի արժեքի ձևավորման և բաշխման վավերականությունը, շահույթի վրա գործոնների ազդեցության վերլուծությունը, արտադրության օպտիմալացման հիման վրա հետագա շահույթի աճի պահուստների հայտնաբերումը, արտադրանքի ծավալները և ինքնարժեքը:

Կազմակերպության ֆինանսական վիճակը բնութագրվում է միջոցների (ակտիվների) և դրանց գոյացման աղբյուրների (պարտավորությունների) տեղաբաշխմամբ և օգտագործմամբ՝ կազմակերպության հաշվեկշիռից ստացված տեղեկատվության հիման վրա [7, 8]:

Շինարարական արդյունաբերության կազմակերպության ֆինանսական վիճակի վերլուծության հիմնական խնդիրները ներառում են՝

- վճարունակության ցուցանիշների հաշվարկը,
- ավարտված շինարարական աշխատանքների շահույթի և շահութաբերության ցուցանիշների հաշվարկը,
- սեփական շրջանառու միջոցների և դրանց առաջացման աղբյուրների հարաբերակցության հաշվարկը,
- շինարարական արդյունաբերության կազմակերպությանը պատկանող շրջանառու միջոցների առկայության և կառուցվածքի ուսումնասիրությունը:

Շինարարության մեջ ֆինանսական վերլուծությունը ցուցանիշների և դրանց գնահատման համակարգն է, որում արտացոլվում է շինարարական արդյունաբերության կազմակերպության ողջ գույքի (ակտիվների) առկայությունը, կառուցվածքը և դինամիկան, ֆինանսական կայունությունը, իրացվելիության և վճարունակության մակարդակը, ինչպես նաև պարզել տնտեսվարող սուբյեկտին հետաքրքրող այլ տնտեսական հարցեր՝ թույլ տալով ավելացնել արտադրության արդյունավետությունը:

Ֆինանսական վերլուծությունը թույլ է տալիս որոշել շինարարական արդյունաբերության կազմակերպության շրջանառու միջոցների պահանջվող չափը, ֆինանսական արդյունքները (շահույթ, վնաս), հաշվարկային և վճարման կարգապահությունը: Ֆինանսական վերլուծության խնդիրները հանգում են հետևյալին՝

- ֆինանսական արդյունքների՝ շահույթի և շահութաբերության մակարդակի պլանների իրականացման որոշումը.
- սեփական շրջանառու միջոցների առկայության և ծավալի սահմանում և դրանց ծածկույթի աղբյուրների բացահայտում՝ փոփոխությունների վրա ազդող գործոնների սահմանում.
- սուբյեկտին շրջանառու միջոցներով տրամադրման և դրանց օգտագործման ուղղությունների բացահայտում և որոշում.
- կապալառուների և հաճախորդների հետ հաշվարկային գործարքների ճշգրտության և ժամանակի սահմանում.

- մատակարարների, այլ պարտապանների և պարտատերերի հետ կնքված պայմանագրերով դրամական միջոցների փոխանցումների՝ հաշվարկների ճշտություն և խնդիրների ժամանակին ուսումնասիրություն.
- նպատակային ֆինանսավորման և նպատակային եկամուտների համար նախատեսված հատուկ հիմնախնդիրների և միջոցների ստեղծման և օգտագործման ճշտության հարցերի քննարկում.
- ստանդարտացված և առկա ամբողջ շրջանառու միջոցների շրջանառության հաստատման հետ կապված հարցերի լուծում.
- շրջանառության արագացման ուղիների բացահայտում և այլն [3, 9]:

Շինարարական արդյունաբերության կազմակերպության ֆինանսական վիճակը հետաքրքրում է արտաքին օգտագործողներին՝ կապալառուներին, պարտատերերին, մատակարարներին և այլ բիզնես գործընկերներին և ներքին օգտագործողներին՝ բաժնետերերին և ֆոնդերի սեփականատերերին:

Ներքին օգտագործողները բացահայտում են արտադրության և տնտեսական գործունեության գործունեության ազդեցությունը ֆինանսական վիճակի վրա:

Ֆինանսական վերլուծության ոլորտները հետևյալ են.

- կազմակերպության ֆինանսական վիճակի վերլուծություն,
- կազմակերպության ֆինանսական արդյունքի վերլուծություն,
- կազմակերպության ձեռնարկատիրական գործունեության և արդյունավետության վերլուծություն,
- ձեռնարկության ֆինանսական գործունեության համապարփակ վերլուծություն և գնահատում:

Վերլուծական ուսումնասիրությունների ընթացակարգը հետևյալն է՝

- սահմանվում են խնդիրների բնութագրող ցուցանիշները,
- բացահայտվում են վերլուծության համար անհրաժեշտ տեղեկատվության ընտրությունը և ստուգումը,
- իրականացվում է տեղեկատվության վերլուծական մշակում և ցուցիչների միջև գործունային կապ է հաստատվում,
- հայտնաբերվում են պաշարները, միջոցառումներ են նախապատրաստվում վիճակը բարելավելու համար,
- վերլուծության արդյունքներն ամփոփվում են և ներկայացվում են բացատրական գրության տեսքով՝ հաշվարկներով [8, 10]:

Ֆինանսական գործակիցների վերլուծությունը լայն կիրառություն ունի շինարարության ոլորտում, քանի որ տրամադրում է արժեքավոր պատկերացումներ և օժանդակում է որոշումների կայացմանը՝ ստորև ներկայացված եղանակներով:

Ֆինանսական կատարողականի գնահատում: Հարաբերակցության վերլուծությունն օգնում է շահագրգիռ կողմերին գնահատել կազմակերպության ֆինանսական ցուցանիշները ժամանակի ընթացքում և արդյունաբերության չափանիշներին համապատասխան:

Օրագրի իրագործելիության վերլուծություն: Օգտագործելով ֆինանսական գործակիցները՝ կազմակերպությունները կարող են գնահատել շինարարական նախագծերի ֆինանսական իրագործելիությունը և հնարավոր շահութաբերությունը, նախքան դրանք ձեռնարկելը:

Ներդրողների վստահություն: Հուսալի ֆինանսական գործակիցները վստահություն են ներշնչում ներդրողների և շահագրգիռ կողմերի մեջ՝ աջակցելով դրամական միջոցների ներգրավմանը և գործարար գործունեությանը:

Ռիսկերի կառավարում: Ֆինանսական գործակիցներն օգնում են բացահայտել հնարավոր ֆինանսական ռիսկերն ու խոցելիությունը՝ թույլ տալով կազմակերպություններին մշակել ռիսկերի նվազեցման ռազմավարություն:

Բյուջետավորում և ֆինանսական պլանավորում: Հարաբերակցության վերլուծությունն օգնում է սահմանել իրատեսական ֆինանսական նպատակներ և մշակել ճշգրիտ բյուջեներ շինարարական նախագծերի համար:

Ռեսուրսների բաշխում: Ֆինանսական գործակիցների ըմբռնումն օգնում է ռեսուրսների արդյունավետ բաշխմանը և կապիտալի օգտագործման օպտիմալացմանը:

Համեմատություն մրցակիցների հետ: Կազմակերպությունները կարող են համեմատել իրենց ֆինանսական ցուցանիշներն արդյունաբերության մյուս կազմակերպությունների հետ՝ օգտագործելով ֆինանսական գործակիցները՝ պարզելու մրցակցային առավելությունները կամ բարելավման ուղիները:

Գործառնական արդյունավետություն: Վերլուծելով ֆինանսական գործակիցները՝ կազմակերպությունները կարող են բացահայտել ոլորտները, որտեղ գործառնական արդյունավետությունը կարող է բարելավվել՝ ծախսերը նվազեցնելու և շահութաբերությունը բարձրացնելու համար:

Վարկունակության գնահատում: Վարկատուները և պարտատերերը օգտագործում են ֆինանսական գործակիցները՝ գնահատելու կազմակերպության վարկունակությունը և որոշելու վարկավորման պայմանները:

Երկարաժամկետ պլանավորում: Ֆինանսական գործակիցներն օգնում են շինարարական արդյունաբերության կազմակերպությունների ռազմավարական երկարաժամկետ պլանավորմանը և նպատակների սահմանմանը:

Ֆինանսական հաշվետվությունները վերլուծելիս օգտագործվում են ստորև ներկայացված գործակիցները:

Ընթացիկ իրացվելիության գործակիցը կազմակերպության վճարունակության, կազմակերպության ընթացիկ (մինչև մեկ տարի) պարտավորությունները մարելու ունակության չափանիշն է: Հաշվարկելիս որպես իրացվելի միջոցներ են ընդունվում միայն կանխիկ դրամը, ինչպես նաև

արժեքները, որոնք կարող են վաճառվել ֆոնդային բորսայում, իսկ հայտարարում կարճաժամկետ պարտավորությունները ցույց են տալիս, թե կարճաժամկետ պարտքի որ մասը կարող է մարել կազմակերպությունը մոտ ապագայում՝ օգտագործելով կանխիկ և կարճաժամկետ ներդրումները (1).

$$\text{Ընթացիկ իրացվելիություն} = \frac{\text{Պրամական միջոցներ}}{\text{Կարճաժամկետ պարտավորություններ}} : \quad (1)$$

Կարճաժամկետ իրացվելիության գործակիցը ցույց է տալիս կազմակերպության առավել իրացվելի ակտիվների՝ դրամական միջոցների և կարճաժամկետ ֆինանսական ներդրումների հարաբերակցությունը կարճաժամկետ պարտավորություններին (2): Հարաբերակցությունը արտացոլում է ընթացիկ պարտավորությունների արագ մարման համար առավել իրացվելի ակտիվների բավարարությունը և կազմակերպության «ակնթարթային» վճարունակությունը.

$$\text{Կարճաժամկետ իրացվելիություն} = \frac{\text{Բարձր իրացվելի շրջանառու միջոցներ}}{\text{Կարճաժամկետ պարտավորություններ}} : \quad (2)$$

Ընդհանուր իրացվելիության գործակիցը ցույց է տալիս կազմակերպության կարճաժամկետ պարտավորությունները մարելու ունակությունը (3): Շրջանառու միջոցները պաշարների ինքնարժեքն է, որոնք անհրաժեշտության դեպքում կարող են վերածվել կանխիկի և ցույց են տալիս թե վարկերի և ընթացիկ այլ պարտավորությունների որ մասը կարող է մարվել ողջ շրջանառու միջոցների օպտիմալացման միջոցով.

$$\text{Ընդհանուր իրացվելիություն} = \frac{\text{Շրջանառու միջոցներ}}{\text{Կարճաժամկետ պարտավորություններ}} : \quad (3)$$

Մաքուր շրջանառու կապիտալը ցույց է տալիս թե ինչպիսին է մնացորդը կազմակերպության առավել իրացվելի ակտիվների և պարտավորությունների միջև, որոնք պետք է մարվեն մոտ ապագայում (4) [11]:

Մաքուր շրջանառու կապիտալ = Շրջանառու ակտիվներ - Կարճաժամկետ պարտավորություններ: (4)

Ակտիվների շրջանառության գործակիցը ցույց է տալիս կազմակերպության կողմից առկա ակտիվների ամբողջ ծավալի օգտագործման ինտենսիվության ցուցանիշը, որն օգտագործվում է կազմակերպության գույքի և պարտավորությունների կառավարման արդյունավետությունը վերլուծելու համար (5).

$$\text{Ակտիվների շրջանառություն} = \frac{\text{Արտադրանքի իրացումից առաջացած եկամուտներ}}{\text{Հաշվեկշռի հանրագումար}} : \quad (5)$$

Դեբիտորական պարտքի (ԴՊ) շրջանառության գործակիցը չափում է կազմակերպության մեկ միավոր դեբիտորական պարտքին բաժին ընկնող արտադրանքի իրացումից առաջացած եկամուտի չափը և ցույց է տալիս, թե որքան արագ են կազմակերպության դեբիտորները վճարում իրենց դեբիտորական պարտքերը (6).

$$\text{ԴՊ շրջանառություն} = \frac{\text{Արտադրանքի իրացումից առաջացած եկամուտներ}}{\text{ԴՊ տարեկան ցուցանիշ}} : \quad (6)$$

Կրեդիտորական պարտքի (ԿՊ) շրջանառության գործակցի ցուցանիշը չափում է իրացվող արտադրանքի ինքնարժեքին բաժին ընկնող կրեդիտորական պարտքի չափը տվյալ ժամանակաշրջանում և ցույց է տալիս, թե կազմակերպությունը քանի անգամ է մարել իր կրեդիտորական պարտքերի միջին գումարը (7).

$$\text{ԿՊ շրջանառություն} = \frac{\text{Իրացված արտադրանքի ինքնարժեք}}{\text{ԿՊ տարեկան ցուցանիշ}} : \quad (7)$$

Նյութական պաշարների շրջանառության գործակցը չափում է մեկ միավոր պաշարին բաժին ընկնող իրացված արտադրանքի ինքնարժեքի չափը և ցույց է տալիս, թե վերլուծված ժամանակահատվածում քանի անգամ է կազմակերպությունն օգտագործել պաշարի միջին հասանելի մնացորդը (8): Ցուցանիշը բնութագրում է նաև պաշարի որակը և դրա կառավարման արդյունավետությունը.

$$\text{Նյութական պաշարների շրջանառություն} = \frac{\text{Իրացված արտադրանքի ինքնարժեք}}{\text{Նյութական պաշարների տարեկան ցուցանիշ}} : \quad (8)$$

Շրջանառության տևողությունը միջոցների շրջանառության ժամանակահատվածն է, դրանց համար անհրաժեշտ ռեսուրսների ձեռքբերումից մինչև պատրաստի արտադրանքի վաճառք և դրանց իրացումից եկամուտի ստացման պահը (9): Այն արտացոլում է կազմակերպության շրջանառու միջոցների կառավարման արդյունավետությունը.

$$\text{Շրջանառության տևողություն} = \text{Ապրանքի արտադրություն} + \text{Իրացում} + \text{Վճարում} : \quad (9)$$

Ընդհանուր ակտիվների շահութաբերության գործակցը բնութագրում է կազմակերպության ակտիվների շահութաբերությունը, որը ցույց է տալիս կազմակերպության կարողությունը շահույթ ստեղծելու՝ առանց կապիտալի կառուցվածքը հաշվի առնելու (10): Ի տարբերություն սեփական կապիտալի շահութաբերության գործակցի ցուցանիշի, այն հաշվի է առնում կազմակերպության բոլոր ակտիվները և ոչ միայն սեփական կապիտալը, հետևաբար այն ներդրողների համար այնքան էլ հետաքրքիր չէ [12].

$$\text{Ընդհանուր ակտիվների շրջանառություն} = \frac{\text{Մաքուր շահույթ}}{\text{Ակտիվների տարեկան ցուցանիշ}} : \quad (10)$$

Իրացման շահութաբերության գործակցը կազմակերպության ֆինանսական կատարողականի ցուցանիշն է, որը ցույց է տալիս, թե կազմակերպության եկամուտի որ մասն է կազմում շահույթը (11, 12): Միաժամանակ հաշվարկվում է որպես ֆինանսական արդյունք: Այս գործակցը ցույց է տալիս կազմակերպության գործունեությունը շահութաբեր է թե ոչ, սակայն չի պատասխանում այն հարցին, թե որքանով են շահութաբեր ներդրումներն այս կազմակերպությունում.

$$\text{Իրացման շահութաբերություն} = \frac{\text{Շահույթ}}{\text{Իրացված արտադրանքի ծավալ}} , \quad (11)$$

$$\text{Իրացման շահութաբերություն} = \frac{\text{Մաքուր շահույթ}}{\text{Իրացված արտադրանքի ծավալ}} : \quad (12)$$

Սեփական կապիտալի (ՍԿ) շահութաբերության գործակցը գուտ շահույթի ցուցանիշն է՝ համեմատած կազմակերպության սեփական կապիտալի հետ (13): Այն ցանկացած ներդրողի և բիզնեսի սեփականատիրոջ համար եկամտաբերության ամենակարևոր ֆինանսական ցուցա-

նիշն է, որը ցույց է տալիս, թե որքան արդյունավետ է օգտագործվել բիզնեսում ներդրված կապիտալը: Ի տարբերություն ընդհանուր ակտիվների շահութաբերության գործակցի ցուցանիշի, այս ցուցանիշը բնութագրում է կազմակերպության ոչ ամբողջ կապիտալի կամ ակտիվների օգտագործման արդյունավետությունը, այլ միայն դրա այն մասը, որը պատկանում է կազմակերպության սեփականատերերին:

$$\text{Սեփական կապիտալի շահութաբերություն} = \frac{\text{Մաքուր շահույթ}}{\text{ՄԳ տարեկան ցուցանիշ}} : \quad (13)$$

Սեփականության գործակիցը սեփական կապիտալի հարաբերությունն է կազմակերպության կապիտալի ընդհանուր գումարին, որը ցույց է տալիս, թե որքանով է կազմակերպությունն անկախ վարկատուներից (14): Որքան ցածր է այս գործակցի ցուցանիշը, այնքան կազմակերպությունը կախված է փոխառու միջոցներից:

$$\text{Սեփականության գործակից} = \frac{\text{Սեփական կապիտալ}}{\text{Ընդհանուր կապիտալ}} : \quad (14)$$

Փոխառության գործակիցը ցույց է տալիս, թե որքանով է կազմակերպությունն ապավինում պարտքին՝ իր ակտիվները ֆինանսավորելու համար (15): Որքան բարձր է ցուցանիշը, այնքան ավելի ռիսկային են կազմակերպությունում ներդրում կատարելու վտանգները, իսկ որքան ցածր է ցուցանիշը, այնքան ավելի անկախ է կազմակերպությունը և պակաս ռիսկային՝ ներդրումներ անելու համար:

$$\text{Փոխառության գործակից} = \frac{\text{Փոխառու կապիտալ}}{\text{Ընդհանուր կապիտալ}} : \quad (15)$$

Ֆինանսական կախվածության գործակիցը ցույց է տալիս, թե կազմակերպությունը որքանով է կախված արտաքին ֆինանսական աղբյուրներից (16): Որքան բարձր է ցուցանիշը, այնքան ավելի ռիսկային են կազմակերպությունում ներդրում կատարելու վտանգները, իսկ որքան ցածր է ցուցանիշը, այնքան ավելի անկախ է կազմակերպությունը և պակաս ռիսկային՝ ներդրումներ անելու համար [13]:

$$\text{Ֆինանսական կախվածություն} = \frac{\text{Փոխառու կապիտալ}}{\text{Սեփական կապիտալ}} : \quad (16)$$

Արդյունքներ և քննարկում

Ստորև ներկայացված աղյուսակում ամփոփված են «ԱՐՇԻՆ» ՍՊԸ-ի (ուսումնասիրվող կազմակերպություն) հիմնական ֆինանսական ցուցանիշները՝ 2020-2024 թթ. ժամանակահատվածի համար: Այս տվյալները հիմք են հանդիսացել կազմակերպության ֆինանսական վիճակի համապարփակ վերլուծության համար՝ ֆինանսական գործակիցների կիրառմամբ:

Շինարարության գործընթացը բնութագրվում է փուլային և ալիքաձև բնույթով, որն անմիջականորեն ազդում է ֆինանսական գործակիցների վրա: Քանի որ շինարարական աշխատանքները սկսվում են մեկ տարում, ավարտվում մեկ այլ տարում, իսկ իրացումն էլ հաճախ կատարվում է հաջորդ փուլում, ֆինանսական ցուցանիշները բնական կերպով տատանվում են: Ուստի տարբեր գործակիցների բարձր կամ ցածր մակարդակները պետք է դիտարկվեն տվյալ տարվա արտադրական ցիկլի համատեքստում:

Աղյուսակ

**«ԱՄՇԻՆ» ՍՊԸ-ի ֆինանսական կայունության գործակիցների դինամիկան
2020-2024 թթ. (տարվա վերջում)**

Հ/հ	Գործակցի անվանում	2020 թ.	2021թ.	2022 թ.	2023 թ.	2024 թ.
Իրացվելիության գործակիցներ						
1	Ընթացիկ իրացվելիություն	0,034	0,333	0,360	0,085	0,012
2	Կարճաժամկետ իրացվելիություն	0,503	0,397	0,388	0,117	0,059
3	Ընդհանուր իրացվելիություն	0,528	0,413	0,390	0,142	0,080
4	Մաքուր շրջանառու կապիտալ, դրամ	2 225 280 000	6 529 311 000	8 532 115 000	9 366 543 000	6 953 517 000
Գործարար ակտիվության գործակիցներ						
5	Ակտիվների շրջանառություն	0,011	0,476	0,076	0,020	0,010
6	Դեբիտորական պարտքի շրջանառություն	0,854	4,794	3,125	1,934	0,681
7	Կրեդիտորական պարտքի շրջանառություն	0,975	29,316	5,642	0,103	0,044
8	Նյութական պաշարների շրջանառություն	0,004	0,532	0,064	0,012	0,005
Ընդհանուր ակտիվների շահութաբերություն						
9	Ընդհանուր ակտիվների շահութաբերություն	0,030	0,050	0,001	0,054	0,0004
10	Իրացման շահութաբերություն	3,150	0,141	0,018	0,319	0,045
11	Սեփական կապիտալի շահութաբերություն	0,184	0,191	0,004	0,336	0,004
Վճարունակության կամ կապիտալի կառուցվածքի գործակիցներ						
12	Սեփականության գործակից	0,323	0,356	0,377	0,386	0,367
13	Փոխառու կապիտալի գործակից	0,677	0,644	0,623	0,614	0,633
14	Ֆինանսական կախվածություն	2,101	1,805	1,652	1,590	1,726

Իրացվելիության ցուցանիշներ

2020-2024 թթ. ընթացքում դիտվել է կազմակերպության իրացվելիության ցուցանիշների զգալի տատանում: Ընթացիկ, կարճաժամկետ և ընդհանուր իրացվելիության գործակիցներն ունեցել են նվազման միտում՝ համապատասխանաբար հասնելով 0,012, 0,059 և 0,080 ցուցանիշների: Չնայած այդ նվազմանը՝ բոլոր երեք գործակիցներն էլ մնացել են դրական սահմաններում, ինչը վկայում է այն մասին, որ կազմակերպությունը պահպանել է ընթացիկ պարտավորությունները մարելու նվազագույն կարողություն: Սա մասամբ պայմանավորված է ընթացիկ ակտիվների վերաբաշխմամբ և շինարարական փուլերի առանձնահատկությամբ:

Միևնույն ժամանակ, մաքուր շրջանառու կապիտալն արձանագրել է դրական աճ՝ 4,7 մլրդ ՀՀ դրամ, ինչը հնարավոր է պայմանավորված է ինչպես ընթացիկ ակտիվների ընդլայնմամբ, այնպես էլ ընթացիկ պարտավորությունների նվազմամբ: Այս միտումը գնահատվում է որպես կայունացման ազդակ՝ կազմակերպության կարճաժամկետ ֆինանսական քաղաքականության համատեքստում:

Գործարար ակտիվության ցուցանիշներ

Ակտիվների շրջանառության և նյութական պաշարների շրջանառության գործակիցները ժամանակաշրջանի ընթացքում ցուցադրել են անկումային միտում՝ համապատասխանաբար հասնելով 0,010 և -0,005 արժեքների: Նման տատանումները բացատրվում են շինարարական արտադրության փուլայնությամբ, ինչպես նաև մի քանի տարիների ընթացքում մեծածավալ ներդրումային ծրագրերի ընթացիկ փուլերում գտնվելով:

Դերիտորական պարտքի շրջանառության ցուցանիշի նվազումը՝ մինչև 0,681, մատնանշում է առևտրային պարտավորությունների դանդաղ մարում, ինչը բացասաբար կարող է ազդել դրամական հոսքերի հոսունության վրա: Միևնույն ժամանակ, կրեդիտորական պարտքի շրջանառության ցուցանիշի նվազումը (նույնիսկ բացասական արժեքով՝ -0,044) վկայում է, որ կազմակերպությունն իրականացրել է պարտավորությունների մարում՝ հնարավոր է՝ անգամ կանխավճարային մեխանիզմներով:

Շահութաբերության ցուցանիշներ

Ընդհանուր ակտիվների շահութաբերության գործակիցը, ինչպես նաև իրացման և սեփական կապիտալի շահութաբերության ցուցանիշները ողջ ժամանակաշրջանում նվազել են՝ հասնելով համապատասխանաբար 0,0004, 0,045 և 0,004 արժեքների: Նման անկումը վկայում է շահութաբերության մակարդակի համատարած թուլացման մասին: Շինարարական ոլորտի համար սա կարող է պայմանավորված լինել արտադրական ծախսերի աճով, շենքերի իրացման ժամկետների ձգձգմամբ կամ շուկայի գների տատանումներով:

Հատկանշական է, որ նվազման միտումն առավել սուր է արտահայտվել այն տարիներին, երբ շենքերի շահագործումը հետաձգվել է կամ իրացման ծավալները զգալիորեն նվազել են:

Կապիտալի կառուցվածքի ցուցանիշներ

Վերլուծության ընթացքում դիտվել է կապիտալի կառուցվածքի դրական վերաձևավորում: Սեփականության գործակիցն աճել է մինչև 0,367, իսկ փոխառության գործակիցը՝ նվազել մինչև 0,633: Այս միտումները վկայում են ֆինանսավորման ավելի կայուն կառուցվածքի ձևավորման մասին, երբ գերակշռում են կազմակերպության սեփական ռեսուրսները: Նույն տրամաբանությամբ նվազել է նաև ֆինանսական կախվածության գործակիցը՝ հասնելով 1,726, ինչը ցույց է տալիս արտաքին աղբյուրներից նվազած կախվածությունը և ներքին ֆինանսական ինքնաբավության բարձրացումը:

